COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

EG-S-GB (2004) RAP FIN

# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԽՄԲԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (EG-S-GB)

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Իրավահավասարության բաժին
Մարդու իրավունքների գլխավոր տնօրինություն

ORGANISATION INTERNATIONALE DE la francophonie

Ստրասբուրգ 2006 թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**1. Ի՞ՆՉ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ** ...... 7

**Ա.** Նախապատմություն ......... 7

**Բ.** Սահմանումը և շրջանակը ....................... 7

**Գ.** Նպատակները .................... 9

**Դ.** Նախապայմանները և սկզբունքները ................. 10

**2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ** ........... 13

**Ա.** Մասնակիցները ................. 13

**Բ.** Բյուջետային գործընթացի փուլերը .............................. 16

**Գ.** Գենդերային բյուջետավորման գործիքները և մեթոդները ...................... 17

**Դ.** Մարտահրավերները ......... 21

**Ե.** Գենդերային բյուջետավորման ծրագրերի գնահատում ........................ 21

**Զ.** Աղյուսակ. Գենդերային հեռանկարի արմատավորումը պետական բյուջեի գործընթացում ...... 23

**3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿ** ...... 26

**Ա.** Ինչու՞ է անհրաժեշտ գենդերային բյուջետավորումը ............. 26

**Բ.** Գենդերային բյուջետավորման ծրագրի նախաձեռնում .................. 27

**Գ.** Գենդերային բյուջետավորման ծրագրի պլանավորում ..................... 28

**Դ.** Գենդերային սկզբունքով գնահատում ....................... 29

**Ե.** Գենդերային տեսանելիությունը կառավարության բյուջետային առաջարկում. ակնկալվող արդյունքներ ... 30

**4. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ** ..... 31

***Հավելված I***
Գենդերային բյուջետավորման մասնագիտական խմբի անդամների ցուցակ (EG-S-GB) ........................... 43

***Հավելված II***
Գենդերային բյուջետավորման մասնագիտական խմբի ... 44

Տեխնիկական առաջադրանք (EG-S-GB) .......................... 44

***Հավելված III***
CDEG-ի անդամ երկրներին հղված հարցաթերթիկ ........ 45

***Հավելված IV***
Գրականության ցանկ ....... 49

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Եվրոպայի խորհուրդը քաղաքական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1949 թ. մայիսի 5-ին 10 Եվրոպական երկրների կողմից, նպատակ ունենալով նպաստելու անդամ երկրների միջև միասնության զարգացմանը: Ներկայումս նրա կազմում ընդգրկված են 46 Եվրոպական պետություններ[1]:

Կազմակերպության հիմնական նպատակներն են ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության հետագա զարգացումը, ինչպես նաև անդամ երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և իրավական մարտահրավերների հարցերում միասնական լուծումների մշակումը: 1989 թ. սկսած այն իր կազմում ընդգրկել է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը և աջակցել քաղաքական, իրավական և վարչարարական բարեփոխումների իրականացման և համախմբման հարցերում:

Եվրոպայի խորհրդի կենտրոնական գրասենյակը գտնվում է Ստրասբուրգում (Ֆրանսիա): Կազմակերպության կանոնադրության համաձայն այն կազմված է երկու հիմնադիր մարմիններից. Նախարարների կոմիտեից, որն ընդգրկում է 46 անդամ երկրների արտաքին գործերի նախարարներին և Խորհրդարանական ասամբլեայից, որտեղ ընդգրկված են 46 անդամ երկրների ազգային խորհրդարանների պատվիրակությունները: Եվրոպայի երկրների Տեղական և տարածքային մարմինների կոնգրեսը ներկայացնում է անդամ երկրների տեղական և տարածքային ինքնակառավարման մարմինները:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը դատական մարմին է, որն իրավասու է որոշումներ կայացնել երկրի հանդեպ անձանց, կազմակերպությունների կամ այդ երկրի հետ պայմանագիր կնքած այլ երկրների կողմից Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիայի հիման վրա ներկայացվող բողոքների շուրջ:

[1] Ալբանիա. Անդորա, Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բելգիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիխտենշտեյն, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Մոլդովա, Մոնակո, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Սերբիա և Չերնոգորիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Մակեդոնիա, Թուրքիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն:

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՈՒ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնարար մարդկային իրավունք համարվող կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության դիտարկումը հանդիսանում է Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEG) պարտականությունը: Կոմիտեի կազմում ընդգրկված փորձագետներին (մեկական յուրաքանչյուր անդամ երկրից) առաջադրանք է տրվել ազգային մակարդակով, ինչպես նաև Եվրախորհրդի ներքո ծավալել այնպիսի գործունեություն, որը թույլ կտա արդյունավետորեն պահովել իրավահավասարությունը կանանց և տղամարդկանց միջև: Այդ նպատակով CDEG-ն անց է կացնում վերլուծություններ, ուսումնասիրություններ և գնահատումներ, մշակում ռազմավարություններ և քաղաքական միջոցառումներ և, անհրաժեշտության դեպքում, կիրառում համապատասխան իրավական գործիքներ:

Կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության ուղղությամբ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել մեր ինտերնետային կայքը. ***http://www.coe.int/equality***
կամ դիմել մեզ հետևյալ հասցեով.

Իրավահավասարության բաժին Մարդկային իրավունքների գլխավոր տնօրինություն – DG II
Եվրոպայի խորհուրդ 67075 Ստրասբուրգ, ՍԵԴԵՔՍ Ֆրանսիա

***Էլեկտրոնային փոստ.***
dg2.equality@coe.int
Հեռախոս. +33 3 88 41 20 00
Ֆաքս. +33 3 88 41 27 05

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպայի խորհուրդը առանցքային դեր է խաղում անդամ երկրներում սեռերի իրավահավասարության զարգացման հարցում, մասնավորապես մշակելով ընդհանուր սկզբունքներ և նորմատիվներ, որոնք թույլ կտան ապահովել կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցությունը հասարարական կյանքում:

Մինչդեռ Եվրոպական երկրների մեծամասնությունում կանայք օրենքով իրավահավասարություն են ձեռք բերել և ունեն տղամարդկանց հետ հավասար իրավունքներ, այնուամենայնիվ շատ բնագավառներում կանայք դեռևս խտրականության են ենթարկվում: Իրավիճակը շտկելու նպատակով ընդունվել է խտրականությունն արգելող և հավասար վերաբերմունք խթանող օրենսդրություն, ինչպես նաև ստեղծվել են սեռերի միջև իրավահավասարություն սերմանող քաղաքական կառույցներ:

Չնայած այդ քայլերին սեռերի իրավական անհավասարությունը շարունակում է դրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում, ուստի ակնհայտ է դարձել, որ գենդերային իրավահավասարության նպատակին հասնելու համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ, ռազմավարություններ և մեթոդներ:

Գենդերային իրավահավասարության ռազմավարության գաղափարն առաջին անգամ ամրագրվեց միջազգային փաստաթղթերում 1985 թ. Նայրոբիում ՄԱԿ-ի կողմից կազմակերպված Կանանց հարցերով 3-րդ Համաշխարհային համաժողովից հետո, որտեղ քննարկման առարկա հանդիսացան զարգացման գործընթացում կանանց դերի հետ կապված խնդիրները: 1995 թ. Պեկինում անցկացված Կանանց հարցերով 4-րդ Համաշխարհային համաժողովի ժամանակ ընդունված Գործողությունների ծրագիրը կոչ է անում էլ ավելի զարգացնել գենդերային իրավահավասարության ռազմավարությունը, հռչակելով. *«կառավարություններն ու այլ դերակատարները պետք է խրախուսեն գենդերային իրավահավասարության հեռանկարի ակտիվ և տեսանելի քաղաքականությունը բոլոր իրականացվող ծրագրերում և քաղաքականություններում, որպեսզի մինչ որոշում կայացնելը վերլուծվի վերջինիս ազդեցությունն ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց վրա»*:

Դրանից հետո երկրների կողմից տեղական, տարածքային և ազգային մակարդակով քայլեր ձեռնարկվեցին գենդերային իրավահավասարության ապահովման ուղղությամբ: Միջազգային կազմակերպությունները՝ ՄԱԿ-ը, Եվրոպայի խորհուրդը, Եվրամիությունը և Հյուսիսային երկրների նախարարների խորհուրդը ակտիվ դեր են խաղացել տեղեկատվության տարածման, համաժողովների կազմակերպման և սեփական կառույցներում ռազմավարության ներդրման միջոցով:

1995 թ. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEG)[2] կազմում Եվրոպայի խորհուրդը կազմավորեց գենդերային իրավահավասարության ռազմավարության Մասնագիտական խումբը: 1998 թ.[3] հրապարակված Խմբի եզրափակիչ հաշվետվությունը ներառում է գենդերային իրավահավասարության ռազմավարության սահմանումը, նկարագրում է գենդերային իրավահավասարության ռազմավարության ակունքները և կապը կոնկրետ գենդերային քաղաքականության հետ: Դիտարկվում են գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման ժամանակ առաջացող հնարավոր խնդիրները և բացատրվում է ռազմավարության կարևորության պատճառները: Հաշվետվությունում թվարկված են իրավահավասարության ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները և բերվում են լավագույն միջազգային փորձի օրինակներ:

---

2 CDEG-ն միջկառավարական կոմիտե է, որը բաղկացած է Եվրախորհրդի 46 անդամ երկրների մեկական ներկայացուցչից:

3 Գենդերային իրավահավասարություն՝ գաղափարային շրջանակ, լավագույն միջազգային պրակտիկաների մեթոդաբանություն և ներկայացում: (Gender mainstreaming - Conceptual framework, methodology and presentation of good practices.) Մասնագիտական խմբի եզրափակիչ հաշվետվություն գենդերային իրավահավասարության վերաբերյալ (EG-S-MS) (EG-S-MS (98) 2 rev):

Գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումը սահմանվել է որպես.

> Գենդերային իրավահավասարության ռազմավարության արմատավորումը դա ռազմավարական գործընթացների (վերա)կազմակերպում, բարելավում, զարգացում և գնահատում է, որը միտված է ռազմավարության մասին որոշումներ կայացնող գործիչների կողմից սեռերի իրավահավասարության տեսլականի ամրագրմանը բոլոր ռազմավարություններում, մակարդակներում և փուլերում:

Հաշվետվության հրապարակումից հետո 1998 թ. հոկտեմբերին[4] Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն ընդունեց *Գենդերային իրավահավասարության առաջարկը*: Խորհուրդ է տրվում, որպեսզի իշխանությունները ամենուրեք տարածեն հաշվետվությունը և խրախուսեն նրա կիրառումը, որպես ռազմավարության իրականացման գործիք պետական և մասնավոր հատվածներում: Այն նաև ընդունեց *Եվրախորհրդի ղեկավար կոմիտեներին հղված ուղերձը* և կոչ արեց վերջիններիս յուրացնել CDEG հաշվետվության թեզերը և իրականացնել այդ ռազմավարությունն իրենց աշխատանքային ծրագրերում:

Գենդերային իրավահավասարությունը շարունակեց համարվել CDEG-ի և Եվրախորհրդի գերակա ուղղություններից մեկը, ուստի տարբեր մակարդակներում ձեռնարկվեցին քայլեր միտված այդ մոտեցման ինտեգրացմանը ղեկավար կոմիտեների ծրագրերում և հետագա կիրառմանը ազգային մակարդակով:

2001 թ. CDEG-ն 4 այլ ղեկավար կոմիտեների հետ համատեղ ձեռնարկեց փորձնական ծրագիր, որպեսզի ուսումնասիրի թե ինչպես է գենդերային իրավահավասարությունը փոխկապակցվում տարբեր կոմիտեների իրավասության ներքո գտնվող խնդիրների հետ և ինչպես կարելի է գենդերային հիմնախնդիրը ներառել իր աշխատանքում: Որպես ծրագրի պրակտիկ շարունակություն 2002 թ. դեկտեմբերին CDEG-ի և Սոցիալական համախմբվածության Եվրոպական կոմիտե (CDCS) կողմից կազմակերպվեց Սոցիալական ծառայությունների ոլորտում գենդերային իրավահավասարության հարցերով սեմինար: Սեմինարի նպատակներից մեկը կայանում էր 2003 թ. կազմավորված Սոցիալական ծառայություններում օգտագործողների ներգրավվածության հարցերով մասնագիտական խմբին գենդերային իրավահավասարության վերաբերյալ պրակտիկ տեղեկատվության տրամադրումը:

CDEG-ը նաև մտահոգված էր կրթության ոլորտում գենդերային իրավահավասարության խնդրով և Կրթության հարցերով ղեկավար կոմիտեի (CD-ED) հետ համատեղ կազմավորեց Դպրոցներում գենդերային իրավահավասարության խրախուսման մասնագիտական խումբ (EG-S-GS), որի նպատակն էր ուսումնասիրել այդ ոլորտում առկա քաղաքականությունները և պրակտիկաները, որպեսզի ուսուցիչների վերապատրաստման, կրթակարգերի և կրթական նյութերի, ինչպես նաև ուսուցման մեթոդների և կրթական ծրագրերի շնորհիվ մշակվեն դպրոցական համակարգում գենդերային իրավահավասարության խրախուսման նոր ճանապարհներ և միջոցներ: Խմբի վերջնական հաշվետվությունը[6] CDEG-ի կողմից ընդունվեց 2004 թ. նոյեմբերին: Հաշվետվությունում տրվեցին դպրոցական համակարգում գենդերային իրավահավասարության խրախուսման ռազմավարությունների մշակման գծով ուղեցույցեր: Ներկայումս CDEG-ն և CDED-ն դպրոցներում գենդերային իրավահավասարության խրախուսման վերաբերյալ առաջարկություններ են պատրաստում:

CDEG-ն նաև համագործակցեց Եվրախորհրդի տեղական և տարածքային մարմինների կոնգրեսի հետ տեղական և տարածքային մակարդակներով գենդերային իրավահավասարության խնդրի շուրջ: 2003 թ. սեպտեմբերին կազմակերպվեց Եվրախորհրդի գենդերային իրավահավասարության ոչ պաշտոնական ցանցի մասնակիցների հանդիպումը: Հանդիպմանը հետևեցին 2004 թ. մարտին Կոնգրեսի Սոցիալական համապատասխանեցման կոմիտեի կողմից կազմակերպված լսումներ *Տեղական և տարածքային մակարդակներով գենդերային իրավահավասարության հարցերի շուրջ իրազեկման բարելավում՝ գենդերային իրավահավասարություն մարզպետարաններում և շրջաններում*, որոնց CDEG-ն հրավիրվեց մասնակցելու: Նման համագործակցության արդյունքում 2004 թ. մայիսին կայացած հերթական նիստում Կոնգրեսի կողմից ընդունվեց *Որոշում 176-ը (2004 թ.) և Առաջարկ 148-ը (2004 թ.) Գենդերային իրավահավասարություն տեղական և տարածքային մակարդակով՝ քաղաքներում և շրջաններում կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության խրախուսման ռազմավարություն:*

Եվրախորհրդի այլ կառուցներում գենդերային իրավահավասարությունն ընդգրկելու ռազմավարության շրջանակներում 2005 թ. CDEG-ն սկսեց համագործակցել նորաստեղծ Փորձագետների կոմիտեի հետ Առողջապահության Եվրոպական կոմիտեի (CDSP) կողմից իրականացվող առողջապահական քաղաքականությունում գենդերային հարցերի ընդգրկման շուրջ:

---

[4] Գենդերային իրավահավասարության վերաբերյալ Նախարարների խորհրդի Առաջարկ No. R (98) 14 անդամ երկրներին:

[5] Սոցիալական համախմբվածության Եվրոպական կոմիտե (CDCS), Առողջապահության Եվրոպական կոմիտե (CDSP), Սպորտի զարգացման կոմիտե (CDDS), Տարածքային ապաստանի, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական հարցերով փորձագետների ժամանակավոր հանձնաժողով (CAHAR):

[6] Դպրոցական համակարգում գենդերային իրավահավասարության խրախուսում (Promoting gender mainstreaming in schools) – Դպրոցներում գենդերային իրավահավասարության խրախուսման մասնագիտական խմբի եզրափակիչ հաշվետվություն (EG-S-GS (2004) RAP FIN):

# ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

Նշված գործունեության հիման վրա և որպես գենդերային իրավահավասարության և իրավահավասարության հարցերում տիրող իրավիճակի վերաբերյալ Եվրախորհրդի անդամ երկրների կողմից տարվող հետազոտական աշխատանքի մի մաս, CDEG-ն որոշեց ավելի հանգամանորեն անդրադառնալ գենդերային իրավահավասարության ռզամավարության իրականացման ոլորտներում առկա տարբեր մեթոդներին և մոտեցումների և դրանց հիման վրա կարծիք կազմեց գենդերային բյուջետավորման գերակա դերի վերաբերյալ, ելնելով այն հանգամանքից, որ բյուջեն կարևորվում է որպես կառավարությունների քաղաքականության և պլանավորման առաջնահերթ գործիք: 2002 թ. նոյեմբերին այն ստեղծեց գենդերային բյուջետավորման հարցերով փորձագետների անկախ խումբ, որի նպատակն էր գենդերային գույքագրման կազմակերպումը, այդ թվում՝ գենդերային բյուջետավորման սահմանումը, վերջինիս իրականացման մեթոդաբանության մշակումը, ինչպես նաև տեղական, տարածքային և ազգային մակարդակով կիրառվող պրակտիկաների ամփոփումն ու դասակարգումը:

Գենդերային բյուջետավորման հարցերով անկախ փորձագետների խմբի հանդիպումները կայացան 2002 թ. նոյեմբերին, 2003 թ. մարտին և 2003 թ. նոյեմբերին Ստրասբուրգում: CDEG-ի որոշման հիման վրա այն վերակազմավորվեց որպես Գենդերային բյուջետավորման մասնագիտական խումբ (EG-S-GB), որի տեխնիկական առաջադրանքն ընդունվեց Նախարարների կոմիտեի կողմից 2004 թ. մարտին: 2004 թ. մայիսին և հոկտեմբերին EG-S-GB-ն անցկացրեց երկու հանդիպումներ:

Ներկա հաշվետվությունը հանդիսանում է գենդերային բյուջետավորման հարցերով անկախ փորձագետների երեք հանդիպումների և գենդերային բյուջետավորման մասնագիտական խմբի (EG-S-GB) երկու հանդիպումների արդյունքը: Մասնագիտական խումբը բաղկացած էր վեց փորձագետներից՝ CDEG-ի մեկ անդամից և գենդերային բյուջետավորման ոլորտի հինգ փորձագետներից (անդամների ցուցակը ներկայացված է Հավելված 1-ում):

Տեխնիկական առաջադրանքի պայմանների համաձայն (տես Հավելված II), մասնագետների խմբին առաջադրվեց մշակել ուղեցույցի նախագիծ այն անդամ երկրների համար, որոնք գտնվում են գենդերային բյուջետավորման ներդրման գործընթացում կամ դիտարկում են այդ ոլորտում բարեփոխումների իրականացումը:

Անկախ փորձագետների խումբը սկսեց իր աշխատանքը մշակելով գենդերային բյուջետավորման սահմանումը (տես ստորև) և կազմելով հարցման թերթիկ (Հավելված III), այդ հարցի վերաբերյալ տեղեկատվության և եվրախորհրդի անդամ երկրներում իրականացվող գենդերային բյուջետավորման ծրագրերի վերաբերյալ հնարավորինս շատ պրակտիկ օրինակներ ձեռք բերելու նպատակով: 2002 թ. դեկտեմբերին այդ հարցաթերթիկը հղվեց CDEG-ի անդամներին և առաջարկվեց պատասխաններն ուղարկել մինչև 2003 թ. հունվարի 30-ը: Եվրախորհրդի 45 անդամ երկրներից պատասխաններ ստացվեցին միայն 11-ից: Չորս երկրներ (Բելգիայի ֆլամանդական համայնք, Էստոնիա, Լեհաստան և Սլովակիա) Քարտուղարությանը տեղեկացրեցին, որ գենդերային բյուջետավորման ոլորտում որևէ կոնկրետ ծրագրեր չեն իրականացվել: Ստացված պատասխանների սակավությունը վկայում էր այն բանի մասին, որ գենդերային բյուջետավորումը բավականին նոր ասպարեզ է և գենդերային բյուջետավորման գաղափարը, անպես, ինչպես այն սահմանվել էր խմբի կողմից, անդամ երկրների մեծ մասում դեռևս գտնվում է սաղմնային վիճակում և ներկայումս իրականացվող ծրագրերը հիմնականում տեղական մակարդակի են:

Մի շարք երկրներ նշեցին, որ կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարություն խրախուսելու նպատակով բյուջում կոնկրետ միջոցներ են նախատեսվել, որն իրականում չի կարելի համարել բյուջետային գործընթացում գենդերային իրավահավասարության էական դրսևորում:

Այն երկրներում, որտեղ ձեռնարկվել են ավելի կոնկրետ գենդերային բյուջետավորման ծրագրեր, դրանք հիմնականում սահմանափակվում էին կոնկրետ քաղաքականություններում և բյուջետային ոլորտներում գենդերային հիմքերով անցկացվող գնահա-

տումներով: Քանի որ ծրագրերի մեծ մասը գտնվում էր իրականացման փուլում, գնահատումների արդյունքների, ինչպես նաև այդ արդյունքների շնորհիվ բյուջետում գենդերային հարցերին ավելի մեծ ուշադրություն հատկացնելու վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում էր կամ շատ սակավ էր:

Գենդերային բյուջետավորման ծրագրերի իրականացմանը խոչընդոտող հիմնական հանգամանքը քաղաքական կամքի և գենդերային սկզբունքով ապախոշորացված տվյալների բացակայությունն էր:

Ամփոփելով վերոշարադրվածը կարելի է նշել, որ սակավաթիվ պատասխանների, ինչպես նաև ծրագրերի իրականացման չափազանց վաղ փուլում գտնվելու պատճառով մասնագիտական խմբին չհաջողվեց օգտագործել հարցաթերթիկի պատասխանները իր աշխատանքներում:

Խումբը նաև մեծ ուշադրություն հատկացրեց գենդերային բյուջետավորման գործընթացի գույքագրմանը՝ գենդերային բյուջետավորման ծրագրերի համար ուղեցույցեր մշակելու և ներդաշնակ հիմքեր ստեղծելու համար, որոնք կարելի է համապատասխանեցնել ցանկացած ազգային յուրահատկություններին: Խմբի աշխատանքը ներկայացված է սույն հաշվետվությունում:

Հաշվետվության հիմնական նպատակներն են գենդերային բյուջետավորման վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացումը և տեղեկատվության տրամադրումը, խրախուսելով վերջինիս կիրառումը և նպաստելով գենդերային իրավահավասարությանը: Հաշվետվությունում ներկայացվում է թե ինչպես պետք է կազմակերպել գենդերային բյուջետավորման գործընթացը և մեթոդաբանությունները և ինչպես կարելի է կիրառել այդ մեթոդները և գործիքները: Այն կիրառման ներդաշնակ հիմքեր է առաջարկում տարբեր երկրների համար, կախված կոնկրետ իրավիճակից և ներկայացնում է գենդերային բյուջետավորման կոնկրետ օրինակներ: Հաշվետվությունը դիտարկում է գենդերային բյուջետավորման ծրագրերը և օրինակները տարբեր երկրներում (Մաս III), առաջարկելով ծավալուն նյութական բազա, որը կարելի է օգտագործել հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները: Այն չի տրամադրում երկրներին որևէ կոնկրետ ձևանմուշ կամ գործիքախումբ, որն անհնար է և անիրատեսական հաշվի առնելով տարբեր երկրների բյուջետավորման առանձնահատկությունները: Ուստի երկրները պետք է փորձարկեն առաջարկվող մոդելը և առաջ քաշեն սեփական նախաձեռնությունները, որի արդյունքում կապահովվի իրականացվող ծրագրերի բարձր արդյունավետությունը:

Մի շարք Եվրոպական երկրների կառավարություններ ներկայումս վերակառուցում են բյուջետավորման գործընթացները, ծախսային և լրացուցիչ բյուջետավորման սկզբունքից անցնելով դեպի առավել օբյեկտիվ և մուտքերի վրա հիմնված բյուջետավորման ձևերի: Մինչ դեռ այդ գործընթացը ինքնըստինքյան չի հանգեցնում գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող բյուջետավորման, այնուամենայնիվ բյուջեի ելքերի և մուտքերի համեմատ վերջինիս հիմնարար սկզբունքը լայն հնարավորություններ է ստեղծում գենդերային բյուջետավորման ներդրման համար:

1995 թ. Պեկինում կայացած Կանանց հարցերով ՄԱԿ-ի 4-րդ համաշխարհային համաժողովի ընթացքում հաստատված Գործողությունների ծրագիրը առաջարկեց կառավարություններին պարբերաբար վերլուծել պետական հատվածի ծախսերը և համապատասխանեցնել բյուջեներում ամրագրված ծախսերը գենդերային իրավահավասարության կարիքներին: Արդյունքում գենդերային բյուջետավորումը միջազգայնորեն ճանաչվեց որպես սեռերի իրավահավասարությանը միտված ռազմավարություն: Ուստի Եվրոպայի խորհրդի կողմից գենդերային բյուջետավորմանը հատկացվող մեծ ուշադրությունը զուգորդվում է այլ միջազգային կազմակերպությունների կողմից գենդերային բուջետավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի հետ: Ներկայումս մի շարք բազմակողմանի գործկալություններ օժանդակում են գենդերային բյուջետավորման գործընթացին, տրամադրելով տեխնիկական աջակցություն և տարածելով անհրաժեշտ տեղեկատվությունը:

Այդ կազմակերպությունների շարքերում առաջատարի դեր են ստանձնել Համագործակցության քարտուղարությունը, որը 1990 թվականներին օժանդակեց Համագործակցության երկրների կողմից իրականացվող գենդերային բյուջետավորման լայնածավալ փորձնական ծրագրին, ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամը (UNIFEM) և ՄԱԿ-ի այլ վարչությունները և գործակալությունները, մասնավորապես ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP): Բացի այդ, վերջերս գենդերային բյուջետավորման զարգացման և իրականացման հարցերում հետզհետե ավելի մեծ ներդրում են ունենում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD), Համաշխարհային բանկը և բոլորովին վերջերս Արժույթի միջազգային հիմնադրամը (IMF) և Հյուսիսային երկրների նախարարների խորհուրդը[7]:

Գենդերային բյուջետավորման գծով տարվող աշխատանքում Եվրոպայի խորհուրդը համագործակցում է Եվրոպական կոմիտեի Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորու-

[7] Գենդերային բյուջետավորմանն օժանդակող մյուս կազմակերպությունները և ինտերնետային կայքերը ներկայացված են Հավելված IV-ում:

թյունների խորհրդատվական կոմիտեի և Հյուսիսային երկրների նախարարների խորհրդի հետ:

Այն բանից հետո, երբ 2003 թ. Եվրոպական խորհրդարանն անցկացրեց *Գենդերային բյուջետավորում՝ պետական բյուջեներում գենդերային հեռանկարներ* թեմայով բաց լսումներ, Եվրոպական խորհրդարանի Կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների կոմիտեն հրապարակեց Եվրոպական խորհրդարանի զեկույցը և որոշումը, իսկ Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների խորհրդատվական կոմիտեն եզրակացություն պատրաստեց գենդերային բյուջետավորման վերաբերյալ Եվրոպական կոմիտեի մակարդակով: 2003 թ. հրապարակված այդ եզրակացությունը հաստատեց Եվրախորհրդի Անկախ փորձագետների խմբի կողմից ընդունված սահմանումը:

# 1. Ի՞ՆՉ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

## Ա. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1984 թ. Ավստրալիան իրագործեց առաջին գենդերային բյուջետավորման ծրագիրը: Բյուջեները համարվեցին կարևոր գործիքներ սեռերի իրավահավասարությունը խրախուսելու համար և նախաձեռնվեց գենդերային հարաբերությունների վրա պետական բյուջեների ազդեցության վերլուծությունը: Ավստրալիայի օրինակը կարևորվում էր ոչ միայն իրագեկման մակարդակի բարելավման տեսակետից, այդ մոտեցումը նաև ծառայեց որպես հետագա գենդերային բյուջետավորման ծրագրերի ելակետային օրինակ:

1989 թ. սկսած յուրաքանչյուր տարի Բրիտանական կանանց բյուջետային խումբը (WBG), որը կազմավորված է համալսարաններ, արհմիությունները և հասարակական կազմակերպություններ ներկայացնող մասնագետներից, ազգային բյուջեի վերաբերյալ մեկնաբանություններ է հրապարակում: Հիմնական ուշադրությունը հատկացվում է հարկերի և տրանսֆերտների ուսումնասիրությանը, միևնույն ժամանակ մեծ կարևորություն է տրվում նաև տնտեսական քաղաքականություններում գենդերային խնդիրները հաշվի առնելուն:

1993 թ. Կանադայի Խաղաղության և ազատության կանանց միջազգային լիգան ներկայացրեց գենդերային բյուջետավորման ծրագիրը: Հիմնվելով անվտանգության ալտերնատիվ գաղափարի վրա, այդ ծրագիրը ուղղված է սոցիալական ապահովության և պաշտպանության ոլորտներում կատարվող ծախսերին:

Չնայած Բրիտանական և Կանադական ծրագրերի գոյությանը, մինչ վերջերս ծրագրերի մեծամասնությունը, որոնք հաճախ օժանդակվում և խրախուսվում էին միջազգային կազմակերպությունների կողմից, իրականացվում է հարավային կիսագնդում: Առավել ցայտուն օրինակներից կարելի է նշել Հարավային Աֆրիկայի Հանրապետության Կանանց բյուջետային նախաձեռնությունը, որն իրականացվեց 1995 թ., երկրում առաջին ժողովրդավարական ընտրություններից հետո:

Միևնույն ժամանակ Եվրոպայում Բրիտանական գենդերային բյուջետավորման ծրագիրը որևէ շարունակություն չունեցավ մինչ 1990 թ. վերջը, երբ Ֆրանսիան սկսեց հրապարակել *“jaune budgétaire”*՝ բյուջեի դեղին էջերի հավելվածը, որին հետևեցին մի շարք Եվրոպական երկրներում կազմվող գենդերային բյուջետավորման ծրագրերը: Ներկայումս գենդերային բյուջետավորումը իրականացվում է աշխարհի ավելի քան 40 երկրներում: Այն ներկայացվում և իրականացվում է զանազան ճանապարհներով:

Գենդերային բյուջետավորման վերաբերյալ գրականության ցուցակը և ինտերնետային կայքերի հասցեները ներկայացված են Հավելված IV-ում:

## Բ. ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

Ելնելով Եվրախորհրդի *Գենդերային իրավահավասարության հարցերի մասնագիտական խմբի* սահմանումից CDEG-ի *Գենդերային բյուջետավորման հարցերով անկախ փորձագետների* կողմից մշակվեց գենդերային բյուջետավորման հետևյալ սահմանումը.

> Գենդերային բյուջետավորումը դա բյուջետային գործընթացում գենդերային իրավահավասարության սկզբունքի կիրառումն է: Այն նշանակում է գենդերային հիմքերով բյուջեների գնահատում, բյուջետային գործընթացի բոլոր փուլերում գենդերային հեռանկարի ներդրում և սեռերի իրավահավասարության խրախուսման նպատակով բյուջետային ծախսերի և եկամուտների վերակառուցում:

Պետական բյուջեները ոչ թե զուտ տնտեսական գործիքներ են, այլ նրանք ամփոփում են քաղաքականությունները դրամական արտահայտմամբ և արտահայտում քաղաքական գերակայությունները: Ուստի գենդերային տեսակետից բյուջեները չեն կարող լինել չեզոք: Նրանք ազդում են տղամարդկանց և կանանց վրա տարբեր ճանապարհներով,

արտացոլելով հասարակության ներքո տնտեսական անհամաչափությունների արդյունքում իշխանության անհավասար բաշխումը, տարբեր կենցաղային պայմանները և իրենց համար ամրագրված սոցիալական դերերը: Գենդերային բյուջետավորումը փորձում է տեսանելի դարձնել բյուջեների գենդերային ազդեցությունը, այն դարձնելով սեռերի իրավահավասարությանը միտված արդյունավետ գործիք: Գենդերային բյուջետավորումը սովորաբար ընդգրկում է կառավարության բոլոր մակարդակները՝ ազգային, տարածքային և տեղական: Ուստի այն ներառում է բյուջետային գործընթացի բոլոր փուլերը և ենթադրում գենդերային վերլուծություն, գնահատում և բյուջեների վերակազմավորում:

Գենդերային բյուջե(տավորում) տերմինի փոխարեն որպես հոմանիշ կարող են կիրառվել գենդերային միտվածությամբ, գենդերային կողմնորոշմամբ, գենդերային հարցերի նկատմամբ զգայուն բյուջե կամ կանանց բյուջե: Գեդներային բյուջետավորումը չի նշանակում առանձին բյուջե կանանց համար: Այդ հասկացությունը չի սահմանափակվում հավասար հնարավորությունների քաղաքականություններ իրականացնելու կամ կանանց առաջխաղացումը նպաստելու նպատակով կատարվող բյուջետային հատկացումներով, այլ պարփակում է ամբողջ բյուջեն՝ եկամուտները և ծախսերը:

Կարևոր է նաև ընդգծել, որ գենդերային բյուջետավորումը կազմում է գենդերային իրավահավասարության ռազմավարության անբաժանելի մասը: Այն դեպքում, երբ իրականում իրականացվելու է գենդերային իրավահավասարության ռազմավարություն, ապա բյուջեները պետք է ուսումնասիրվեն քաղաքականության հետ մեկտեղ: Եթե անհրաժեշտ է լրացնել քաղաքականության և միջոցների հատկացման միջև առկա ճեղքվածքը, որը մինչ այժմ առկա է եղել գրեթե բոլոր գենդերային բյուջետավորման ծրագրերում, ապա բյուջեի կազմումը և քաղաքականության մշակումը պետք է իրականացվեն սերտ կոորդինացմամբ:

Հետևաբար գենդերային բյուջետավորումը չպետք է սահմանափակվի կոնկրետ քաղաքական ոլորտներով, այլ բոլոր քաղաքական ոլորտները պետք է սկզբունքորեն հանդիսանան գենդերային բյուջետավորման առարկա: Իրականում գենդերային բյուջետավորման ծրագրերի իրականացումը կարելի է սկսել սահմանափակելով դրանց շրջանակը կոնկրետ քաղաքականությունների ոլորտներով կամ միջոցառումներով, համապատասխան մոդելներ և գործիքներ մշակելու և լայնածավալ կիրառումների համար փորձ և գիտելիքներ ձեռք բերելու համար: Նման մոտեցում կիրառվել է օրինակ Շվեդիայում, որտեղ 2003 թ. իրականացվել է երեք քաղաքականությունների ոլորտներ ընդգրկող գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիր: 2004 թ. ավարտվեց այդ ծրագրի փորձնական շրջանը և այնուհետև այն դարձավ երկրի կառավարության աշխատանքի անբաժանելի մաս, որի արդյունքումկառավարությունը ձեռնամուխ եղավ գենդերային բյուջետավորման գործընթացի իրականացմանը բոլոր քաղաքականությունների ոլորտներում:

Գենդերային բյուջետավորման կարևոր բաղադրիչ է հանդիսանում տարբեր քաղաքականությունների ոլորտների միջև հարաբերությունների և քաղաքականության միջոցառումների համատեղ արդյունքների հեռանկարային վերլուծությունը: Գենդերային բյուջետավորման ծրագրերը պետք է ներառեն վերլուծությունների հետևյալ մակարդակները. միագումար մակրոտնտեսական ռազմավարությունները, ծախսերի և եկամուտների կառուցվածքը և բաղադրությունը և ծառայությունների մատուցման արդյունավետությունը (Elson 2002 թ.): Այդ բոլոր մակարդակներով իրականացվող վերլուծությունը պետք է հաշվի առնի այսպես կոչված խնամքի տնտեսությունը:

Ծայրահեղական տնտեսագետների կողմից առարկվող խնամքի տնտեսությունը, շահույթի կորզմանը միտված շուկայի և պետական ծառայությունների հատվածի հետ մեկտեղ, կազմում է տնտեսության անբաժանելի մասը: Այն վերաբերում է ընտանիքի, հարևանության կամ տեղական համայնքի մասնավոր ոլորտում չվճարվող արտադրությանը և ծառայություններին, հիմնականում կանանց չվճարվող աշխատանքին[8]:

Պետական բյուջեները սովորաբար հաշվի են առնում միայն մոնետար տնտեսությունը: Արդյունքում չվճարվող խնամքը և ծառայությունները չեն ընդգրկվում պետական բյուջեների մակրոտնտեսական շրջանակում: Ֆեմինիստ տնտեսագետները և գենդերային բյուջեներ վերլուծողները, օրինակ՝ Ռոնդա Շարպը և Դայան Էլսոնը անդրադարձել են «կեղծ տնտեսությանը», որը հաշվի չի առնում խնամքի տնտեսությունը: Պետական ծառայությունների գծով կրճատումները օրինակ լրացուցիչ ճնշում են առաջացնում խնամքի տնտեսության վրա, որը ստիպված է իր իսկ հաշվին մատուցել այդ ծառայությունները, քանի որ շուկայական տնտեսությունը չի տրամադրում դրանք կամ տրամադրում է շատ բարձր գնով: Արդյունքում հատկապես կանայք ստիպված են կատարել ավելի

[8] ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի համաձայն (Մարդկային զարգացման զեկույց 1995 թ.), չվճարվող արտադրությունը կազմում է ՀԱԱ-ի առնվազն 50 տոկոսը: Արդյունաբերական երկրներում կանանց աշխատանքային ժամանակի երկու երրորդը ծախսվում է չվճարվող և միայն մեկ երրորդը վճարվող աշխատանքի վրա: Ի տարբերություն դրան, տղամարդկանց աշխատանքային ժամանակի երկու երրորդը ծախսվում է վճարվող աշխատանքի և միայն մեկ երրորդը վճարվող աշխատանքի վրա: Զարգացող երկրներում այդ տարբերությունը նույնիսկ ավելի ակնհայտ է:

մեծ քանակի չվճարվող աշխատանք, որը սահմանափակում է իրենց աշխատելու, շատ դեպքերում նաև սոցիալական ապահովման հնարավորությունները: Ուստի, խնամքի տնտեսության ընդգրկումը ընդհանուր տնտեսական քաղաքականություններում և հատկապես գենդերային բյուջետավորման ներքո, թույլ է տալիս ավանդական տնտեսագիտական գաղափարների համեմատ ավելի նպատակային և պատշաճ մոտեցումներ ցուցաբերել սոցիալական արդարության, ծախսերի և օգուտների բաշխվածության հարցերի նկատմամբ:

Գենդերային բյուջետավորման ծրագրերը կարող են կազմվել ինչպես կառավարության ներքո, այնպես էլ դուրս մի շարք այլ օղակների կողմից: Հասարակական կազմակերպությունները և անկախ փորձագետները հաճախ կարող են կարևոր դեր խաղալ, ձեռնարկելով առաջին քայլերը գենդերային բյուջետավորման ուղղությամբ, սակայն առանց կառավարության դրական և պրակտիկ արձագանքի, կառավարությունից զատ կազմված ծրագրերի ազդեցությունը անշուշտ սահմանափակ կլինի: Այս զեկույցը հասցեագրված է Եվրախորհրդի անդամ երկրներին և հետևաբար անդրադառնում է կառավարության ներքո կազմվող ծրագրերին:

## Գ. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### *Սեռերի իրավահավասարություն*

Գենդերային բյուջետավորման հիմնարար սկզբունքը կայանում է մարդու իրավունքների անբաժանելի մասը կազմող սեռերի իրավահավասարության խթանման նպատակով բյուջեների և համապատասխան քաղաքականությունների կատարելագործման մեջ: Գենդերային բյուջետավորումը տեսանելի է դարձնում բյուջեների գենդերային միտվածությունը և բարձրացնում իրազեկման աստիճանը կանանց նկատմամբ խտրականության հաճախ քողարկված դրսևորումների վերաբերյալ: Արդյունքում գենդերային բյուջետավորումը խիթ է բերում գենդերային տեսակետից որպես կանոն չեզոք ներկայացվող պետական ֆինանսավորման և մասնավորապես տնտեսական քաղաքականությունների գենդերային հետևանքները: Այդ իսկ պատճառով գենդերային բյուջետավորումը համարվում է իրազեկման բարձրացման, գենդերային խնդիրների յուրացման և քաղաքանառությունների ու բյուջեների վրա ազդեցության առանցքային ռազմավարություն:

### *Հաշվետվականություն*

Գենդերային բյուջետավորումը կարևորագույն գործիք է գենդերային իրավահավասարության ռազմավարության ներքո իրականացվող գործունեության նկատմամբ մոնիտորինգ իրականացնելու համար, քանի որ պետական բյուջեները ներառում են քաղաքականության բոլոր ոլորտները: Ուստի գենդերային բյուջեները հանդիսանում են *«կառավարության կողմից սեռերի իրավահավասարության գծով ստանձնած պարտավորությունների բյուջետային արտացոլումը պարզելու կարևոր մեխանիզմ»* (Sharp/ Broomhill 2002 թ., 26): Այսպիսով գենդերային քաղաքականությունը կարող է համարվել կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունների և տրվող հստակ հանձնարությունների գենդերային իրավահավասարության ռազմավարության կարևորագույն գործիք, որի միջոցով կառավարությունը հաշվետու է գենդերային քաղաքականության գծով իր կողմից ստանձնած պարտավորությունների համար:

### *Թափանցիկություն և մասնակցություն*

Միևնույն ժամանակ գենդերային բյուջետավորումը բարելավում է բյուջետային գործընթացի թափանցիկությունը և մասնակցության մակարդակը: Այն միտված է բյուջետային գործընթացների և ընդհանուր քաղաքականության ժողովրդավարության աստիճանի բարձրացմանը: Գենդերային միտվածությամբ բյուջետային ծրագրերը կարող են նպաստել բյուջեի նախապատրաստման և բյուջեի ելքերի ու մուտքերի նկատմամբ մոնիտորինգի գործընթացում հասարակության ներգրավվածությանը, մասնավորապես ապահովելով կանանց մասնակցությունը այդ գործընթացում և ուժեղացնելով տնտեսական և ֆինանսական կառավարումը թափանցիկության խթանման շնորհիվ:

### *Արդյունավետություն և կնիքում*

Գենդերային բյուջետավորումը նաև նպաստում է քաղաքական միջոցառումների թիրախավորման բարելավմանը, հետևաբար արդյունավետության և տնտեսման բարելավմանը: Քաղաքական նպատակներին հասնելու և սակավ միջոցներն ավելացնելու, երկրի տնտեսությունը արդյունավետ և տնտեսվար վարելու համար կառավարությունը պետք է հաշվի առնի, որ կանայք և տղամարդիկ իրենց անհավասար սոցիալական դիրքերի և վերապահված սոցիալական դերակատարության պատճառով կարող են ունենալ միմյանցից տարբերվող կարիքներ և ցանկություններ և տարբեր ձևերով արձագանքել գենդերային տեսակետից ակնհայտորեն չեզոք միջոցառումներին: Գենդերային բյուջետավորումը ապահովում է այդ հատուկ գենդերային իրազեկվածությունը, ուստի այն կարևոր քայլ է հանդիսանում պատաճ տնտեսական կառավարման ուղղությամբ:

### Պատշաճ կառավարում

Քանի որ գենդերային անհավասարությունները հանգեցնում են սոցիալական համախմբվածության, տնտեսական արդյունավետության և մարդկային զարգացման գծով զգալի կորուստների, գենդերային բյուջետավորումը կարող է դիտարկվել որպես հավասար քաղաքականության և միջոցների արդար բաշխման կարևոր ռազմավարություն, որը նպաստում է անհավասարությունների վերացմանը և չքավորության կրճատմանը: Ուստի գենդերային միտվածություն ունեցող բյուջեները գործիք են հանդիսանում ոչ միայն տնտեսական և ֆինանսական կառավարման բարելավման, այլ նաև ընդհանրապես պատշաճ կառավարման ապահովման համար:

## Դ. ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքական կամքը, հաշվետվությունը, հատուկ մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրումը, տեղեկատվության կոորդինացումը և ուսուցումը, ինչպես նաև ըստ գենդերային սկզբունքով ապախոշորացված տվյալները կարող են դիտարկվել որպես գենդերային բյուջետավորման նախապայմաններ: Բյուջետային գործընթացի ներքո թափանցիկությունը, գործընկերությունը և համագործակցությունը հանդիսանում են. գենդերային բյուջետավորման առանցքային սկզբունքներ:

### Քաղաքական կամք

Քաղաքական կամքը գենդերային բյուջեի ծրագրերի հաջողության կարևորագույն նախապայման է: Ակտիվ քաղաքական նվիրվածությունը սեռերի իրավահավասարության խթանման ուղղությամբ և գենդերային բյուջետավորումը, որպես սեռերի իրավահավասարության նպատակներին նպաստող կարևոր ռազմավարության ճանաչում, բացարձակապես անհրաժեշտ են արդյունավետ գենդերային բյուջետավորման համար: Քաղաքական կամքը մասնավորապես ներառում է համապատասխան քաղաքական շրջանակի՝ ազգային խորհրդարանների, տարածքային և տեղական կառավարման մարմինների, նրանց խորհրդատու մարմինների և քաղաքական կուսակցությունների ներքո ձևավորվող շահերի պաշտպանությունը և իրազեկման մակարդակի բարձրացումը: Կառավարության նվիրվածությունը առանցքային դեր ունի և այն պահանջում է կառավարության բոլոր անդամների ակտիվ աջակցությունը, որի շնորհիվ այդ հարցը մշտապես քննարկման առարկա է հանդիսանում բյուջեի հարցերով կազմակերպվող հանդիպումների ժամանակ: Միևնույն ժամանակ կարևոր են նաև հստակ ցուցումները և կառավարության ադմինիստրատիվ աշխատակազմի կողմից հարցերի լուծման նկատամբ համապատասխան հսկողության սահմանումը: Գենդերային բյուջետավորումը կարող է հասնել իր նպատակներին միայն եթե այն իրականացվում է քաղաքական նվիրվածությամբ և դիտարկվում որպես քաղաքական գերակայություն:

### Հաշվետվականություն

Քաղաքական կամքը պետք է վերածել հաշվետվականության: Կառավարությունները պետք է հաշվետու լինեն գենդերային իրավահավասարության, մասնավորապես գենդերային բյուջետավորման գծով իրենց կողմից ստանձնած ազգային և միջազգային պարտավորությունների համար: Բյուջետային հարցերի գծով կառավարությանը հարցումներ ներկայացնելու և նույնիսկ հրահանգներ տալու գործընթացում առանցքային տեղ է հատկացվում խորհրդարանին: Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության այլ խմբերն ու լրատվական միջոցները կարող են բարելավել հանրության իրազեկումը և համախմբել քաղաքացիներին կառավարությունից հաշվետվություն պահանջելու և պետական միջոցների արդար գոյացման ու բաշխման հարցերում: Ավելին, գենդերային բյուջետավորման նպատակների և ընթացակարգերի հստակ սահմանումները նպաստում են հաշվետվականության բարելավմանը, որը նաև ենթադրում է իշխանությունների և նրանց առընթեր գերատեսչությունների և մարմինների միջև գենդերային բյուջետավորման հարցերում հստակ պարտականությունների առկայություն:

### Մարդկային և ֆինանսական ռեսուրսներ

Քաղաքական կամքը պետք է նաև վերածվի վերլուծության, կոորդինացման և կարողությունների ստեղծման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների: Այդ ռեսուրսների հատկացումը պահանջում է ակտիվ քաղաքական նվիրվածություն բարձր մակարդակով: Հաջող գենդերային բյուջետավորումը պահանջում է վերլուծություն և հետազոտում, որը հնարավոր չէ ապահովել կանոնավոր պաշտոնական պարտականությունների շրջանակում: Ուստի գենդերային բյուջետավորման հաջողության նախապայմաններն են լրացուցիչ որակյալ աշխատակազմի և ֆինանսական միջոցների առկայությունը, որը թույլ է տալիս իրականացնել հետազոտական աշխատանք, մշակել անհրաժեշտ գիտելիքային բազան, կրթել պաշտոնյաներին և կոորդինացնել գենդերային բյուջեի գործընթացը:

### Կոորդինացում

Տվյալները հավաքագրելու և փոխանակելու, ինչպես նաև բոլոր մասնակիցների միջև կայուն տեղեկատվական հոսք պահպանելու առումով հաջող գենդերա-

յին բյուջետավորման գործընթացում առանցքային դեր է հատկացվում ամբողջ բյուջետային գործընթացի կոորդինացմանը: Կոորդինացումը պետք է նախատեսի ուսուցում, հստակ հրահանգներ և ուղեցույցեր բյուջետային ողջ ցիկլի իրականացման, մոնիտորինգի և համախմբման ընթացքում: Կոորդինացումը նաև նախատեսում է տվյալների, մեթոդների, գործիքների և լավ օրինակների հավաքագրում և կանոնակարգում, նպաստելով փորձի փոխանակմանը: Արդյունավետ համագործակցություն ապահովելու համար կարող է անհրաժեշտություն առաջանալ վարչակազմի ներքո ինստիտուցիոնալ հիմքերով հատուկ կոորդինացման ստորաբաժանում կազմավորել: Ցանկալի է, որպեսզի այն գործի ֆինանսների նախարարության և/կամ բյուջետային վարչության ներքո, սերտորեն համագործակցելով սեռերի իրավահավասարության հարցերով համապատասխան ազգային կառույցի հետ: Ելնելով նրանից, որ վարչակազմի ներքո կարող է բացակայել գենդերային բյոջետավորման համար անհրաժեշտ մասնագիտական մակարդակը, շահավետ կարող է լինել սերտ համագործակցությունը արտաքին փորձագետների հետ:

### Գենդերային ապախոշորացմամբ տվյալներ

Գենդերային ապախոշորացմամբ տվյալները հանդիսանում են գենդերային բյուջետավորման առանցքային նախապայմանը և քաղաքականությունների գենդերային ազդեցության գնահատման համար անհրաժեշտ հիմքը: Ազգային վիճակագրությունը, կառավարման տեղեկատվական համակարգը ճյուղային նախարարություններում և պետական գերատեսչություններում և գիտահետազոտական ինստիտուտներում կարևոր դեր է խաղում այդ հիմքի ապահովման հարցում: Գենդերային ապախոշորացված տվյալները վերաբերում են ոչ միայն դրամական տեսակետից գենդերային անհամաչափություններին, և շուկայական տնտեսության անհավասարություններին, այլ նաև մի շարք գործոնների հետ մեկտեղ պետք է ընդգրկեն կանանց և տղամարդկանց միջև չվճարված աշխատանքի բաշխումը, որի վերաբերյալ տվյալները ժամանակային կտրվածքով պետք է ձեռք բերվեն նպատակային ուսումնասիրությունների միջոցով: Բացի այդ գենդերային ապախոշորացված տվյալները չպետք է սահմանափակվեն միայն քանակական մեծություններով, այլ նաև հաշվի առնվեն որակական գործոնները: Որակական ցուցանիշները պետք էլ ավելի կատարելագործվեն և հստակեցվեն: Նախարարությունները և պետական գերատեսչությունները պետք է կոնկրետ սահմանեեն իրենց համար անհրաժեշտ քանակական և որակական գենդերային ապախոշորացված տվյալները: Շատ դեպքերում գենդերային բյուջետավորման իրականացման ժամանակ դա պետք է առաջին քայլը հանդիսանա:

### Թափանցիկություն, գործընկերություն և համագործակցություն

Բյուջետային գործընթացի և ընդհանրպաես քաղաքականության վերաբերյալ կայացվող որոշումների թափանցիկությունը պետք է հանդիսանան գենդերային բյուջետավորման ուղեցուցային սկզբունքը: Գենդերային բյուջետավորման գործընթացը պահանջում է բյուջետային և գենդերային փորձագետների միջև համագործակցություն, նաև ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մասնակցությունը այդ գործընթացի բոլոր փուլերին: Գործընկերությունը նաև տարածվում է արտակառավարական մասնակիցներրի վրա, ներառյալ քաղաքացիական հասարակության խմբերը և արտաքին փորձագետները: Նման մասնակցության վառ օրինակ է հանդիսանում Միավորյալ Թագավորության Կանանց բյուջետային խմբի կողմից իրականացվող խորհրդատվական աշխատանքը:

Համագործակցությունը նախ և առաջ ենթադրում է Ֆինանսների նախարարության և սեռերի իրավահավասարության համար պատասխանատու առանցքային պետական մարմինների միջև աշատանքների կոորդինացում: Գենդերային բյուջետավորման գծով ծրագրերը կարող են արդյունավետորեն կատարվել ինչես կառավարության, այնպես էլ արտակառավարական օղակների կողմից: Հաճախ կարող է պահանջվել համագործակցություն արտաքին փորձագետների հետ, մասնավորապես պետական պաշտոնյաների կրթման և գենդերային ազդեցությունների գնահատման հարցերում: Քաղաքացիական հասարակության մասնակիցները կարող են նաև հանդես գալ որպես կառավարության և քաղաքացիների միջև միջնորդներ, տղամարդկանց և կանանց կարիքների և առաջնային կարիքների բավարարման գծով իրականացվող քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով բյուջեի հարցերով որոշումներ կայացնողներին:

### Անհրաժեշտ պայմանների բավարարում

Նախապայմանների բավարարումը հիմնականում կախված է քաղաքական պատասխանատվությունից: Միջազգային խորհրդատվությունը և փորձը քաջալերում են կառավարություններին և իշխանություններին իրականացնելու գենդերային բյուջետավորման ծրագրեր: Գենդերային բյուջետավորման ընդհանուր առավելությունների բացահայտումը, մասնավորապես տնտեսական շահավետության, միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման տեսանկյունից, պետք է էլ ավելի խորացվի: Միջազգային պայմանագրերի ներքո պետությունների կողմից ստանձնած պարտավորությունները, հատկապես գենդերային

իրավահավասարության ռազմավարության գծով, օրինակ՝ Գենդերային իրավահավասարության ռազմավարության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առաջարկությունը անդամ երկրներին[9] զգալի խթան հանդիսացավ, որպեսզի կառավարությունները ձեռնարկեն համապատասխան քայլեր այդ ուղղությամբ:

Շատ երկրներում հասարակական խմբերը, հասարակական կազմակերպությունները և փորձագետները առանցքային դեր են խաղում գենդերային բյուջետավորման պաշտպանման և հասարակության առջև այն լասաբանման հարցերում: Գենդերային բյուջետավորումը կայուն հիմքերով իրականացնելու համար կարող են պահանջվել շարունակական ջանքեր և հիմնավորումներ:

[9] Բյուջետային իրավահավասարության վերաբերյալ Նախարարների կոմիտեի Առաջարկություն N´ R (98) 14 անդամ երկրներին, որն ընդունվել է 1998 թ. հոկտեմբերի 7-ին.

# 2. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

## A. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Գենդերային բյուջետավորման գործընթացում կարելի է ներգրավել մասնակիցների առավել լայն շրջանակ: Նույն սկզբունքով գենդերային բյուջետավորումն իրականացվում է տեղական և շրջանային մակարդակներով:

### ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

***Կառավարություն***

Կառավարությունը կարող է իրականացնել գենդերային բյուջետավորումն իր նախաձեռնությամբ, խորհրդարանի կամ հասարակական խմբերի պատվերով: Ցանկացած դեպքում կառավարությունը հանդիսանում է գենդերային բյուջետավորման հաջողության տեսակետից հիմնական մասնակիցը:

Կառավարությունները բազմակազմ միավորներ են, որոնց կազմում ընդգրկված են ոչ միայն նախարարների կաբինետը կամ խորհուրդը, այլ նաև նախարարությունների, գերատեսչությունների և գործակալությունների վարչակազմը: Կառավարության որոշումները նախ կայացվում են և հետո իրականացվում են պետական կառավարման գերատեսչությունների և գործակալությունների ցանցի կողմից: Առավելագույն արդյունքի հասնելու համար գենդերային բյուջետավորման ծրագրերը պետք է հաստատվեն համաձայն կառավարության որոշումների: Կառավարության տարբեր մարմինների դերը պետք է հստակ սահմանվի: Անհրաժեշտ գիտելիքներ տրամադրելու համար պետք է բարելավվի պետական պաշտոնյաների իրազեկման և վերապատրաստման գործընթացը: Անհրաժեշտ է հստակ բաշխել կառավարման գծով պատասխանատվությունը: Գենդերային բյուջեի ծրագրերը առավել արդյունավետ են, երբ դրանց նախաձեռնությամբ հանդես է գալիս ֆինանսների նախարարությունը, ընդ որում ցանկալի է, որպեսզի դա իրականացվի գենդերային կամ կանանց հարցերով նախարարության կամ այլ պետական գերատեսչության հետ համատեղ, միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ գենդերային բյուջետավորման պետք է ենթարկել քաղաքականության բոլոր ոլորտները, ապահովելով բոլոր նախարարությունների մասնակցությունը և պատրաստակամությունը: Յուրաքանչյուր նախարարությունում բյուջեի և քաղաքականության համար պատասխանատու պաշտոնյաները պետք է համագործակցեն միմյանց հետ և հնարավորություն ունենան ծանոթանալու ամբողջական գենդերային տեղեկատվությանը: Այդ առանցքային մասնակիցներին պետք է ոչ միայն ապացուցել բյուջեում գենդերային մոտեցումներ ցուցաբերելու առավելությունը, այլ նաև հիմնավորել, որ նման մոտեցումն առավել դյուրին և նպաստավոր է իրենց իսկ աշխատանքը լավ կատարելու համար:

Մինչդեռ բյուջեի գծով ռազմավարական որոշումները կայացվում են նախարարների խորհրդի և համապատասխան նախարարների կողմից, բարձրաստիճան քաղաքացիական պաշտոնյաները և խորհրդատուները նույնպես կարևոր դեր են խաղում այդ հարցում: Գենդերային բյուջետավորումը լուրջ մարտահրավեր է հանդիսանում այն քաղաքացիական ծառայողների համար, որոնք պատասխանատու են բյուջեն վերջնական տեսքի բերելու համար: Ուստի գենդերային բյուջետավորման ծրագրերը կազմելիս նույնքան կարևոր է ապահովել նաև այդ մակարդակի մասնակիցների ակտիվ մասնակցությունը: Առկա է նաև կատարելագործված գործիքների մշակման անհրաժեշտությունը, որոնք թույլ կտան բարելավելու մինչ այժմ կիրառվող մոտեցումները, ուղեցույցներն և ցանկերը ու կօգտագործվեն առօրյա աշխատանքում:

Գենդերային գիտելիքները հիմնականում մատուցվում են սեռերի իրավահավասարության համար պատասխանատու մարմինների կողմից: Դրանց թվում են կառավարության մարմինները, օրինակ՝ առանձին նախարարությունները, վարչությունները կամ գերատեսչությունները, գենդերային գրասենյակը կամ քաղաքականության կոնկրետ ոլորտներում գենդերային հարցերով պատասխանատու անձինք: Դրանք կարող են կազմավորված լինել որպես արտաքին ռեսուրսների կենտրոն կամ ազգային կառավարության կողմից լիազորված գենդերային առաջխաղացմանն օժանդակող կառույց: Սեռերի իրավահավասարության հարցե-

րով զբաղվող մարմինները իրականացնում են իրազեկության բարձրացման և տեղեկատվության տրամադրման գծով գործունեություն, զարգացնում և համագործակցում գենդերային բյուջետավորման ոլորտում, անհրաժեշտ գենդերային գիտելիքներ ներդնում բյուջետային գործընթացում: Միևնույն ժամանակ դրանց մասնակցության սահմանները կախված են այլ նախարարությունների և մասնավորապես ֆինանսների նախարարության հետ համագործակցության աստիճանից: Բոլոր դեպքերում նրանց դերը գիտելիքների և ուսուցման մատուցման, կոորդինացման, իրազեկման մակարդակի բարելավման և նոր կարողությունների ստեղծման հարցերում չի կարելի թերագնահատել:

### *Խորհրդարան*

Խորհրդարանները և տեղական ու շրջանային օրենսդրական մարմինները որպես կանոն քննարկում, փոփոխում և վերջին հաշվով հաստատում են գործադիր մարմինների կողմից առաջարկված բյուջեն, սակայն նրանք նաև կարող են առաջարկներ ներկայացնել և ներգրավվել լոբբինգային գործունեության մեջ, մասնակցելով գենդերային բյուջետավորման գծով քաղաքական կամքի ձևավորման և կառավարության պատասխանատվության ավելացման գործընթացում:

## ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

### *Հետազոտողներ և փորձագետներ*

Գենդերային բյուջետավորումը պահանջում է մանրակրկիտ ու խորը հետազոտական աշխատանք ու վերլուծություն: Ուստի անգնահատելի է նաև գիտական աշխատողների լուման, մասնավորապես գործիմացության, գենդերային ազդեցությունների գնահատման, մեթոդաբանության և ցուցանիշների մշակման, բյուջետային արդյունքների ստուգման և պետական պաշտոնյաների վերապատրաստման հարցերում:

Նորվեգիայում, օրինակ, որպես կառավարության կողմից իրականացվող գենդերային բյուջետավորման քաղաքականության մաս, աշխատանքներում ներգրավվել էին արտաքին փորձագետներ, որոնք գնահատում էին ՓՄՁ-ների և երիտասարդների որոշ սահմանային խմբերի գծով իրականացվող պետական ծրագրերի գենդերային ազդեցությունը: Միջազգային փորձի տարածման, քաղաքական շահագրգռվածության խթանման ն ընդհանուր առմամբ գենդերային բյուջետավորման գծով խորհրդատվության տրամադրման նպատակով ներգրավվել էին նաև միջազգային փորձագետներ: Տեղական և շրջանային մակարդակով աշխատանքներում մասնակցել էին տեղական փորձագետներ, որոնք մշակել էին գենդերային իրավահավասարության ռազմավարության և բյուջետավորման գծով տեղական ծրագրեր, այդ թվում՝ վարչական անձնակազմի վերապատրաստման, գործընթացի փաստաթղթային ձևակերպման և գնահատման ու ձեռք բերված փորձի հիման վրա ուղեցույցերի մշակման գծով:

Բելգիայում դաշնային «գենդերային բյուջետավորման» ենթածրագիրը հանդիսանում էր ավելի ընդարձակ գենդերային իրավահավասարության ռազմավարության մաս: Այն իրականացվում էր նույնանման կառուցվածքով, հիմնվելով ինչպես գիտական աշխատողների, այնպես էլ դաշնային կառավարության աշխատակազմի փորձի և գիտելիքների վրա: Ծրագիրը բաղկացած էր երեք փոխկապակցված փուլերից՝ ուսուցում, պրակտիկ հետազոտում և տեղեկատվության տարածում, որոնց ընթացքում համապարփակ յուրացվեցին փորձագետների գիտելիքներն ու փորձը: Մոտեցումների և գործիքների վերաբերյալ գիտելիքը և փորձը փոխանցվում էր ինտերակտիվ ուսուցման դասընթացների ընթացքում, որոնք համատեղ կազմակերպվել էին գենդերային և բյուջետավորման հարցերով զբաղվող պաշտոնյաների համար: Պրակտիկ հետազոտման փուլում ընտրվել էին մի շարք ճյուղային ոլորտներ և փորձագետները ցույց տվեցին թե ինչպես այդ ոլորտներում կարելի է կիրառել գենդերային բյուջետավորման որոշ մոտեցումներ և գործիքներ, նշելով քաղաքականության մշակման, իրականացման և արդյունավետության առումով վերջինիս կարևորությունը: Քանի որ ծրագրի իրականացման ողջ ընթացքում կարիք էր առաջանում օգտվելու հասանելի և հեշտ ընկալելի տեղեկատվությունից, փորձագետները նաև կազմել էին ամփոփ ձեռնարկ, որը շատ հարմար գտնվեց պետական պաշտոնյաների համար:

### *Միջազգային կազմակերպություններ*

Այն բանից հետո, երբ ՄԱԿ-ի կողմից 1995 թ. Պեկինում կազմակերպված Կանանց հարցերով 4-րդ Համաշխարհային համաժողովում ընդունված Գործողությունների ծրագրում կոչ արվեց, որպեսզի կառավարությունները պարբերաբար դիտարկեն պետական հատվածի ծախսերը և ապահովեն բյուջեի ծախսերում գենդերային իրավահավասարության դիրքորոշումը, որի արդյունքում գենդերային բյուջետավորումը միջազգայնորեն ճանաչվեց սեռերի իրավահավասարությանը միտված ռազմավարություն, գենդերային բյուջետավորումը գերակա ուղղություն դարձավ մի շարք երկրներում և միջազգային կազմակերպություններում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդում, Եվրամիությունում և Հյուսիսային երկրների նախարարների խորհրդում: Միջազգային կազմակերպությունները կարևոր դեր են խաղում՝ գենդերային բյուջետավորման հարցերով հուշագրերի, որոշումների և ուղեցույցերի ընդունման և տարածման միջոցով, որոնց հիման վրա սահմանվում են միջազգային նորմատիվները: Նրանք նաև բարձրացնում են իրազեկվածությունը և տրամադ-

րում հետազոտությունների համար անհրաժեշտ տեղեկատվություն և տեխնիկական օժանդակություն: Մասնավորապես գենդերային բյուջետավորման սկզբնական փուլերում օգտակար նյութերի և փաստարկների միջոցով նրանք խրախուսում են ազգային ծրագրերի մշակմանը: Այսպես, մինչ այդ, ոլորտում հիմնական աշխատանքների մեկնարկումը, գենդերային բյուջետավորման սահմանման և անհրաժեշտ տեղեկատվության ամփոփման նպատակով Եվրոպայի խորհուրդը կազմավորեց անկախ փորձագետների խումբ, հաշվի առնելով տարբեր միջազգային կազմակերպությունների միջև իրականացվելիք լրացուցիչ աշխատանքը: Անկախ փորձագետների խումբը տվեց գենդերային բյուջետավորման սահմանումը[10]: Այս սահմանումն ընդունվեց և ընդգրկվեց այլ միջազգային կազմակերպությունների աշխատանքներում, այդ թվում` 2003 թ. հուլիսի 3-ին Եվրոպական խորհրդարանի կողմից հաստատված *Գենդերային բյուջետավորում` գենդերային հեռանկարով պետական բյուջեների մշակման հարցերով* Որոշման մեջ: Անկախ փորձագետների աշխատանքի արդյունքում եվրոպայի խորհուրդը 2004 թ. կազմավորեց Մասնագետների խումբ, որը մշակեց գենդերային բյուջետավորման հարցերով հաշվետվություն միտված անդամ երկրներում նոր գաղափարի շուրջ իրազեկվածության բարձրացմանը և տրամադրեց կոնկրետ ծրագրերի օրինակներ, որոնք լուսաբանում են միջոցների նպատակային օգտագործման հարցում գենդերային բյուջետավորման օժանդակության տարբեր ուղիները:

Միջազգային կազմակերպությունները կարող են նաև նպաստել գենդերային բյուջետավորման ծրագրերի պատրաստմանը ազգային մակարդակով, օրինակ սեփական գործունեությունում գենդերային բյուջետավորումը կիրառելու միջոցով, ինչպես նաև համատեղ ծրագրերի կազմակերպման և փորձի փոխանակման միջոցով, առաջացնելով քաղաքական հետաքրքրություն գենդերային բյուջետավորման վերաբերյալ: Այդ կապակցությամբ պետք է ընդգծել, որ 1998 թ. սկսած Կանանց և գենդերային հավասարության հարցերով միջգերատեսչական հանդիպման Ծրագրային բյուջետավորման գործընթացում սեռերի իրավահավասարության հարցերով աշխատանքային խումբը (IAMWGE) իրականացրեց մի շարք նախաձեռնություններ, այդ թվում ՄԱԿ-ի համակարգի դիտարկում և ծրագրային բյուջեում գենդերային իրավահավասարության 10 պրակտիկ օրինակների խորացված ուսումնասիրություն: Հաշվետվությունները հրապարակվել են *«Միավորված Ազգերի համակարգի ներքո իրականացվող ծրագրային բյուջեի գործընթացում գենդերային իրավահավասարեցումը որպես գլխավոր ուղղություն» աշխատանքում, այդ թվում`«Փուլ 1-ին` երկկողմանի դոնորների, մասնավոր հատվածի և այլոց կողմից գենդերային հեռանկարների իրավահավասարության գծով ձեռնարկվող միջոցառումների գույքագրում»* հոդվածում: Այդ թեմայի շուրջ վերջին հրապարակումն իրականացվել է ՄԱԿ-ի կողմից 2004 թ. փետրվարին:

Միջազգային կազմակերպությունները կարող են նաև նպաստել ազգային մակարդակով ծրագրերի կազմմանը: Այսպես Բելգիայի գենդերային բյուջետավորման ծրագիրը, որը ներկայացված է «Գենդերային բյուջետավորման ծրագրերը Եվրախորհրդի անդամ երկրներում» հաշվետվության 3-րդ Բաժնում, իրականացվել է 2002 թ. ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամի (UNIFEM), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) և Հյուսիսային երկրների նախարարների խորհրդի կողմից Բրուսելում համատեղ կազմակերպված *«Տնտեսական և ֆինանսական կառավարման հզորացում` դեպի գենդերային միտվածությամբ բյուջետավորում»* գագաթաժողովի արդյունքում:

### *Հասարակական կազմակերպություններ*

Թեպետ քաղաքացիական հասարակության կողմից առաջարկվող ծրագրերը կարող են տուժել միջոցների և տվյալների սահմանափակության պատճառով, դրանց և կառավարության ծրագրերի միջև տարբերությունը ստեղծում է բյուջեի անկախ մոնիտորինգի և գնահատման անչափ կարևոր հեռանկարներ: Հասարակական կազմակերպությունները կոչված են իրականացնել հետազոտում և ուսուցում մատուցել պետական պաշտոնյաներին: Բացի այդ քաղաքացիների կողմից բյուջեի գծով տեղեկատվության տրամադրումը որոշումներ կայացնողներին թույլ է տալիս ընդլայնել տեղեկատվական բազան:

### *Արհմիություններ և գործատուների կազմակերպություններ*

Արհմիությունները և գործատուների կազմակերպությունները կարևոր դեր են խաղում միավորյալ կամքի կազմակերպման և արտահայտման հարցերում, ուստի դրանք նաև կարող են զգալիորեն նպաստել գենդերային բյուջետավորմանը քաղաքականության մշակման գործընթացներում իրենց ներգրավվածության սահմաններում:

[10] Տես Հաշվետվության մաս I-ը:

Գենդերային բյուջետավորման ծրագրերը կարող են պատրաստվել ինչպես կառավարության ներքո, այնպես էլ նրանից դուրս: Միևնույն ժամանակ բյուջետային գործընթացի փոփոխման հնարավորությունները կախված են կառավարության հաստատումից: Նման դեպքերում մասնավորապես կարևորվում է ֆինանսների նախարարության ներգրավվածությունը: Առաջարկությունը կարող է ներկայացվել կառավարության (վերջինիս ներքո պատասխանատու անձանց կամ գենդերային հավասարության հարցերով պատասխանատու մարմնի), խորհրդարանի, արտաքին դոնորի կամ հասարակական խմբերի կողմից: Այն կարող է ներկայացվել ելնելով բյուջետային արդյունավետության բարձրացման և/կամ գենդերային հավասարության ապահովման նկատառումներից:

Գենդերային բյուջետավորումը ներառում է քաղաքականության բոլոր ոլորտները, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ազդում է գենդերային հարաբերությունների վրա: Հաճախ առաջին քայլը կայանում է գենդերային ապախտորագված տվյալների գծով կարիքների գնահատման և հետագա գենդերային վերլուծության համար տվյալների հավաքագրման ուղղությամբ քայլերի իրականացման մեջ:

Այսպես Բելգիայում դաշնային վարչակազմի բոլոր գերատեսչություններում տեղեկատվական ծանուցման առաջին փուլից հետո առանձնացվեցին առավել խորքային վերլուծության համար նախատեսված տեղեկատվական փաթեթները: Բոլոր գերատեսչություններ այցելեցին երկու փորձագետներ, որոնք կատարեցին բոլոր նախկին և ընթացիկ ծրագրերի հաշվառումը, գրանցեցին առկա և չափարկելի գենդերային ապախտորագված տվյալների ինչպես քանակական այնպես էլ որակական տեսակները, ինչպես նաև գնահատեցին գերատեսչությունների անձնակազմի պատրաստակամությունն ավելի խորը ներգրավվելու գենդերային բյուջետավորման աշխատանքներում:

Ելնելով ազգային և տարածքային պայմաններից, գենդերային բյուջետավորման ծրագրերը պետք է հաշվի առնեն բյուջետային գործընթացի բոլոր քայլերը և գործընթացի ամբողջ ընթացքում նպաստեն գենդերային բյուջետավորման իրականացմանը, այդ թվում՝ պլանավորման, նախապատրաստման, իրականացման, ստուգման և գնահատման միջոցով:

### *Բյուջեի պլանավորում և կազմում*

Ընդհանուր առմամբ, թեպետ բյուջետային գործընթացի առաջին փուլում ներգրավվում են բոլոր նախարարությունները, այն պետք է առաջնորդվի ֆինանսների նախարարության կողմից: Գենդերային բյուջետավորման ծրագրերը մեկնարկվում են գենդերային քաղաքականությանը բնորոշ նպատակների և պլանավորված քաղաքականությունների անմիջական ազդեցության գնահատման ցուցանիշների սահմանմամբ: Գենդերային միտվածությամբ միջնաժամկետ տնտեսական քաղաքականության շրջանակը և գենդերային ապախտորագված շահառուների գնահատումը արդյունավետ գործիքներ են հանդիսանում բյուջեի պլանավորման և պատրաստման համար: Պլանավորման և պատրաստման փուլերի կարևոր մաս է հանդիսանում բյուջետային գենդերային նպատակների և ցուցանիշների ծրագրի սահմանումը:

### *Բյուջեի հաստատում*

Բյուջեն հաստատվում է խորհրդարանի կողմից, որն այդ գործընթացում կարող է ունենալ իր ներդրումը, օրինակ՝ պահանջելով գենդերային բյուջետավորման գործիքների և մեթոդների տրամադրում և իրականացնելով ամբողջ բյուջեի կամ նրա մասերի գնահատում գենդերային հիմքերի վրա:

### *Բյուջեի կատարում*

Բյուջեն կատարվում է գործադիրի կողմից համաձայն օրենքի և ընդհանուր ուղեցույցերի: Միևնույն ժամանակ բյուջեի կատարումը նաև նախատեսում է որոշումների կայացում: Անհրաժեշտ է դիմել համապատասխան քայլերի, որպեսզի որոշումների կայացման գործընթացը հաշվի առնի սեռերի հավասարության սկզբունքը հենվելով գենդերային սկզբունքով ծրագրերի կամ քաղաքականության գնահատման վրա:

Բյուջեի կատարման գործընթացում ներգրավված են նաև ստորին օղակի պաշտոնյաները՝ քաղաքական և վարչական մարմինների, պետական գործակալությունների, հասարակական կազմակերպությունների և պետական ֆինանսավորում ստացող հետազոտական հիմնարկների անձնակազմը: Կենտրոնական կառավարության կողմից միջոցների հատկացումը պետք է միշտ ուղեկցվի շահավետ գենդերային արդյունք ապահովող հրահանգներով:

### *Բյուջեի ստուգում*

Բյուջեի ստուգումը որպես կանոն կատարվում է կառավարության և խորհրդարանի կողմից: Ստուգումը հիմնականում միտված է արդյունավետության գնահատմանը: Գենդերային բյուջետավորումը նշանակում է, որ բյուջեի արդյունավետության և նպատակայնության ստուգման ընթացքում այն իրականացվում է գենդերային հավասարության ապահովման տեսանկյունից, հիմնվելով գենդերային բյուջետավորման ծրագրերում սահմանված հատուկ նպատակների

և ցուցանիշների վրա և որպես լրացուցիչ ստուգման սկզբունք սահմանելով գենդերային իրազեկվածությունը: Գենդերային իրազեկվածությամբ բյուջետային հաշվետվությունները շահավետ գործիք են հանդիսանում ամբողջ ստուգման ընթացքում գենդերային հեռանկարի կիրառումն ապահովելու համար:

### *Բյուջեի գնահատում*

Գնահատումը կարելի է սահմանել որպես «կառավարության միջամտությունների վարչարարության, ներդրման, արդյունքների, արժանիքների, գների և արժեքների մանրակրկիտ հետահայաց գնահատում, որն իր ազդեցությունն է ունենում հետագա պրակտիկ գործողություններում և իրավիճակներում» (Evert Vedung, 1997 թ.): Կարևոր է գնահատման ողջ գործընթացի ժամանակ ապահովել գենդերային և գենդերային հավասարության ազդեցությունների տեսանելիությունը: Գնահատման ժամանակ մասնավորապես դիտարկվում է գենդերային հետևանքները ծախսերի և եկամուտների վրա և տեսանելի է դարձնում գենդերային ազդեցությունները բյուջեի հանդեպ: Գնահատման գործընթացը շատ երկրներում ինստիտուցիոնալ հիմքերի վրա չի դրված: Գենդերային միտվածությամբ գնահատում անցկացնելու համար անհրաժեշտ է մշակել նոր ինստիտուցիոնալ գործընթացներ, որոնք կարող են պահանջել արտաքին փորձագետների օժանդակություն: Գնահատման համար կարևոր դեր են խաղում գենդերային ապախոշորացմամբ իրականացվող շահառուների գնահատումը, պետական ծախսերի ամբողջական վերլուծությունը և հարկային քաղականության վերլուծությունը: Ուսումնասիրության արդյունքների օբյեկտիվ վերլուծությունը չափազանց կարևոր է քանի որ այն հիմքեր է ստեղծում հետագա պլանավորման և նախապատրաստման համար:

Բյուջետային ցիկլի տարբեր փուլերում դիտարկվող հարցերի ցուցակը ներկայացված է սույն Բաժնի «Զ» կետի աղյուսակում:

## C. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ[11]

Մինչդեռ պետական ծախսերը անմիջապես կապված են կոնկրետ քաղաքականությունների ոլորտների հետ, պետական եկամուտները կազմում են յուրովի քաղաքական ոլորտ: Ուստի անհրաժեշտ է տարանջատել ծախսային և եկամտային վերլուծությունը:

Գենդերային բյուջետավորման գործիքները և մեթոդները արտացոլում են գենդերային բյուջետավորման երեք հիմնական քայլերը, որոնք կարելի է ամփոփել հետևյալ ձևով.

**Ծախսային**

i. համապատասխան քաղաքականությունների և բյուջետային հատկացումների կոնկրետ ոլորտում գենդերային հարաբերությունների (դրանցից յուրաքանչյուրը կարող է հանդիսանալ վերլուծության սկզբնակետը),

ii. այդ ոլորտում գենդերային միտվածությամբ քաղաքականությունների մշակում և դրանց վերածում բյուջետային հատկացումների,

iii. գենդերային միտվածությամբ քաղաքականության արդյունքների ուսումնասիրություն:

**Եկամտային**

i. կոնկրետ եկամուտների ազդեցությունը գենդերային հարաբերությունների վրա,

ii. գենդերային միտվածությամբ եկամտային քաղաքականության մշակում և իրականացում,

iii. գենդերային միտվածությամբ եկամտային քաղաքականության արդյունքների ուսումնասիրություն:

Ներկայումս գոյություն ունեն գենդերային բյուջետավորման զանազան գործիքներ և մեթոդներ: Դրանց ընտրությունը կախված է առկա ռեսուրսներից, գենդերային բյուջետավորման ծրագրի ծավալից և ուղղվածությունից և իրականացվող գենդերային բյուջետավորման ծրագրի ընթացիկ կարգավիճակից:

Գենդերային բյուջետավորման գործիքները և մեթոդները անշուշտ պետք է ուսումնասիրեն ոչ միայն ծախսերի և եկամուտի բաշխումը, այլ նաև վերջինիս ազդեցությունը զբաղվածության, եկամտի բաշխման, խնամքի տնտեսության (մասնավորապես վճարվող և անվճար աշխատանքի բաշխման) և ժամանակի սպառման վրա: Նրանք նաև պետք է հաշվի առնեն հատուկ գենդերային կարիքներն ու ցանկությունները, ինչպես նաև քաղաքականության միջոցառումների գենդերային ազդեցությունը և բյուջեի ներդրումը գոյություն ունեցող գենդերային խնդիրների հաղթահարման հարցում:

Գենդերային բյուջետավորման շատ գործիքներ և մեթոդներ հիմնված են լայնորեն կիրառվող տնտեսական համահարթեցման մոտեցումների և մեթոդների վրա, որոնք այնուհետև գենդերային

[11] Գենդերային բյուջետավորման գործիքների և մեթոդների մասին կարող եք նաև ծանոթանալ Budlender, Debbie/Sharp, Ronda/Allen, Kerri (1998). *Ինչպես կատարել գենդերային միտվածությամբ բյուջեի վերլուծություն՝ ժամանակակից հետազոտում և պրակտիկա*, London/Canberra; Elson (1999). *Համագործակցության երկրների գենդերային միտվածությամբ բյուջետային ծրագրեր. Հիմնարար փաստաթղթեր:* London: Commonwealth Secretariat; UNIFEM (2002). *Գենդերային բյուջեի ծրագրեր. ռազմավարություններ, գաղափարներ և փորձ, ինչպես նաև գրականության ցուցակում թվարկված միջազգային գործակալությունների էլեկտրոնային կայքերից:* (Հավելված IV).

հեռանկարի արմատավորման արդյունքում ենթարկվում են ձևափոխության, լայնացնելով շրջանակը կամ կենտրոնանալով գենդերային խնդիրների վրա: Կախված ազգային, տարածքային կամ տեղական հանգամանքներից գենդերային բյուջետավորման ծրագրերը պետք է ավելի զարգացվեն կատարելագործելով գործիքներն ու մեթոդները և համապատասխանեցնելով դրանց կոնկրետ միջավայրին:

### *Գենդերային հարաբերությունների վերլուծություն*

Գենդերային վերլուծության արմատավորումը բյուջեի պլանավորման և գնահատման գործընթացում պահանջում է գործողությունների, արդյունքների և ազդեցությունների հնարավոր գենդերային շրջանակների հայտնաբերում[12]: Մասնավորապես գենդերային հիմքով գնահատման գործիքներ են մշակվել Շվեդիայում (3 R Method and GERAC)[13] և Հոլանդիայում[14]: 1997 թ. Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված Գենդերային իրավահավասարության ռազմավարության ուղեցույցը հիմնվում է նույն մոտեցման վրա: Գենդերային բյուջետավորումը նաև ընդգրկում է գենդերային վերլուծության համար հիմնարար դեր խաղացող հարցերի պատրաստում և դրանց փոխկապակցում պետական ծախսերի և եկամուտների հետ: Այդ հարցերը վերաբերում են.

- Ծախսերի և եկամուտների գծով ստացող, շահառու կամ ներդրող հանդիսացող կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների մասնաբաժնին,
- Ռեսուրսների, այդ թվում՝ դրամի, իշխանության դիրքերի, հանգստի ժամանակի, վճարովի կամ անվճար աշխատանքի գենդերային բաշխման երկարաժամկետ և կարճաժամկետ հետևանքներին:

Պարզեցված եզրակացություններից խուսափելու համար կանանց և տղամարդկանց հաշվարկումն ըստ ներգրավվածության աստիճանի ու ֆինանսական և այլ ռեսուրսների հատկացման/բաշխման պետք է համալրել որակական վերլուծությամբ: Որակական վերլուծությունը պետք է հաշվի առնի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական կարգավիճակը և խտրականության առանցքը:

### *Ծախսերի ու եկամուտների վերլուծություն*

Կոնկրետ հատվածում կանանց և տղամարդկանց կամ աղջիկների և տղաների ներկա իրավիճակը վերլուծելու կամ քաղաքականությունների ու քաղաքական միջոցառումների գենդերային արդյունքները գնահատելու նպատակով մշակվել էին հավելյալ միջոցառումներ, որոնք փոխկապակցում են բյուջեները քաղաքականությունների հետ, դիտարկելով դրանք տարբեր տեսանկյուններից (եկամուտներ, ծախսեր, հանրային ծառայություններ կամ ժամանակի սպառում):

Գենդերային ապախոշորացմամբ եկամուտների բաշխման վերլուծությունը հետազոտական մեթոդ է, որը դիտարկում է կանանց և տղամարդկանց կողմից վճարվող ուղղակի և անուղղակի հարկերը և օգտագործման դիմաց կատարվող վճարները:

Գենդերային ապախոշորացմամբ ծախսերի բաշխման վերլուծությունը սովորաբար համեմատում է կոնկրետ ծրագրով նախատեսված պետական ծախսերը տնային տնտեսությունների հարցումների տվյալների հետ, որը թույլ է տալիս պարզել ծախսերի բաշխումը կանանց և տղամարդկանց կամ աղջիկների ու տղաների միջև:

Գենդերային ապախոշորացմամբ շահառուների գնահատումը հետազոտման մեթոդ է, որը նախատեսում է իրական կամ հնարավոր շահառուների հարցում այն բանի մասին, թե որքանով են պետական ծրագրերը և/կամ հանրային ծառայությունները համապատասխանում իրենց կարիքներին, ցանկություններին և նախընտրություններին:

Ժամանակի սպառման հարցում բյուջեի ազդեցության գենդերային ապախոշորացմամբ վերլուծությունը դիտարկում է ազգային բյուջեի և տնային տնտեսություններում ժամանակի սպառման միջև կապը: Այն թույլ է տալիս է քաղաքականության վերլուծություններում հաշվի առնել կանանց կողմից կատարվող անվճար աշխատանքի վրա ծախսված ժամանակը:

Գենդերային ազդեցության գնահատումը դա բյուջեի փաստացի կատարողականի և բյուջետային առաջարկների սպասվելիք արդյունքների գնահատում է, որը հավանաբար գենդերային բյուջետավորման ամենաընդգրկուն և բարդ գործիքն է, քանի որ այն դիտարկում է բյուջետային հետևանքները կարճաժամկետ և երկարաժամկետ ռեսուրսների (այդ թվում՝ ժամանակի) բաշխման և օգտագործման, ինչպես նաև գենդերային դերերի ու նորմերի վրա: Այդ իսկ պատճառով գենդերային ազդեցության գնահատման համար պահանջվում են ոչ միայն տվյալներ շուկայական և խնամքի տնտեսության ու վճարովի և անվճար աշխատանքի, այլ նաև հասարակության ներքո գոյություն ունեցող գենդերային ստերեոտիպների, յուրահատուկ գենդերային ընկալումների, կանոնների, խորհրդանիշների, ավանդույթների և խտրա-

[12] Kate Bellamy, Background Paper on Gender Budgeting for the Council of Europe Informal Group of Experts on Gender Budgeting. November 2002.

[13] http://naring.regeringen.se/inenglish/pdf/N2001_052.pd(Just Progress! Applying gender mainstreaming in Sweden) www.svekom.se/jamstalldhet/jamverkstan.pdf www.svekom.se/jamstalldhet/pdf/aktivt_jamstalldhetsarbete.pdf )

[14] Նիյմեգենի համալսարանում Միեկե Վերլոի կողմից մշակված SMART-գործիք և Գենդերային ազդեցության վերլուծության մեթոդ:

կանության դրսևորումների մասին:

Ընդհանուր առմամբ դրանք հանդիսանում են փաստացի արդյունքների վերլուծության մեթոդներ (թեպետ գենդերային ազդեցության գնահատումը կարող է նաև կիրառվել որպես սպասվելիք արդյունքների գնահատում), որոնք թույլ են տալիս գիտելիքներ ձեռք բերել գենդերային ճեղքվածքների մասին: Այդ մեթոդների կիրառումը կարող է թույլ տալ ի հայտ բերելու քողարկված գենդերային անհավասարությունները և մատնանշել քաղաքական գերակայությունների և ծրագրերի վերանայման անհրաժեշտությունը:

### *Գենդերային դյուրըմբռնվածությամբ քաղաքականությունների մշակում*

Գենդերային հարցերով միջնաժամկետ տնտեսական քաղաքականության ծրագիրը և այդ ծրագրի գնահատումը դա այն մեթոդներն են, որոնցով դիտարկվում է քաղաքականության մշակումը և զարգացումը և ապահովվում է բյուջեի պլանավորման և պատրաստման հենքը: Քանի որ շատ երկրներում առանց այդ էլ կազմվում են միջնաժամկետ տնտեսական քաղաքականության ծրագրեր և իրականացվում է այդ ծրագրի գնահատումը, գենդերային բյուջետավորման հետ կապված հիմնական փոփոխությունը կայանում է այդ ծրագրում գենդերային հեռանկարի ներդրման մեջ: Առաջարկվող երկու մեթոդներն էական դեր ունեն գենդերային բյուջետավորման համար և պետք է պարբերաբար կիրառվեն:

<u>Գենդերային հարցերով միջնաժամկետ տնտեսական քաղաքականության ծրագիրը</u> միտված է միջնաժամկետ տնտեսական ծրագրերի հիմքը կազմող տնտեսական մոդելներում գենդերային հեռանկարի արմատավորմանը: Այս գործիքը ենթադրում է հիմնավորում է արտահայտված գենդերային իրավահավասարության քաղաքականության առկայությունը միջնաժամկետ տնտեսական քաղաքականության ծրագիրը կազմելիս:

<u>Գենդերային հարցերով քաղաքականության գնահատումը</u> կատարվում է տարբեր ծրագրերի և ծրագրային փաթեթների քաղաքականությունների զննման միջոցով, անդրադառնալով այդ ծրագրերում առկա զանազան բացահայտ և քողարկված գենդերային խնդիրներին: Այն հարցականի տակ է դնում այն ենթադրությունը, որ քաղաքականությունների արդյունքները «գենդերային տեսանկյունից չեզոք են», փոխարենը ուսումնասիրելով թե որքանով քաղաքականությունները և դրանցից բխող միջոցների հատկացումը կարող են ավելացնել կամ նվազեցնել գենդերային անհավասարությունները: Այսպես ՄԹ-ի Կանանց բյուջետային խմբի կողմից իրականացված հարկային արտոնությունների քաղաքականության վերլուծությունը նպաստեց Աշխատող ընտանիքի հարկային արտոնության, Երեխաների հարկային արտոնության և Զբաղվածության հարկային արտոնության բնագավառներում կիրառվող քաղաքականությունների վերանայմանը:

### *Գենդերային դյուրըմբռնվածությամբ քաղաքականությունների արտացոլումը բյուջեի հոդվածներում*

Գենդերային հարցերով բյուջետային նպատակների ծրագրերը, հենանշումը և գենդերային հարցերով բյուջետային հաշվետվությունները դա բյուջետային գործընթացի հետ սերտորեն փոխկապակցված մեթոդներ են, որոնց նկատմամբ բյուջեն ելակետ է հանդիսանում:

Բյուջետային նպատակների ծրագրերը և հենանշումը հանդիսանում են նախնական գնահատման գործիքներ, մինչդեռ գենդերային հարցերով բյուջետային հաշվետվությունները կարող են կիրառվել միայն փաստացի արդյունքների հիման վրա: Բյուջետային նպատակների ծրագրերը գոյություն ունեն երկրների մեծ մասում, ուստի նման դեպքերում գենդերային բյուջետավորման համար բավական է միայն վերանայել առաջնահերթությունները և նպատակները:

Գենդերային հարցերով բյուջետային նպատակների ծրագրի մշակումը բյուջեի պլանավորման և պատրաստման կարևոր մասն է: Այն ենթադրում է ընդհանուր գենդերային հավասարության նպատակների սահմանում, որոնք պետք է պահպանվեն կամ առնվազն մեկնարկվեն բյուջետային միջոցների շնորհիվ: Թեպետ բյուջեն սովորաբար ներառում է մեկ տարվա շրջան, նպատակների ծրագիրը պետք է սահմանի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներ:

<u>Բյուջետային նպատակների ծրագրերը</u> նաև հիմք են հանդիսանում ստուգման և գնահատման համար: Ուստի հնարավորության դեպքում նպատակների հստակ սահմանումը և որակավորումը կարևոր քայլեր են հանդիսանում փոփոխությունները չափարկելի հիմքերի վրա դնելու համար: Մյուս կողմից դրա արդյունքում չպետք է անտեսվեն նաև ոչ-դրամական նպատակները:

<u>Հենանշումը</u> նշանակում է բյուջետային փոփոխությունների գնահատման նպատակով ստուգման կետերի ձևավորում: Այն ներառում է գենդերային հարաբերությունների առանցքային պարագաները ներկայացնող ցուցանիշների մշակում և մասնագրում, որոնք հանդիսանում են բյուջետային միջոցառումների հետևանքների ուսումնասիրության նորմատիվներ: Հետևաբար հենանշում կատարելու համար անհրաժեշտ է հարաբերել բյուջե-

տային փոփոխությունները կոնկրետ սոցիալական երևույթի հետ: Դա հանդիսանում է գնահատման կարևորագույն նախապայմանը: Արդյունքում ընտրված ցուցանիշները հստակ կարտահայտեն բյուջետային նպատակների ծրագիրը:

Գենդերային հարցերով բյուջետային հաշվետվությունը դա կառավարության հաշվետվությունն է, որը դիտարկում է բյուջեն և ամփոփում վերջինիս հետևանքները գենդերային հավասարության տեսակետից: Այդ գործընթացի ներքո կարող են կիրառվել արդեն իսկ նշված ցանկացած գործիքներ և մեթոդներ: Այն պահանջում է պատասխանատվության զգացումի բարձր աստիճան և պետական հատվածի բոլոր մարմինների՝ նախարարությունների և գերատեսչությունների միջև սերտ կոորդինացում ճյուղային բյուջեների գենդերային հետևանքների գնահատման գործընթացում: Պետական բյուջեի կատարողական հաշվետվության զուգահեռ բյուջեի ծախսերի և եկամուտների գենդերային հետևանքների վերաբերյալ բյուջետային հաշվետվություններ են ներկայացվում օրինակ Ֆրանսիայի կառավարության կողմից: Մեկ այլ նմանատիպ օրինակ է Շվեդիայի բյուջետային հաշվետվությունը կանանց և տղամարդկանց միջև տնտեսական միջոցների բաշխման վերաբերյալ, որը կցվում է պետական բյուջեի ֆինանսական կանխատեսմանը: Այն ամփոփում է տնտեսական իրավիճակը և սոցիալական պաշտպանության համակարգի հետևանքները կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի վրա:

### *Գենդերային դյուրըմբռնվածությամբ բյուջեի կապարում*

Գենդերային բյուջետավորման գործընթացի հաջողությունն ապահովելու համար նրա բոլոր մասնակիցները կարող են օգտվել իրականացման գործիքներից, ինչպես նաև նախնական հրահանգներից և ուղեցույցերից: Այդ գործիքները թույլ են տալիս ծանոթանալ թե ինչպես կարելի է արմատավորել գենդերային հեռանկարը բյուջետային գործընթացի յուրաքանչյուր փուլում: Հրահանգների և ուղեցույցերի դերը հատկապես կարևորվում է վարչակազմում և այն պետք է ուղեկցվի հատուկ գենդերային ուսուցմամբ: Իրականում չափազանց օգտակար կլինի հատուկ ուղեցույցեր ունենալ բյուջետային գործընթացի յուրաքանչյուր փուլի համար:

Գենդերային հարցերով պրակտիկ ուղեցույցերը պետք է ապահովեն գենդերային դյուրըմբռնվածությամբ բյուջեի կատարումը: Ուղեցույցերը պետք է բացահայտեն գենդերային հավասարության ներդաշնակությունը բյուջեի այլ նպատակների և սկզբունքների հետ և սահմանեն հստակ առաջնահերթություններ: Այդ ուղեցույցերը կարող են նաև ներառել յուրահատուկ գենդերային քանակական թիրախներ բյուջեի յուրաքանչյուր միավորի համար:

Միևնույն ժամանակ կարևորվում է գենդերային հարցերի շուրջ հատուկ վերապատրաստման իրականացումը, որը թույլ է տալիս ապահովել իրականացման գործընթացի համապատասխանեցումը բյուջեի գենդերային հավասարության հարցերով հիմնարար սկզբունքների հետ: Այն դեպքերում, երբ իրականացման գործընթացում ներգրավված են արհմիությունները կամ գործատուների միությունները, կարող է անհրաժեշտություն առաջանալ մշակելու հատուկ ուղեցույց իրենց գործունեության կոնկրետ ոլորտի համար:

### *Գենդերային դյուրըմբռնվածությամբ բյուջեի գնահապում*

Գենդերային տեսակետից բյուջեի ստուգման և գնահատման ուղեցույցերը տեղեկատվություն են տրամադրում այն մասին թե ինչպես անցկացնել ստուգումը և գնահատել բյուջեն գենդերային ազդեցության տեսակետից: Նման ուղեցույցերը նպաստում են բյուջետային նպատակների պատշաճ կատարմանը, որպես կիզակետ ընդունելով գենդերային հավասարությունը:

Ինչպես և պրակտիկ ուղեցույցերը նրանք պետք է գենդերային հավասարությունը փոխկապակցեն այլ նպատակների և սկզբունքների հետ և սահմանեն հստակ առաջնահերթություններ: Ստուգման և գնահատման գծով հստակ ուղեցույցերը ոչ միայն օժանդակում են գործընթացի մասնակիցներին, այլ նաև երաշխավորում գենդերային հարցերով բյուջետային հաշվետվությունների բարձր որակը:

## D. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

### *Արգելքներ*

Արգելքները կարող են լինել պրակտիկ օրինակ՝ տվյալների կամ համապատասխան գործիքների և գիտելիքների բացակայություն կամ դրանց հիմքում կարող են ընկած լինել կառավարության կամ կառավարության վարչակազմի դիմադրությունը կամ քաղաքական կամքի և ցանկության բացակայությունը: Գենդերային բյուջետավորմանը խանգարող հիմնական հանգամանքը դա անշուշտ բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու կամ գենդերային վերլուծության արդյունքում առաջարկվող ծախսային վերաբաշխումների և հարկային բարեփոխումների իրականացման համար քաղաքական կամքի բացակայությունն է: Այդ մարտահրավերները կարող են լուծվել միայն շարունակական քաղաքական ճնշման և միջազգային պարտավորությունների կատարման արդյունքում: Գենդերային բյուջետավորումը որպես առաջնահերթություն ճանաչելու համար պետք է ձեռնարկվեն ակտիվ քայլեր:

### *Տնտեսագիտական տեսություն, բյուջեի կազմում և գենդերային հավասարություն*

Վերջին ուսումնասիրությունները ավելի ակնհայտ են դրսևորում տնտեսագիտական տեսության դերը տնտեսական քաղաքականության մշակման, հետևաբար բյուջեն կազմելու հարցերում: Տնտեսագիտական տեսությունը ակնհայտորեն անտեսում և թույլ էր տալիս անտեսել գենդերային խնդիրները: Այդ տեսությունը առանց որևէ խնդրի ընդունվում էր տնտեսական քաղաքականություն իրականացնողների կողմից և դրա արդյունքում իրականացվող տնտեսական քաղաքականությունը հակագենդերային էր: Գենդերային հավասարության նկատմամբ մոտեցումների հենքում ընկած էր նմանատիպ ֆորմալ մոտեցում տնտեսագիտական տեսության նկատմամբ: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտ է զարգացնել նոր մտածելակերպ, որը թույլ կտա քննադատության ենթարկել տնտեսագիտական տեսությունը և տեսության ընդանուր սկզբունքները միմյանց հետ համապատասխանեցնելու նոր հնարավորություններ գտնել, խուսափելով խտրականության դրսևորումներից: Այդ տեսանկյունից կարևորվում և խրախուսվում է երկխոսությունը տնտեսագետների և գենդերային փորձագետների միջև:

### *Տեղական գենդերային գործընթացներ*

Գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման հարցում չափազանց դանդաղ առաջընթացի պայմաններում ներկայումս խիստ անհրաժեշտ է ապահովել այն, որ գենդերային բյուջետավորումը չվերածվի դատարկախոսության, այլ իրականացվի ընդհանուր ռազմավարության գործընթացի ներքո և այնպիսի մակարդակով, որը թույլ կտա այն կատարելագործել: Մենք լավ ենք գիտակցում, որ թեպետ գենդերային բյուջետավորման ծրագրեր առաջարկող երկրների թիվը շարունակաբար աճում է, հաճախ այդ ծրագրերի իրականացումը անբավարար է լինում: Որոշ դեպքերում ինչ-ինչ պայմաններից ելնելով իրականացման փուլում այդ ծրագրերն իրենց չեն արդարեցնում և արդյունքում դրանցից հրաժարվում են: Վտանգ կա որ գենդերային իրավահավասարության ռազմավարության շատ դեպքերում միայն թղթի վրա մնալու արդյունքում գենդերային բյուջետավորումը նույնպես կընկալվի որպես ֆորմալ և կարճատև գործողություն: Հաճախ քաղաքացիական հասարակությունն ավելի է ներգրավված լինում գենդերային իրավահավասարության ապահովման և գենդերային բյուջետավորման գործընթացներում քան նրանք, ովքեր իրականում պետք է այնտեղ ներգրավված լինեին: Մինչդեռ կարևոր է, որպեսզի քաղաքացիական հասարակությունը տեղեկանա, թե ինչպես պետք է վերահսկել այդ գործընթացները, փոփոխությունը չի լինի այնքան արդյունավետ, եթե քաղաքականություն իրականացնողները և բյուջե կազմողները չիրականացնեն գենդերային իրավահավասարության ռազմավարությունը և գենդերային բյուջետավորումը:

## E. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Չնայած իր ներուժին և առաջացող հնարավորություններին գենդերային բյուջետավորումը շարունակում է մնալ համեմատաբար նոր ոլորտ, որի կիրառումը եվրոպական երկրներում դեռևս սահմանափակ է և որ կայուն: Կոնցեպտուալիզացիան՝ բյուջետային պարբերաշրջանի տարբեր փուլերի և տարատեսակ բյուջետային գործընթացների մեթոդաբանության, գործիքների և մոտեցումների տեսակետից, ինչպես նաև պրակտիկ իրականացումը դեռևս վերջնականապես չեն ձևավորվել: Անշուշտ այդ հարցերում տարբեր երկրների, տարածաշրջանների և մասնակիցների միջև անհրաժեշտ է փորձի փոխանակում և սերտ համագործակցություն, որն առավել կնպաստի գենդերային մեթոդաբանության և պրակտիկայի զարգացմանը: Դրան կարելի է հասնել միայն ծրագրերի նկատմամբ մոնիտորինգի և գնահատման իրականացման և քաղված դասերի փոխանակման ու յուրացման շնորհիվ:

Ծրագրերը վերահսկելու և գնահատելու համար կարևոր է որպեսզի ծրագրերում ի սկզբանե հստակ սահմանվեն նպատակները (օրինակ՝ իրազեկման, հաշվետվողականության կամ փոփոխությունների իրականացման գործընթացի բարելավում), վերջնական թիրախը, կոնկրետ արդյունքները, նախատեսված գործողությունները, կոնկրետ մոտեցումները, կիրառվող գործիքները և մեխանիզմները, ինչպես նաև անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Այդ շղթայի յուրաքանչյուր տարրը պետք է առավելագույն չափով փոխարկվի օբյեկտիվորեն ստուգվող ցուցանիշների:

Սկզբնական փուլում ծրագրերի մոնիտորինգը և գնահատումը կենտրոնանում է դրանց իրականացման վրա (գործընթացի գնահատում), քանի որ այդ ծրագրերից անհնար է ակնկալել որևէ արդյունք, եթե նրանք լավ կամ ընդհանրապես են իրականացվում: Հիմնական խնդիրներն են.

- արդյոք ծրագրում նախատեսված գործողությունները իրականացվել են այնպես ինչպես նախատեսված էր և եթե ոչ, ապա ինչու,
- ինչպիսի խոչընդոտներ և նպաստավոր հանգամանքներ էին առկա ծրագրի իրականացման ժամանակ,
- արդյոք ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական և մարդկային ռեսուրսները բավարար և համապատասխան էին,
- ինչպիսի արգելքներ և խթաններ էին նկատվում ռեսուրսների հատկացման հարցում,
- արդյոք ֆինանսական և մարդկային ռեսուրսների փոփոխությունները կարող էին հանգեցնել ծրագրի ավելի լավ իրականացմանը,
- արդյոք ձեռք են բերվել ակնկալվող արդյունքները և ազդեցությունները,
- որքանով էին ձեռք բերված արդյունքները և ազդեցությունները պայմանավորված ծրագրով,
- արդյոք իրականացված գործողությունները թույլ էին տալիս հասնել նախատեսված արդյունքներին և ազդեցություններին,
- արդյոք գործողությունների փոփոխությունը կարող էր հանգեցնել ավելի լավ արդյունքների և ազդեցությունների:

Մոնիտորինգի և գնահատման կարևորությունն անշուշտ գերազանցում է այն կոնկրետ ծրագրերի նպատակները, որոնց հանդեպ այն իրականացվում էր: Գործընթացի և ազդեցության գնահատման արդյունքներից առավելագույն օգուտ քաղելու համար կարևոր է որպեսզի դրանք ոչ միայն դիտարկվեն կոնկրետ ծրագրի շրջանակներում, այլ նաև տարածվեն ամբողջ երկրով և տարածաշրջանով մեկ: Այդ նպատակի համար կարելի է ստեղծել մոնիտորինգի և գնահատման արդյունքների տարածման գերազգային ցանց:

***

Գենդերային բյուջետավորման արագ զարգացումը վերջին տարիներին վկայում է վերջինիս մեծ ներուժի մասին գենդերային հավասարության և լավ տնտեսական կառավարման հարցերում: Խումբն ուստի խորհուրդ է տալիս կիրառել գենդերային բյուջետավորումը որպես գենդերային իրավահավասարության, եթե Եվրոպական խորհրդի բոլոր անդամ երկրներում քաղաքականություն իրականացնողները և բյուջե կազմողները զերծ մնան գենդերային իրավահավասարության ռազմավարության և գենդերային բյուջետավորման իրականացումից:

Խումբն նաև խորհուրդ է տալիս արդիականացնել Եվրոպական խորհրդի անդամ երկրներում գենդերային բյուջետավորման ծրագրերի մասին անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով կազմված հարցաթերթիկը, մշակելով և ներառելով նոր մոտեցումներ, որոնց հիման վրա կքարմացվի *Գենդերային բյուջեպավորման* հաշվետվությունը:

## F. ԱՂՅՈՒՍԱԿ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հարցերի այս ցուցակը մասնավորապես վերաբերում է սեռերի իրավահավասարության հարցերով մարմինների կողմից կազմվող ծրագրերին:

| **Բյուջետային գործընթացի փուլեր** | **Հնարավոր հարցեր** |
|---|---|
| ***Բյուջեի պլանավորում և կազմում*** | Ինչպիսի՞ ընթացակարգով է ընթանում:<br>Ի՞նչ տեսակի բյուջետային համակարգ է կիրառվում. բյուջետավորում ըստ մուտքերի, արդյունքների կամ կատարողականի հիման վրա, միջնաժամկետ ծախսային ծրագրեր (հաշվի առնելով բյուջետային համակարգի շարունակական կամ ծրագրավորված բարեփոխումները):<br>Ովքե՞ր են մասնակիցները:<br>Ովքե՞ր են պատասխանատու կոորդինացման համար:<br>Որո՞նք են բյուջեում գենդերային հեռանկարի ներդրման հարցերում ազդեցություն ներգործելու (լոբբինգի) և բանակցելու հնարավորությունները:<br>Արդյո՞ք բյուջեի պլանավորման և պատրաստման գործընթացների մասնակիցները օժտված են անհրաժեշտ գենդերային բանիմացությամբ:<br>Արդյո՞ք բյուջեի պլանավորման և պատրաստման գործընթացներում կիրառվում են գենդերային գիտելիքները:<br>Արդյո՞ք բյուջեում սահմանվել են հատուկ գենդերային նպատակներ:<br>Արդյո՞ք այդ նպատակները վերածվել են օբյեկտիվորեն ստուգելի ցուցանիշների:<br>Ի՞նչ աստիճանով են ապախոշորացվում բյուջեի պլանավորման և պատրաստման համար օգտագործվող տվյալները:<br>Առկա և հասանելի գենդերային ապախոշորացված տվյալներից որո՞նք ներկայումս չեն օգտագործվում:<br>Ինչպիսի՞ մեթոդներ և գործիքներ են առկա և կիրառելի օգտագործվող բյուջետային համակարգի համար (օրինակ՝ քաղաքականության վերլուծություն գենդերային ընդգրկվածության տեսակետից, կատարողական արդյունքների գործառութային շրջանակ, գենդերային ընդգրկվածությամբ միջնաժամկետ տնտեսական քաղաքականության ծրագիր, գենդերային ապախոշորացմամբ շահառուների գնահատում):<br>Արդյո՞ք գենդերային հեռանկարը ներառված է պաշտոնական բյուջեի փաստաթղթում: |
| ***Բյուջեի հաստատում*** | Ինչպիսի՞ ընթացակարգով է ընթանում:<br>Ովքե՞ր են մասնակիցները:<br>Որո՞նք են բյուջեում գենդերային հեռանկարի ներդրման հարցերում ազդեցություն ներգործելու (լոբբինգի) և բանակցելու հնարավորությունները:<br>Արդյո՞ք բյուջեի հաստատման գործընթացի մասնակիցները օժտված են անհրաժեշտ գենդերային բանիմացությամբ (սովորաբար այդ գործընթացը կազմակերպվում է մասնագիտացված խորհրդարանական հանձնաժողովների միջոցով):<br>Ինչպիսի՞ մեթոդներ, գործիքներ և նախնական վերլուծության տվյալներ են տրամադրվում բյուջեի հաստատման գործընթացի մասնակիցներին:<br>Արդյո՞ք գենդերային հեռանկարը ներառված է պաշտոնական բյուջեի փաստաթղթում: |

| | |
|---|---|
| ***Բյուջեի իրականացում և մոնիտորինգ*** | Ինչպիսի՞ ընթացակարգով է ընթանում:<br>Ի՞նչ տեսակի բյուջետային համակարգ է կիրառվում:<br>Ովքե՞ր են մասնակիցները:<br>Ովքե՞ր են պատասխանատու կոորդինացման համար:<br>Որո՞նք են բյուջեում գենդերային հեռանկարի ներդրման հարցերում ազդեցություն ներգործելու (լոբբինգի) և բանակցելու հնարավորությունները:<br>Արդյո՞ք բյուջեի իրականացման և մոնիտորինգի գործընթացների մասնակիցները օժտված են անհրաժեշտ գենդերային բանիմացությամբ:<br>Արդյո՞ք բյուջեի իրականացման և մոնիտորինգի գործընթացներում կիրառվում են գենդերային գիտելիքները:<br>Ինչպիսի՞ գործիքներ և մեթոդներ են ավանդաբար կիրառվում բյուջեի իրականացման գործընթացում:<br>Արդյո՞ք հնարավոր է ներդաշնակեցնել գենդերային հեռանկարը ավանդաբար օգտագործվող մեթոդներում և գործիքներում:<br>Ի՞նչ աստիճանով են ապախոշորացված ներկայումս օգտագործվող տվյալները:<br>Ինչպիսի՞ լրացուցիչ մեթոդներ և գործիքներ կարող են օգտագործվել գենդերային բյուջետավորման համար (օրինակ գենդերային ապախոշորացմամբ նպաստների բաշխվածության վերլուծություն, գենդերային ապախոշորացմամբ եկամուտների բաշխվածության վերլուծություն):<br>Առկա և հասանելի գենդերային ապախոշորացված տվյալներից որո՞նք ներկայումս չեն օգտագործվում:<br>Արդյո՞ք գենդերային հեռանկարը ներառված է պաշտոնական բյուջեի գնահատման փաստաթղթում: |
| ***Բյուջեի գնահատում*** | Ինչպիսի՞ ընթացակարգով է ընթանում:<br>Ի՞նչ տեսակի բյուջետային համակարգ է կիրառվում:<br>Ովքե՞ր են մասնակիցները:<br>Որո՞նք են բյուջեում գենդերային հեռանկարի ներդրման հարցերում ազդեցություն ներգործելու (լոբբինգի) և բանակցելու հնարավորությունները:<br>Ինչպիսի՞ գործիքներ և մեթոդներ են ավանդաբար կիրառվում:<br>Արդյո՞ք հնարավոր է ներդաշնակեցնել գենդերային հեռանկարը ավանդաբար օգտագործվող մեթոդներում և գործիքներում:<br>Ի՞նչ աստիճանով են ապախոշորացված ներկայումս օգտագործվող տվյալները:<br>Առկա և հասանելի գենդերային ապախոշորացված տվյալներից որո՞նք ներկայումս չեն օգտագործվում:<br>Արդյո՞ք գենդերային հեռանկարը ներառված է պաշտոնական բյուջեի ստուգման փաստաթղթում: |
| ***Բյուջեի հաստատում*** | Ինչպիսի՞ ընթացակարգով է ընթանում:<br>Ի՞նչ տեսակի բյուջետային համակարգ է կիրառվում:<br>Ովքե՞ր են մասնակիցները:<br>Որո՞նք են բյուջեում գենդերային հեռանկարի ներդրման հարցերում ազդեցություն ներգործելու (լոբբինգի) և բանակցելու հնարավորությունները:<br>Արդյո՞ք բյուջեի գնահատման գործընթացի մասնակիցները օժտված են անհրաժեշտ գենդերային բանիմացությամբ:<br>Բյուջետային վերլուծության ի՞նչ մեթոդ է ավանդաբար կիրառվում:<br>Ինչպիսի՞ չափանիշներով. արդյունքներ, ազդեցություն, քանակական և որակական ցուցանիշներ:<br>Ինչպիսի՞ գործիքներ և մեթոդներ են ավանդաբար կիրառվում բյուջեի վերլուծության գործընթացում: |

| | |
|---|---|
| | Արդյո՞ք հնարավոր է ներդաշնակեցնել գենդերային հեռանկարը բյուջեի վերլուծության համար ավանդաբար օգտագործվող տարբեր մեթոդներում և գործիքներում:<br>Ի՞նչ աստիճանով են ապախոշորացված բյուջետային վերլուծության նպատակով ներկայումս օգտագործվող տվյալները:<br>Ինչպիսի՞ լրացուցիչ մեթոդներ և գործիքներ կարող են օգտագործվել գենդերային բյուջեի վերլուծության համար (օրինակ գենդերային ապախոշորացմամբ նպաստների բաշխվածության վերլուծություն, գենդերային ապախոշորացմամբ եկամուտների բաշխվածության վերլուծություն):<br>Առկա և հասանելի գենդերային ապախոշորացված տվյալներից որո՞նք ներկայումս չեն օգտագործվում:<br>Արդյո՞ք գենդերային հեռանկարը ներառված է պաշտոնական բյուջեի գնահատման փաստաթղթում: |

# 3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅԻ ՕՐԻՆԱԿ

## Ա. ԻՆՉՈՒ՞ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ

Բոլոր երկրներում քաղաքական և տնտեսական մասնակցության, վարձատրության, եկամտի և տնտեսական ակտիվների, ինչպես նաև իրականացվող անվճար խնամքի և տնային աշխատանքի տեսակետից կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեն զգալի խզումներ և անհամաչափություններ: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ երկրները միացել են *Միավորված ազգերի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր դրսևորումների վերացման մասին կոնվենցիային (CEDAW)*, համաձայն որի նրանք պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը սեռերի իրավահավասարությունն ապահովելու համար:

> *Անդամ երկրները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները, այդ թվում՝ իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ոլորտներում, որպեսզի ապահովեն կանանց ամբողջական զարգացումը և առաջխաղացումը, երաշխավորելով տղամարդկանց հետ իրավահավասարության հիման վրա կանանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիիրավ օգտագործումը և դրանցից լիարժեքորեն օգտվելը:*
>
> *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր դրսևորումների վերացման մասին կոնվենցիայի 3-րդ Հոդված*

CEDAW Կոնվենցիայի ներքո ստանձնած պարտավորությունները հավելվեցին 1995 թ. Պեկինյան Գործողությունների ծրագրով, որոնք վավերացվեցին բոլոր ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից: Համաշխարհային հանրությունը համաձայնվեց, որ ազգային կառավարությունները պետք է լրացուցիչ միջոցներ ներդնեն կանանց զբաղվածությունն ապահովելու համար:

> *Կառավարությունները պետք է քայլեր ձեռնարկեն, պարբերաբար դիտարկելով թե ինչպես են կանայք օգտվում պետական ծախսերից, համապատասխանեցնեն բյուջեները ապահովելով կանանց համար հավասար հասանելիություն պետական ծախսերի նկատմամբ, ինչպես արտադրողական հնարավորություններին նպաստելու, այնպես էլ սոցիալական կարիքները բավարարելու համար և կատարեն Միավորված ազգերի այլ գագաթաժողովներում և համաժողովներում իրենց կողմից ստանձնած պարտավորությունները: Գործողությունների ծրագրի իրականացումն ապահովելու համար արդյունավետ ազգային ռազմավարություններ մշակելու համար կառավարությունները պետք է տրամադրեն բավարար միջոցներ, այդ թվում միջոցներ հատկացնեն գենդերային ազդեցության գծով վերլուծություն կատարելու համար:*
>
> *Պեկինյան Գործողությունների ծրագիր, կետ 346*

Գենդերային բյուջետավորումը գործիք է, որն ապահովում է, որպեսզի կառավարությունները կատարեն սեռերի իրավահավասարության և կանանց առաջխաղացման համար անհրաժեշտ միջոցներ տրամադրելու գծով իրենց կողմից ստանձնած պարտավորությունները: Դա նշանակում է, որ պետական բյուջեների միջոցները տրամադրվելու են ելնելով գենդերային հեռանկարից, որը կնպաստի պետական միջոցների արդար, նպատակային, սպառողի համար մատչելի և արդյունավետ բաշխմանը: Գենդերային հիմքերով կատարվող գնահատումը միտված է ի հայտ բերելու և փաստաթղթային հիմնավորում տալու գենդերային անհավասարությունների բոլոր անցանկալի դրսևորումները: Դա կնպաստի նպատակային քայլերի և միջոցառումների ձեռնարկմանը, թույլ տալով իրագործել կանանց և տղամարդկանց ողջ ներուժը տնտեսությունում, ինչպես նաև այլ սոցիալական բնագավառներում: Ավելին, դա կնպաստի որակապես կատարելագործված և իրատեսական վերլուծություններին: Այն սատարում է պատշաճ կառավարման, ժողովրդավարական մասնակցության, հաշվետու լինելու և թափանցիկության, ինչպես նաև արդյունավետության և տնտեսավարման սկզբունքները:

### *Հիմնական պատասխանատվությունը կանոնավոր բյուջետային գործընթացում*

Գենդերային բյուջետավորման ծրագիր նախաձեռնելու հարցում ֆինանսների նախարարությունը կամ բյուջետային վարչությունը պետք է ստանձնի առաջնորդի դերը՝ սեփական, ազգային սեռերի իրավահավասարության հարցերով մարմնի, խորհրդարանի կամ այլ մարմինների նախաձեռնությամբ:

Ֆինանսների նախարարությունը կամ բյուջետային վարչությունը նախապատրաստում և ավարտական տեսքի է հասցնում կառավարության բյուջետային առաջարկը, որը ներկայացվում է խորհրդարանին: Այդ մարմինները պետք է հրապարակեն ուղեցույցեր և բյուջետային առաջարկում պարտադիր կերպով ներառեն գենդերային ապախոշորացված տվյալներ և աղյուսակներ (մարդկանց վերաբերող բոլոր տվյալները): Նրանք պետք է ձեռք բերեն գենդերային տեղեկատվական բազա և/կամ համագործակցեն համապատասխան փորձագետների հետ գենդերային դյուրըմբռնվածությամբ մակրոտնտեսական վերլուծություն իրականացնելու համար: Աշխատանքի հոսքային կազմակերպման սկզբունքի համաձայն այդ աշխատանքի կոորդինացումը պետք է իրականացվի առաջնորդի դերում հանդես եկող նախարարության կողմից: Միևնույն ժամանակ տարբեր ճյուղային նախարարությունները կրում են պատասխանատվության իրենց բաժինը:

Իրականում գենդերային բյուջետավորման իրականացմանը հաճախ ձեռնամուխ են լինում ազգային սեռերի հավասարության հարցերով մարմինները, որն էլ առնվազն սկզբնական փուլում հանդես է գալիս կոորդինատորի դերում: Գենդերային բյուջետավորման իրականացման սեփական նախաձեռնությամբ կարող է նաև հանդես գալ որևէ ճյուղային նախարարություն կամ կառավարության ծառայություն:

Յուրաքանչյուր դեպքում գործում է այն սկզբունքը, որ կոորդինացման և բյուջեի համար պատասխանատու նախարարության /վարչության/ծառայության հետ պետք է սերտորեն կոորդինացնել աշխատանքները: Կառավարության բյուջետային առաջարկի համար պատասխանատու ֆինանսների նախարարության և/կամ բյուջետային վարչության հետ գործընկերությունը չափազանց կարևոր է նախաձեռնության հետագա արդյունավետ ընթացքի համար:

Այսուհետ պարզության համար օգտագործվելու է բյուջետային վարչություն հասկացությունը: Գենդերային բյուջետավորման գծով նախաձեռնությունների կարիքների բավարարման համար մշակվել են հետևյալ ուղեցույցերը, որոնք չեն պարտավորեցնում (և ոչ էլ բացառում) ֆինանսների նախարարության/բյուջետային վարչության ակտիվ մասնակցությունը:

### *Պատասխանատու կառավարման ապահովում*

Յուրաքանչյուր նախարարության մակարդակով ընդհանուր պատասխանատվությունը կրում է ավագ ղեկավարությունը/գլխավոր տնօրենը, որը հետևում է, որպեսզի բյուջետային վարչության ղեկավարը և տարբեր քաղաքականությունների վարչությունների պետերը ձեռնարկեն անհրաժեշտ քայլերը: Վարչությունների պետերը պատասխանատու են անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրման համար:

### *Պարտականությունների բաշխումը գենդերային բյուջետավորման գործընթացում*

Բյուջետային վարչությունն կազմակերպում է գենդերային բյուջետավորման գործընթացը, այդ թվում՝ պլանավորում է ծրագիրը և դիմում այլ նախարարություններին ու վարչություններին օժանդակության համար:

Ճյուղային նախարարությունները/վարչությունները իրականացնում կամ հանձնարարում են գենդերայի վերլուծության իրականացումը իրենց պատասխանատվության տակ գտնվող ոլորտներում:

Սեռերի հավասարության հարցերով պատասխանատու ազգային կառույցները ներդնում են իրենց գիտելիքներն ու փորձը և օժանդակում գենդերային բյուջետավորման գործընթացի կառուցմանը և իրականացմանը:

Այդ մոտեցումը լիովին համապատասխանում է գենդերային իրավահավասարեցման ռազմավարության այն սկզբունքին, համաձայն որի գործընթացում սովորաբար ներգրավված մասնակիցներն աշխատանքային պարտավորություններն իրականացնելիս չպետք է անտեսեն գենդերային հեռանկարը:

### *Համահարթեցում՝ բյուջեի, քաղաքականության և գենդերային փորձագիտության միասնականացումը*

Գենդերային դյուրըմբռնվածությամբ բյուջետավորում ապահովելու համար յուրաքանչյուր նախարարություն պետք է ապահովի այդ գործընթացում իր մասնաբաժնի ներդրումը: Բյուջետային և քաղաքականությունների վարչությունները պետք է համագործակցեն կիսելով միմյանց հետ առկա գիտելիքներն ու փոր-

ձը: Ցանկացած կազմակերպությունում սովորաբար առկա է կուտակված փորձն ու գիտելիքները: Գործընթացի ներքո կարող են ձեռք բերվել նոր գենդերային փորձագիտություն կամ կատարելագործվեն առկա գիտելիքներն ու փորձը:

Յուրաքանչյուր նախարարություն և կառավարության ծառայություն պետք է իր կազմում ընդգրկի կամ վերապատրաստի գենդերային հարցերով մասնագետների և արդյունավետ օգտվի վերջիններիս ծառայություններից:

Բոլոր նախարարություններում պետք է նշանակվեն գենդերային հարցերով կոորդինատորներ: Դա պարտադիր նախապայման է գենդերային իրավահավասարությունը բյուջեներում և քաղաքականություններում որպես գլխավոր ուղղություն ձևավորելու համար (գենդերային բյուջետավորում): Գենդերային հարցերով կոորդինատորները մշտապես տրամադրվում է ղեկավարության օժանդակությունը, նրանք ունեն հստակ լիազորություններ և ստանում են աշխատանքն արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ ուսուցումը: Այդ պարտականությունների կատարմանը նրանք նվիրում են իրենց աշխատանքային ժամանակի զգալի մասը:

Սեռերի հավասարության հարցերով պատասխանատու ազգային կառույցները հանդիսանում են փորձագիտության կարևորագույն աղբյուր: Շատ երկրներում գոյություն ունեն նաև գենդերային հարցերով անկախ փորձագետներ, որոնք աշխատում են որպես խորհրդատուներ: Անհրաժեշտ է կազմել անկախ գենդերային փորձագետների ու խորհրդատուների ցուցակ:

***Պետական գերատեսչությունների մասնակցությունը***

Շատ դեպքերում հիմնական միջոցառումներն իրականացվում են ոչ թե նախարարության կողմից, այլ հանձնարարվում նրանց կից գերատեսչություններին: Վերջիններս պատասխանատու են գենդերային հիմքերով գնահատումների կազմակերպման և իրականացման համար: Պետական գերատեսչությունների ֆինանսավորումը պետք է նախատեսի վերջիններիս կողմից գենդերային աշխատանքների իրականացումը:

## C. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

***Համատեղ աշխատանքային խմբի կազմավորում***

Առաջին հերթին աշխատանքները կոորդինացնող վարչությունը կազմավորում է աշխատանքային խումբ, որտեղ ներգրավվում են քաղաքականությունների վարչությունների ներկայացուցիչները և գենդերային հարցերով փորձագետները: Աշխատանքային խումբը հաշվետու է բյուջետային/կոորդինացնող վարչության առջև, որը հսկում և կոորդինացնում է աշխատանքային խմբի բոլոր աշխատանքները: Այդ գործընթացում ակտիվորեն ներգրավվում են և կանայք և տղամարդիք:

Աշխատանքային խմբի լիազորություններն են.

- առկա իրավիճակի գնահատում,
- բյուջեի և ոլորտային քաղաքականությունների գենդերային համապատասխանության ստուգում,
- միջոցառումների ծրագրի մշակում:

***Առկա իրավիճակի գնահատում***

Գենդերային ծրագրերի նախապատրաստական և իրականացվող ծրագրերի գնահատման գործընթացում մասնակցում են բոլոր վարչությունները, մասնավորապես ռեսուրսների հատկացման համար պատասխանատուները.

- Փորձի կիսում
- Եզրակացությունների և արձանագրված փաստերի ուսումնասիրություն
- Անհրաժեշտ հետազոտական աշխատանքի իրականացում

***Գենդերային հիմնախնդիրների առկայություն***

Անհրաժեշտ է ունենալ ըստ սեռերի ապախոշորացված տվյալներ: Եթե դրանք բացակայում են պետք է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր պահանջվող տվյալները ձեռք բերելու համար: Տվյալների լավագույն աղբյուրը դա ազգային վիճակագրական ծառայությունն է: Թեպետ նման տվյալները միշտ չէ որ հրապարակվում կամ վերլուծվում են, սակայն հաճախ նրանք առկա են: Նախարարությունը պետք է միշտ դիմի նման տվյալներ ստանալու համար և ապահովի որպեսզի նրանց մոտ առկա ազգագրական տվյալները և կատարված ու հավաքագրված հետազոտական նյութերը ներկայացվեն և վերլուծվեն գենդերային խնդիրների առկայության տեսանկյունից:

- Ստուգել բյուջետային/քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային խնդիրների առկայությունը,
- Ամփոփ ներկայացնել բյուջետային/քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային խնդիրների առկայությունը,
- Հակիրճ հիմնավորմամբ չդիտարկել բյուջետային/քաղաքականության այն ոլորտները, որոնք միանշանակ չեն վերաբերում գենդերային խնդիրներին:

Գենդերային հիմնախնդիրների առկայությունը ստուգելու համար[15], պետք է ճիշտ հարցադրումներ կատարել.

- Արդյո՞ք բյուջետային/քաղաքականության ոլորտը վերաբերում է մեկ կամ մի քանի թիրախային խմբերի,
- Արդյո՞ք քաղաքականության այդ ոլորտում առկա են տարբերություններ կանանց և տղամարդկանց միջև (իրավունքների, հատկացվող միջոցների, մասնակցության, արժեքների և կիրառվող մոտեցումների տեսակետից):

Եթե այդ հարցերից որևէ մեկին տրվում է դրական պատասխան, ապա առկա է գենդերային խնդիր: Անհրաժեշտ է ձեռք բերել և ուսումնասիրել ըստ սեռերի ապախոշորացված տվյալներ և գնահատել հնարավոր գենդերային ազդեցությունը:

### ***Միջոցառումների ծրագիր***

Գենդերային հիմնավորվածության ստուգման և արձանագրման հիման վրա աշխատանքային խումբը կազմում և առաջարկում է համապատասխան բյուջետային ոլորտներում գենդերային սկզբունքների և ստուգման գծով առաջնահերթ միջոցառումների ժամանակացույց:

Միջոցառումների ժամանակացույցում ներակայացվում են հետևյալ հիմնախնդիրները.

- Առաջարկվող գնահատումների շրջանակ,
- Իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ օժանդակություն, միջոցներ և փորձագետներ:

Ժամանակացույցը պետք է իրատեսական լինի: Առաջնահերթությունները պետք է հստակ արտացոլեն բյուջետային ոլորտների կարևորությունն ու քաղաքական առաջնահերթությունը: Խորհուրդ է տրվում ցուցաբերել աստիճանական մոտեցում և տակտիկական նկատառումներ: Նախ և առաջ պետք է գնահատել մեկ, երկու բյուջետային հոդվածներ, որտեղ ակնհայտորեն երևում են գենդերային խնդիրներ կամ հստակ դրսևորված քաղաքական շահագրգռվածություն: Այն բանից հետո, երբ ձեռք է բերվում որոշակի փորձ և գիտելիքներ և հատկացվում են կան ավելի հեշտ կարող են հիմնավորվել և ձեռք բերվել պահանջվող միջոցները, կարելի է անդրադառնալ ավելի խնդրահարույց ոլորտներին:

Միջոցառումների ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու համար այն պետք է հաստատվի բարձրագույն մակարդակի վրա:

Ծրագրին պետք է անդրադառնալ և անհրաժեշտության դեպքում վերանայել յուրաքանչյուր տարի, ապահովելով.

- կանոնավոր մոնիտորինգ,
- հայտնաբերված փաստերի հետևողական դիտարկում,
- ընթացքում ձեռք բերված փորձի հետագա կիրառում,
- նոր գնահատումներ ըստ սահմանված առաջնահերթությունների,
- ծրագրի դիտարկում և անհրաժեշտության դեպքում ճշգրտումների իրականացում:

[15] Գենդերային ազդեցության գնահատման 1997 թ. ԵԽ-ի Ուղեցույց և Միկե Վերլոի «Smart» գործիքը:

## D. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բյուջեները և քաղաքականությունները կարող են տարբեր ազդեցություն ունենալ կանանց և տղամարդկանց վրա: Նրանք կարող են նպաստել սեռերի իրավական անհավասարության ավելացմանը կամ նվազեցմանը, նույնիսկ եթե դա նախատեսված չէ կամ կանխամտածված չի կատարվում: Կանայք և տղամարդիկ, աղջիկները և տղաները ունեն տարբեր նախապատվություններ և ըստ դրանց իրենց կյանքը տարբեր ձևով են կազմակերպում: Նրանք անհավասար են օգտվում սոցիալական նպաստներից և տնտեսական միջոցներից: Գենդերային սկզբունքով գնահատումն ապահովում է, որպեսզի կանանց և տղամարդկանց տարբեր վարքագիծը, ձգտումները և կարիքները հավասարապես գնահատվեն հասարակության կազմակերպման և կառավարման գործընթացում: Դա նաև ենթադրում է իշխանության և ռեսուրսների վերաբաշխում:

Բյուջետային տարբեր ոլորտներում գենդերային ուղղվածությունը գնահատելիս պետք է հարց տալ՝ արդյոք բյուջեի այդ ոլորտը կարող է տարբեր կերպով ազդել կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների վրա, հետևյալ հարցերում.

- բյուջետային ոլորտի միջոցով լուծվող հիմնախնդիրները,
- բյուջետային ոլորտի ընդհանուր նպատակը,
- բյուջետային ոլորտի ազդեցությունը անհատների և տնային տնտեսությունների կողմից ընտրության կատարման և գործունեության իրականացման գծով:

Գենդերային սկզբունքով գնահատում անցկացնելու համար անհրաժեշտ է.

- սահմանել և հստակ սահմանազատել գնահատման ոլորտը,
- սահմանել գենդերային նպատակները և ցուցանիշները կոնկրետ ոլորտի համար,
- մոտեցման կամ մեթոդաբանության ընտրությունը կախված է դիտարկվող բյուջետային ոլորտի շրջանակից,

ցուցանիշներից (քանակական և որակական) ու առկա տվյալներից,
- ո՞վ է իրականացնելու գնահատումը: Արտաքին փորձագետներին կամ հիմնարկության աշխատակիցներին դիմելու անհրաժեշտությունը կախված է առաջադրանքի բարդությունից, վերջիններիս բանիմացությունից և մարդկային ու ֆինանսական ռեսուրսների առկայությունից:

Գենդերային բյուջետավորման մեթոդները և օգտակար հղումները ներկայացված են այս հաշվետվությունում (տես Բաժին 2, C. – Գենդերային բյուջետավորման գործիքներ և մեթոդներ և Հավելված IV – Գրականության ցուցակ):

### Գնահատմանը հետևող գործողություններ

Գնահատումը կարող է ի հայտ բերել սեռերի միջև չնախատեսված և անցանկալի իրավական անհավասարություններ: Անցանկալի խզումները շտկելու և անհրաժեշտ որոշումների կայացման համար պատասխանատու է քաղաքական և վարչարարական ղեկավարությունը: Փոփոխությունների և շտկիչ միջոցառումների գծով առաջարկները պետք է հաշվի առնեն միջազգային փաստաթղթերը (այդ թվում՝ *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր դրսևորումների վերացման մասին կոնվենցիան և Պեկինյան Գործողությունների ծրագիրը*), ինչպես նաև սեռերի իրավահավասարության/կանանց առաջխաղացման ազգային սահմանումը և նպատակները:

## E. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գենդերի հանգամանքը պետք է հետզհետե ավելի լայն արտացոլում ստանա բյուջետային առաջարկում: Դա կնպաստի գենդերային իրազեկման բարձրացմանը խորհրդարականների և բյուջեի այլ օգտագործողների մոտ նախարարությունների և պետական գերատեսչությունների ներքո և դրանցից դուրս:

Անձին վերաբերող բոլոր վիճակագրական տվյալները, աղյուսակները և թվերը պետք է ապախոշորացվեն, վերլուծվեն և դասակարգվեն ըստ սեռի: Հնարավորության դեպքում պետք է նաև կիրառվեն տարբերակման այլ չափանիշներ, օրինակ՝ ըստ էթնիկական ծագումը:

Գենդերային հիմքերի գնահատման շարունակական ավելացումն աստիճանաբար փոխակերպելու է ֆինանսական և բյուջետային քաղաքականությունը համաձայն սեռերի իրավահավասարության նպատակների:

# 4. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

### *Ավստրիա*

Ավստրիայում գենդերային բյուջետավորման առաջին ծրագիրը մշակվեց 2001 թ. գարնանը համալսարանների և այլ հետազոտական հիմնարկների տնտեսագետների և սոցիոլոգների անկախ խմբի կողմից: BEIGEWUM անվանումը կրող այդ աշխատանքային խումբը տեղեկատվություն հավաքելով գենդերային բյուջետավորման հարցերի և միջազգային զարգացումների շուրջ, ուսումնասիրեց Ավստրիայի ազգային բյուջեի հատուկ գենդերային ազդեցությունները: Այդ նախաձեռնությունը միտված էր նախ և առաջ իրազեկման մակարդակի բարձրացմանը և գենդերային բյուջետավորման վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը, շահագրգռելով կառավարությանը և հասարակական կազմակերպություններին էլ ավելի խորանալ այդ հարցում: Հասարակական կազմակերպությունների և գենդերային բյուջետավորման հարցերով ֆինանսների նախարարության կոորդինատորի հետ կապերի հաստատման արդյունքում աշխատանքային խումբը ստանձնեց գենդերային բյուջետավորման ցանցի կոորդինատորի դերը:

Այնուհետև կազմակերպվեցին մի շարք համաժողովներ գենդերային բյուջետավորման հարցերով և 2002 թ. վերջում մեկ ու կես տարի շարունակական համագործակցության արդյունքում BEIGEWUM աշխատանքային խումբը հրապարակեց մի գիրք[16], որտեղ ամփոփված էին տարված աշխատանքների արդյունքները, որը և դարձավ կարևորագույն ելակետն այդ աշխատանքներում: Գրքում ներկայացված է մակրոտնտեսական ռազմավարությունը և նրա ազդեցությունը կանանց վրա, ինչպես նաև կառավարության եկամուտները (հարկային, սոցիալական ապահովության և օգտագործողների վճարները), ինչպես նաև պետական ծախսերի գերակա ոլորտները (կրթություն, գիտական աշխատանք, աշխատուժի շուկա, կանանց կազմակերպությունների ֆինանսավորում):

Արձագանքելով գենդերային բյուջետավորման կազմակերպման և իրականացման հարցերում տեղական մակարդակով պրակտիկ օժանդակության նկատմամբ աճող պահանջարկին 2004 թ. հունիսին հրապարակվեց տարածաշրջանային և տեղական մակարդակով գենդերային բյուջետավորման կիրառման վերաբերյալ ձեռնարկը:

2002 թ. ֆինանսների նախարարությունը ձեռնարկեց առաջին քայլերը գենդերային բյուջետավորման իրականացման ուղղությամբ, անցկացնելով Ավստրիայի եկամտահարկի գծով գենդերային ապախոշորացված տվյալների վերլուծությունը[17]: Կազմվեց նաև ստուգացանկ, որը երկրի իշխանությունների համար հանդիսացավ գենդերային բյուջետավորման ուղեցույցը:

2004 թ. մարտին Ավստրիայի Դաշնային կառավարությունը վերջնական որոշում կայացրեց գենդերային բյուջետավորման իրականացման վերաբերյալ: Գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման գործընթացի ներքո Առողջապահության և կանանց հարցերի նախարարությունը կազմավորեց գենդերային բյուջետավորման հարցերով աշխատանքային խումբ և 2004 թ. վերջում նախաձեռնեց դեղամիջոցների քաղաքականության ոլորտում ծախսերի փորձնական ուսումնասիրությունը: Այնուհետև 2005թ. պետական բյուջեի մասին օրենքը գենդերային բյուջետավորումը որակավորեց գենդերային իրավահավասարության ռազմավարության անկյունաքարը: Որպես առաջին քայլ յուրաքանչյուր նախարարություն պետք է վերլուծեր իրեն հատկացվող բյուջետային ֆինանսավորման մեկ հոդվածի գենդերային ազդեցությունը:

Վերին Ավստրիայի դաշնային նահանգը արտաքին փորձագետների օգնությամբ և համագործակցելով կենտրոնական իշխանությունների հետ իրականացրեց գենդերային բյուջետավորման վերլուծություն տարածաշրջանային մակարդակով: Վերլուծությունն անդրադառնում է կրթության, առողջապահության և սպորտի ոլորտներում պետական ծախսումներին (որոնք կազմում են Վերին Ավստրիայի ծախսերի շուրջ 50 տոկոսը): Սեռերի հավասարությանը նպաստելու համար քաղաքականությունների ընտրությունները կայացնելու համար ուսումնասիրվելու են ուղղակի

---

[16] BEIGEWUM (2002): Frauen macht Budgets. Staatsfinanzen aus Geschlechterperspektive, Wien.

[17] BMF (2002): Is the Austrian tax sytem really “gender-neutral”? Results of a wage and income tax comparison between men and women. Wien. (http://www.bmf.gv.at)

նպաստները, զբաղվածության վրա ուղղակի, և խնամքի տնտեսության՝ մասնավորապես անվճար աշխատանքի վրա անուղղակի ազդեցությունները:

Վիեննայում քաղաքային իշխանությունները հայտարարեցին 2005 թ. գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիրը մեկնարկելու իրենց մտադրության մասին, որը կընդգրկի քաղաքի շրջաններից մեկում բյուջեի վերլուծությունը: Մի քանի քաղաքներում և փոքր համայնքներում մեկնարկել կամ շուտով կմեկնարկի գենդերային բյուջետավորման իրականացումը:

### Բելգիա

Բելգիայում դաշնային կառավարությունը իրականացրել է մեկ տարի տևողությամբ գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիրը[18]: Այն մեկնարկվեց 2002 թ. որպես UNIFEM-ի, ՏՀԶԿ-ի, Հյուսիսային երկրների նախարարների խորհրդի և Բելգիայի կառավարության կողմից Բրյուսելում կազմակերպված «Տնտեսական և ֆինանսական կառավարման հզորացում. դեպի գենդերային հարցերն արձագանքող բյուջետավորումը» համաժողովի շարունակություն[19]: Այդ նախաձեռնությունն առաջնորդվեց Զբաղվածության և հավասար հնարավորությունների Բելգիայի դաշնային նախարարության կողմից և իրականացվեց գենդերային իրավահավասարության ռազմավարական ծրագրի շրջանակներում, որը մեկնարկվեց 2000թ. վերջերին: Գենդերային իրավահավասարության ռազմավարությունը և գենդերային բյուջետավորման նախաձեռնությունը իրականացվում էին մի շարք փորձագետների միջոցով, որոնք այդ հարցերում համագործակցում էին դաշնային նախարարություններում այդ հարցերի համար պատասխանատու մասնագետների հետ (հիմնականում գենդերային հարցերով կոորդինատորների): Այդ նախաձեռնությունը միտված էր գենդերային բյուջետավորման քաղաքականությունը Բելգիայի դաշնային կառավարության ծառայությունների ներքո տարածելու նպատակահարմարության ուսումնասիրությունը: Այդ նպատակով Հավասար հնարավորությունների տնօրինության մասնագետների և երեք փորձագետներից բաղկացած երկու աշխատանքային խմբերի կողմից մշակվեցին ծրագրի երեք փուլերը՝ ուսուցում, պրակտիկ հետազոտում և տեղեկատվության տարածում: Փորձնական ծրագիրն հանգեցրեց մի շարք շոշափելի արդյունքների.

- բյուջեի և գենդերային հարցերով զբաղվող մասնագետներն անցան գենդերային բյուջետավորման սկզբունքների, մոտեցումների և գործիքների գծով ուսուցման: Այդ ուսուցումը հատուկ կազմակերպվել էր երկու խմբերի հարցերով զբաղվող մասնագետների համար, համատեղելով բոլորովին տարբեր գիտելիքային բազա և փորձ ունեցող մասնագետների, որն անկասկած կնպաստեր հետագայում գենդերային հարցերով ուսման կազմակերպման գործընթացին:

- պրակտիկ հետազոտումը թույլ տվեց համախմբել բոլոր դաշնային նախարարություններում ծրագրավորված և իրականացվող գենդերային բյուջետավորման աշխատանքները և կազմել նախարարություններում առկա գենդերային ապախոշորացված քանակական և որակական տվյալների ցուցակ: Աշխատանքի արդյունքում ակնհայտ դարձավ, որ վարչարարության որևէ ոլորտում գենդերային հեռանկարը սիստեմատիկ կերպով չի արմատավորվում բյուջետային ռազմավարության ներքո որպես հիմնական ուղղություն: Միևնույն ժամանակ բացակայում էր նաև ծրագրերն ներդնելու համար անհրաժեշտ տեղեկատվական բազան: Այդ սահմանափակումների հետ մեկտեղ ի հայտ եկան երկու ուշագրավ շարունակական ծրագրեր, որոնք անուղղակիորեն առնչվում էին գենդերային բյուջետավորման հետ (որոնցից մեկն իրականացվում էր Ֆինանսների նախարարությունում) և կազմակերպվեցին փորձագետների առաջնորդությամբ իրականացվող երկու ծրագրեր (այդ թվում մեկն Արտաքին գործերի նախարարությունում): Դրա շնորհիվ հնարավոր եղավ պատկերացում ստեղծել այն մասին, թե ինչպիսի տեսքով կարելի է գենդերային բյուջետավորում իրականացնել նախարարությունում, միևնույն ժամանակ ընդգծելով նրա հնարավոր արդյունքները արդյունավետության և սեռերի իրավահավասարության ապահովման տեսակետից:

- տեղեկատվության փոխանակումն ու տարածումը, որոնք համարվում էին փորձնական ծրագրի առանցքային ցուցանիշները, իրականացվում էին մասնավորապես. կրթական նյութերի մշակումը, պրակտիկ հետազոտման գործընթացի և արդյունքների մասին հաշվետվությունների պատրաստումը, նախարարություններում բյուջետային և գենդերային հարցերով զբաղվող պաշտոնյաների հետ հանդիպումների կազմակերպումը և դյուրընկալելի տեղե-

[18] Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ծանոթանալ. CECCHINI I./CORNET A./HOLVOET N. (2003): Projet ‘gender budgeting’. Rapport de synthèse/Gendergevoelig budgetteren. Syntheserapport van het project ‘gender budgeting’ in het kader van het globaal project ‘gender mainstreaming’ opgericht door het federale beleidsniveau. Bruxelles/Institut pour l’égalité des femmes et des hommes/Instituut voor de Gelijkheid van Mannen en Vrouwen, 71 p.

[19] Համաժողովի փաստաթղթերը և շնորհանդեսները կազմվել են՝ UNIFEM (2002) : Gender Budget Initiatives: Strategies, Concepts and Experiences. New York: UNIFEM.

կություններ պարունակող ամփոփ տեղեկագրի հրապարակումը[20]:

Դաշնային կառավարության մակարդակով իրականացվող ծրագրից զատ առկա են տարածաշրջանային մակարդակով գենդերային բյուջետավորման նկատմամբ աճող հետաքրքրության մասին վկայող փաստեր (ինչպես Ֆլանդրիայում, այնպես էլ Վալոնիայում)՝ խորհրդարանային մակարդակով (մշակվել է օրենքի նախագիծ) և հանրային հասարակության ներքո (կանանց շարժումը կազմակերպում է այդ հարցի շուրջ զանազան կրթական միջոցառումներ):

## *Ֆրանսիա*

2000 թվականին Ֆրանսիայի խորհրդականները կոչ արեցին կառավարությանը բյուջեն կազմելիս ներկայացնել տարեկան տվյալներ այն ֆինանսական միջոցառումների վերաբերյալ, որոնք միտված էին կանանց իրավունքների զարգացմանը և սեռերի իրավահավասարության ապահովմանը: Արդյունքում ստեղծվեց "jaune budgétaire"՝ բյուջեի տեղեկագրական հավելվածը կանանց իրավունքների և հավասարության մասին:

Այդ փաստաթուղթը, որը խորհրդարանականներին տեղեկություն է տրամադրում և հանդիսանում է իրավիճակի նկատմամբ մոնիտորինգի անցկացման միջոց, ունենալով իրավական հիմքեր, թույլ է տալիս կառավարությանը ցուցադրել քաղաքականության արդյունքները բյուջետային հատկացումների տեսքով, գնահատել առաջընթացը և հայտնաբերել թերությունները:

Յուրաքանչյուր նախարարություն ինքնուրույն հաշվառում է գույքագրում սեռերի իրավահավասարության զարգացման և այդ հարցում իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ իր կողմից ձեռնարկված միջոցառումները: Յուրաքանչյուր գերատեսչություն նաև հիմնավորում է իր մոտեցումները սեռերի իրավահավասարության հարցերում և ներկայացնում այն ցուցանիշները, որոնք իր կարծիքով առավելագույն ցայտուն կերպով են նկարագրում այդ ոլորտը:

2004 թ. Կանանց և տղամարդկանց իրավահավասարության խարտիան, որի ներքո նախարարությունները և տարածքային կառավարման մարմինները ձեռնամուխ եղան մոտակա երեք տարիներին զգալի առաջընթաց արձանագրելուն և տարեկան բյուջեի պատրաստումը նպատակային բյուջետավորման սկզբունքների հիման վրա թույլ կտա հստակեցնել թե որքանով են տարբեր նախարարությունների կողմից այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերը համապատասխանում միմյանց: Նշված երկու տարբեր նախաձեռնությունները թույլ կտան հետագայում համախմբել գենդերային իրավահավասարության քաղաքականության ոլորտում ձեռնարկվող քայլերը և դրանք արդյունավետորեն տեղափոխել պետական բյուջեի շրջանակ:

Օրինակ սեռերի հավասարության և աշխատանքային հավասարության նախարարությունը խորհրդարանին կներկայացնի տարեկան գենդերային իրավահավասարության ծրագիրը, ամրագրելով նպատակները և ցուցանիշները և կազմելով սեփական բյուջեի նախագիծը: Միևնույն ժամանակ "jaune budgétaire"-ը նույնպես կներառի Խարտիայում սահմանված միջոցառումները և աստիճանաբար հնարավորություն կընձեռի կառավարության տարբեր գերատեսչությունների համար բնորոշ և ընդհանուր նպատակների և ցուցանիշների մշակմանը, որի շնորհիվ հնարավոր կլինի նոր լիցք հաղորդել գենդերային իրավահավասարության գլխավոր ուղղության տեսքով ներառմանը բոլոր այն քաղաքականություններում, որոնց իրականացման համար վերջիններս պատասխանատվություն են կրում:

## *Գերմանիա* [21]

Գենդերային իրավահավասարության ռազմավարության հարցերով Գերմանիայի Դաշնային կառավարության միջգերատեսչական աշխատանքային խումբը (IMA-GM) 2003 թ. կազմավորեց գենդերային բյուջետավորման հարցերով աշխատանքային ենթախումբ (UAG-GB): 2005-2006 թթ. սկսած գենդերային և բյուջետավորման փորձագետներից կազմված այդ խումբն իրականացնում է գենդերային բյուջետավորման գործնական կիրառության ուսումնասիրություն: Գերմանիայի մի շարք դաշնային նախարարություններ արդեն իսկ կարևոր քայլեր են ձեռնարկել գենդերային բյուջետավորման իրականացման ուղղությամբ: Այսպես Երիտասարդության հարցերով նախարարությունը շարունակական մոնիտորինգ է սահմանում կարևոր բյուջետային հոդվածների նկատմամբ: Պետական ֆինանսավորում ստացող հաստատությունների կողմից նախարարություններին ներկայացվող տարեկան զեկույցներում ներկա-

[20] CECCHINI I./CORNET A./ HOLVOET N. (2003): Analyse budgntaire en terme de genre et d’ngalitn hommes/femmes: rnduire les inngalitns et amnliorer ses performances: un dnfi pour les services publics/ Gendergevoelig budgetteren: Ongelijkheid verminderen en efficiuntie verhogen: een uitdaging voor openbare instellingen. Bruxelles/Brussel/Institut pour l’ngalitn des femmes et des hommes/Instituut voor de gelijkheid van vrouwen en mannen/8.

[21] Կայքեր.

Դաշնային գործընթաց. www.gender-mainstreaming.net/RedationBMFSFJ/RedaktionGM/Pdf-Anlagen/implementation-of-gender-mainstreaming.pdf

Դաշնային իրացվելիության ուսումնասիրություն. www.bmfsfj.de/kategorien/Aktuelles/ausschreibungen,did=23218.html
www.gender-mainstreaming.net/gm/Aktuelles/newsletter,did=28142.html

Բեռլինյան հաշվետվություն. www.berlin.de/SenWiArbFrau/frauen/gender_gs/index.html
www.berlin.de/SenWiArbFrau/frauen/doku/gender/d153136_31_08_2004_schlussbericht2.pdf

Բեռլինյան նախաձեռնություն. www.gender-budgets.de

յացվում են վերջիններիս կողմից կազմակերպվող միջոցառումներում տղաների և աղջիկների մասնակցության վերաբերյալ տվյալները, որոնց հիման վրա վերլուծության են ենթարկվում գենդերային խնդիրները: Գերմանիայի երիտասարդների ինստիտուտը (DJI) իրականացնում է տարեկան հետազոտումներ, որոնց ընթացքում գնահատվում է դաշնային նախարարության կողմից ֆինանսավորմամբ տղաների և աղջիկների համար կազմակերպվող միջոցառումների պրակտիկ արդյունքները և պետական ֆինանսավորում ստացող հիմնարկությունների կողմից գենդերային քաղաքականության իրականացումը: Մյուս դաշնային նախարարությունները՝ կրթության, միջազգային համագործակցության և արտաքին գործերի, ինչպես նաև դաշնային հաստատությունները, օրինակ՝ քաղաքական կրթության դաշնային բյուրոն, նույնպես մշակել են ծախսերի վերահսկման և համապատասխանեցման արդյունավետ գործիքներ:

Գերմանիայի մի շարք նահանգներում գենդերային բյուջետավորման գործընթացի ներդրումն ընթացքի մեջ է: Բեռլինի նահանգը (շուրջ 3.4 միլիոն բնակչությամբ) կազմել է 2006 թ. գենդերային բյուջեն, որը հաստատվելու է պետական խորհրդարանի կողմից 2005 թ. դեկտեմբերի 8-ին: Այդ ծրագիրը մշակվել է 2003 թ. խորհրդարանական նախաձեռնության արդյունքում և Բեռլինի քաղաքապետի ու Սենատի որոշման հիման վրա: 2006 թ. Բեռլինի նահանգի բյուջեում յուրաքանչյուր նախարարության բյուջեի որոշ մաս վերլուծվում է գենդերային տեսանկյունից՝ հիմնական հոդվածերի (Hauptgruppen) գծով 6 ֆինանսական հատկացումների և 8 ներդրումնային ծրագրերի գծով: Առաջին փուլում դիտարկվում են այն հոդվածները, որոնք կարող են վերաբերվել կանանց և տղամարկանց, աղջիկներին և տղաներին, որպես ուղղակի և անուղակի շահառուներին: Այդ նպատակով իրականացվել է գենդերային ապախոշորացմամբ շահառուների վերլուծություն, որը արտացոլվել է բյուջեում: Բեռլինի Սենատը կազմավորել է գենդերային իրավահավասարության ռազմավարության հարցերով հանձնաժողով և գենդերային բյուջետավորման հարցերով աշխատանքային խումբ, որն ընդգրկում է «Գենդերային արդար բյուջետավորման Բերլինյան նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունը:

Տեղական մակարդակով շատ քաղաքներ մշակել են գենդերային բյուջետավորման ռազմավարություններ և ընդգրկել դրանք իրենց բյուջեներում: Այսպես, Բեռլին քաղաքում տեղական մարմինները կազմել են գենդերային բյուջեներ բոլոր 12 համայնքների համար, որոնք և հաստատվել են 12 թաղապետարանների կողմից: Լիխտենբերգի շրջանում (260.00 բնակիչ), անց է կացվել գենդերային շահառուների վերլուծություն, բյուջեում նշված 19 հոդվածների գծով (16 միլիոն եվրո), որը ներառվել է բյուջեի վերլուծողական մասում: Լիխտենբերգի ամբողջ բյուջեն կազմում է 514.8 միլիոն եվրո, որից 377.4 միլիոնը սոցիալական հատկացումներ են, իսկ 85.6 միլիոնը զբաղվածության գծով հատկացումներ: Բյուջեների գենդերային վերլուծության ընթացքում ստացված տեղեկությունները օգտագործվում են գենդերային իրավահավասարության ռազմավարության խորացման, պետական ծախսերի թափանցիկության ապահովման և գենդերային հոդվածների ներքո հատուկ թիրախային խմբերի առանձնացման համար:

## Իռլանդիա

Վերջին տարիների օրենսդրական բարեփոխումը Իռլանդիայում իր արտահայտությունն է գտել է խտրականության դեմ պայքարի մասին օրենքում, որում ներառվել է ապրանքների և ծառայությունների մատուցման, ինչպես նաև ընդլայնվել զբաղվածության պաշտպանության դաշտը: Դրանից բացի ամրացվել է հավասարության ենթակառույցը, որտեղ ընդգրկվել են Հավասարության տեսչությունը և Գենդերային իրավահավասարության ստորաբաժանումը:

Գենդերային իրավասարության քաղաքականությունը ավանդաբար իրականացվում էր դրական արդյունքի հասցնող միջոցառումների շնորհիվ: Ներկայումս, 2000-2006 թթ. Ազգային զարգացման ծրագրի ներքո (ԱԶԾ) հաստատված գենդերային իրավահավասարության ռազմավարությունը ընդլայնում է կանանց և տղամարդկանց իրավահավասարության հնարավորությունները:

ԱԶԾ-ի գենդերային իրավահավասարության ստորաբաժանումը նախաձեռնել է փորձնական հետազոտական ծրագիր, որը միտված է բյուջետային գործընթացներում գենդերային դյուրըմբռնվածությամբ մոտեցումների կիրառման հնարավորությունների հետազոտմանը:

Հետազոտման ներքո հիմնականում դիտարկվել է Երկրի ձեռնարկությունների խորհրդի գործունեությունը, որը դրամական դրամաշնորհների տրամադրման և ձեռնարկատիրական ու հնարավորությունների կառուցման ծրագրերի իրականացման միջոցով օժանդակում է միկրոբիզնեսի զարգացմանը:

Հետազոտության ընթացքի և արդյունքների համար հատուկ կարևորություն ուներ գենդերային վերլուծության գծով երկու գործիքների մշակումը.

- *Գենդերային դյուրըմբռնվածությամբ բյուջեփավորման զարգացման չնանմուշը* ապահովում է կազմակերպության բոլոր օղակների, այդ թվում՝ բյուջետային գործընթացների գենդերային ստուգման տարրացանցը: Ստուգ-

ման արդյունքները կազմակերպության ընդհանուր գենդերային դյուրըմբռնվածության հենանիշ են հանդիսանում, միևնույն ժամանակ հիմքեր ստեղծելով այն ռազմավարության իրականացման համար, որով կազմակերպությունը կարող է բարելավել իր գենդերային կարողությունները:

- *Ֆինանսավորման քարտեզը* խթանում է բյուջեները նոր տեսանկյունից դիտարկելու գործընթացը, ներառելով անձնակազմի ավելի լայն շրջանակներ և ստեղծելով նոր հնարավորություններ, որոնք նպաստում են ֆինանսական մարմինների և ծրագրերի իրականացման գործընթացի միջև ակտիվ փոխկապակցվածության ստեղծմանը: Քաղաքականության կերտման և միջոցների հատկացման միջև առկա ճեղքվածքը բացահայտելուց բացի Ֆինանսավորման քարտեզը թույլ է տալիս ի հայտ բերել բյուջետային գործընթացների ներդաշնակությունն ապահովելու հնարավորությունները: Ֆինանսավորման քարտեզի տրամաբանական շարունակությունը ենթադրում է գենդերային բյուջետավորման այլ գործիքների կիրառումը, օրինակ՝ գենդերային ապախոշորացմամբ շահառուների վերլուծությունը և գենդերային ապախոշորացմամբ ընդգրկվածության վերլուծությունը:

Հետազոտման առանցքային նպատակն էր ազգային կառավարության կողմից Երկրի ձեռնարկությունների խորհրդին տրամադրվող ֆինանսավորման գծով առկա սահմանափակումների ուսումնասիրությունը: Այդ ենթատեքստում գենդերային բյուջետավորման փորձնական ծրագիրը նպաստեց տնտեսական քաղաքականության և մասնավորապես գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման վրա տնտեսագիտական տեսության ազդեցության և դրանից բխող հետևանքների ուսումնասիրության սոցիալական քաղաքականության իրականացմանը:

### *Նորվեգիա*

Նորվեգիայում գենդերային իրավահավասարությունը բյուջեում որպես ռազմավարական ուղղություն ներկայացնելու հարցում գոյություն ունեն երկար տարիների ավանդույթներ: Սեռերի իրավահավասարությունը խթանելու հարցում պետական մարմինների բոլոր օղակների պատասխանատվությունը ամրագրված է 1979 թ. Գենդերային իրավահավասարության մասին օրենքում: Այդ պայմանն էլ ավելի խստացվեց 2002 թ. օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում և սեռերի իրավահավասարությունը ակտիվ, ծրագրավորված և պարբերական ձևով խթանելու պարտականությունը տարածվեց մասնավոր հատվածում գործող կազմակերպությունների վրա: Սահմանվեց նոր պահանջ՝ զեկուցել տարեկան հաշվետվություններում սեռերի իրավահավասարության մասին (նախարարությունների կողմից ներկայացվող բյուջետային հայտերում): Սեռերի իրավահավասարության մասին հաշվետվական պարտականությունը սահմանափակված է անձնակազմի նկատմամբ իրականացվող քաղաքականություններով:

2002 թվականից ի վեր Երեխաների և ընտանեկան հարցերի նախարարությունը կոորդինացնում է Նորվեգիայի պետական բյուջեում գենդերային ռազմավարության արմատավորման գծով նախաձեռնությունը: 2003, 2004 և 2005 թթ. կառավարության բյուջետային ծրագրերին կից ներկայացվում է բյուջետային հիմնական ոլորտների գենդերային վերլուծության հավելվածը: Չնայած այդ նախաձեռնությունը պարտադրողական բնույթ չի կրում (նախարարություններին ուղղակի առաջարկվում է մասնակցել), այդ գործընթացին մասնակցեցին գրեթե բոլոր նախարարությունները: Սեռերի իրավահավասարության հարցերով պետական քարտուղարների հանձնաժողովը կառավարության կողմից լիազորվեց զարգացնելու գենդերային բյուջետավորման գործընթացը: Այդ գործընթացի ներքո ռեսուրսային հատկացումների գծով իրականացվող պարբերական գենդերային վերլուծությունները վկայում են երիտասարդության գծով քաղաքականության, սննդամթերքի արտադրության և հյուսիսային եղջերաբուծության ոլորտներում առկա լավ արդյունքների մասին: Միևնույն ժամանակ գենդերային խնդիրներին հատկացվող ուշադրության և թափանցիկության աճը նկատելի է մի շարք քաղաքականություններում և բյուջետային ոլորտներում: Քննադատողները նշում են, որ այդ ազդեցությունը փոքրածավալ բյուջետային հատկացումների պատճառով սահմանափակ է, և որ այն անտեսում է մակրոտնտեսական ոլորտը: Ցավոք ուսումնասիրությունների արդյունքները պատշաճ հետագա զարգացում չստացան: 2005 թ. կառավարությունը որոշեց անդրադառնալ այդ գործընթացին և բարեփոխել նրա որակն ու արդյունքները:

2006 թ. բյուջետային առաջարկի ներքո բոլոր նախարարությունները հրահանգ ստացան զեկուցել իրենց կողմից ներկայացվող բյուջետային հայտերում գենդերային սկզբունքով կատարվող գնահատման վերաբերյալ: Գենդերային վերլուծության ծավալները և մանրամասնության աստիճանը թողնվել էր յուրաքանչյուր նախարարության հայեցողությանը: Գործընթացի բարելավման և կառավարության 2007 թ. բյուջետային առաջակում գենդերային հեռանկարի խորացման հարցերով ուղեցույցը հրապարակվելու է 2005 թ. վերջին: Սեռերի իրավահավասարության հարցերով պետական քարտուղարների հանձնաժողովին առն-

թեր Միջգերատեսչական աշխատանքային խումբն արտաքին փորձագետի օժանդակությամբ կազմում է այդ ուղեցույցը: Գենդերային իրավահավասարության հարցերով հավելվածը ձևափոխվել է և այն ավելի հանգամանալիորեն է անդրադառնում մակրոտնտեսական ոլորտի հարցերին: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Ազգային վիճակագրական գրասենյակին հանձնարարել է հաշվետվություն կազմել գենդերային ապախոշորացմամբ եկամտի, զբաղվածության և ժամանակի օգտագործման մասին: Միջգերատեսչական աշխատանքային խումբը, որտեղ մասնավորապես ընդգրկված էին Ֆինանսների նախարարության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչները վերահսկել է հաշվետվության պատրաստման աշխատանքները, որը նախորդ տարվա հոկտեմբեր ամսին ներկայացվել է 2006 թ. բյուջետային առաջարկին կից: Նախատեսվում է, որ Գենդերային իրավահավասարության գծով նոր հավելվածը կլինի ավելի հետաքրքիր և օգտակար խորհրդարանի, նախարարությունների, այլ պետական մարմինների և հասարակության համար: Բյուջեի գենդերային վերլուծության և մակրոմակարդակի ընդգրկվածության գնահատումը կիրականացվի տարեկան կտրվածքով: Պատվիրվել է նաև արտաքին գնահատում, որի շրջանակներում կիրականացվի վերակազմավորված գենդերային բյուջեի գործընթացի եռամյա մոնիտորինգ:

Իրականացման սկզբնական շրջանից սկսած գենդերային բյուջեի գործընթացի առանցքում էր գենդերային հարցերի շուրջ ուսուցումն ու իրազեկումը: 2003 թ. Հյուսիսային բոլոր երկրների մասնակցությամբ կազմակերպվել է դասընթաց, որին մասնակցել են խորհրդարանականներ, լրատվական միջոցների ներկայացուցիչներ և վերլուծաբաններ: 2004 թ. հունվարին Սեռերի իրավահավասարության հարցերով պետական քարտուղարների հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարին մասնակցեցին այդ երկրների շատ նախարարներ, շրջանային ղեկավարներ և կառավարության այլ ավագ պաշտոնյաներ: Սեմինարի ընթացքում մենք կարողացանք ներկայացնել պետական միջոցների անհամաչափ բաշխման կոնկրետ օրինակներ, որոնք ի հայտ էին եկել ինչպես տեղական, այնպես էլ ազգային բյուջեի հոդվածների գենդերային հիմքերով իրականացված վերլուծության արդյունքում: Կարճատև պրակտիկ սեմինարներին մասնակցեցին բյուջետային հարցերով զբաղվող պաշտոնյաները, նախարարություններում գենդերային հարցերով պատասխանատուները և քաղաքականություն իրականացնողները: Նորվեգիայում իրականացվող փորձնական ծրագրի հիմքում ընկած է սերտ համագործակցությունը Երեխաների և ընտանեկան հարցերի կոորդինացման և ծրագրավորման նախարարության ու Ընտանեկան հարցերի, երեխաների խնամքի և սեռերի իրավահավասարության վարչության միջև: Գենդերային բյուջետավորման նախապայմանը դա լավ որակի գենդերային ապախոշորացված տվյալների առկայությունն է: Երեխաների և ընտանեկան հարցերի նախարարությունը ֆինանսավորում է Ազգային վիճակագրական գրասենյակի կոորդինացիոն խմբի աշխատանքը: Կոորդինացիոն խումբը նաև մեծ դեր ունեցավ 2006 թ. բյուջետային առաջարկում Գենդերային իրավահավասարության հավելվածի նախապատրաստման գործընթացում:

### *Լեհաստան*

Լեհաստանում կանանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները ակտիվորեն աշխատում են գենդերային բյուջեների իրականացման շուրջ: Կազմվել է գենդերային բյուջեների գծով աշխատող միջազգային կազմակերպությունների ցանցը և իրականացվել են հիմնական վերլուծական աշխատանքները: Հաջորդ քայլը դա տեղական մակարդակով ստեղծված «Գդանսկի գենդերային բյուջեի նախաձեռնություն» (NEWW) փորձնական ծրագիրն էր: Ծրագրի մեթոդաբանությունը մշակվել և հաստատվել էր միջազգային փորձի և այլ երկրներում գենդերային բյուջետավորման համեմատական ուսումնասիրության հիման վրա: Այդ գործընթացում կարևոր դեր խաղաց այլ երկրների կառույցների, օրինակ՝ Բեռլինի խորհրդատվական խմբի հետ համագործակցությունը, ինչպես նաև Գդանսկի քաղաքային ասամբլեայի հետ համագործակցությունը: Սկզբնական շրջանում վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվում էր տարբեր պետական և հասարակական հաստատություններից՝ չորս հիմնական ուղղություններով. ընտանեկան բռնություն, գործազրկություն և աշխատուժի շուկա, առողջապահություն, կրթություն: Նախնական հետազոտման արդյունքում ի հայտ եկավ ավելի խոր վերլուծության անհրաժեշտություն աշխատուժի շուկայում տեղական մակարդակով իրականացվող պետական ծախսերի գծով, հատուկ ուշադրություն դարձնելով գործազրկության վրա:

Հաջորդ փուլի ընթացքում մշակվեցին և տարածվեցին հարցաթերթիկներ, որոնց պատասխաններն ամփոփվեցին: Միևնույն ժամանակ կազմակերպվեց մի շարք հանդիպումներ ռազմավարական ծրագրավորման հարցում կարևոր դեր ունեցող Գդանսկ քաղաքի հաստատություններում: NEWW-ն նաև տվյալներ ստացավ տեղական հասարակական կազմակերպության կողմից Գդանսկի աշխատուժի շուկայում իրականացվող միջոցառումների վերաբերյալ: Արտատին օրինակների և կայացված որոշումների ուսումնասիրության հիման վրա, հրապարակվեց հաշվետվություն (գենդե-

րային բյուջեի հարցերով առաջին հրապարակումը Լեհաստանում), որը և լայնորեն տարածվեց (կազմակերպվեցին այդ հարցի շուրջ բազմաթիվ համաժողովներ, աշխատանքային սեմինարներ և դասախոսություններ Վարշավայում և Կրակովում): Հաշվետվության նյութերը ստացվել էին զանազան աղբյուրներից: Քանի որ վերջիններիս որակը նույնը չէր, դրանց հիման վրա իրականացվող վերլուծությունը նույնպես տարբեր աստիճանի մանրամասնեցված էր: Հիմնական ուշադրությունը դարձվում էր գենդերային դյուրըմբռնվածություն ունեցող գործողություններին: Այդ հաշվետվությունը նպաստեց Գդանսկ քաղաքի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ հետագա քննարկումների անցկացնելուն և նոր որոշումների առաջարկելուն: Առաջարկվում էր նաև որ նման վերլուծությունները գործիք հանդիսանան խտրականության դեմ պայքարում: Հաշվետվությունը հստակ ցույց տվեց, որ գենդերային բյուջետավորումը գերազանց գործիք կարող է հանդիսանալ ազգային և տեղական իշխանությունների համար: Շնորհիվ NEWW-ի գենդերային բյուջեի վերլուծությունը, ռազմավարությունները ու ծրագրերն ավելի թափանցիկ դարձան: Հաշվետվությունը նպաստեց համայնքներում այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի ամփոփմանը և հրապարակմանը: Շատ մոտ ապագայում NEWW-Polka-ն պատրաստվում է տեղական խորհրդատուների համար կազմակերպել դասընթացներ գենդերային բյուջետավորման շուրջ, որից հետո Լեհաստանի տարբեր քաղաքներ ներկայացնող 18 մասնագետներ ի վիճակի կլինեն տարածել անհրաժեշտ տեղեկատվությունը և աշխատել որպես խորհրդատուներ (լրացուցիչ տեղեկություն կարելի է գտնել www.neww.org կայքում):

### *Իսպանիա*

*Բասկիայի կառավարության կողմից իրականացված գենդերային բյուջեի ծրագիր*[22]

«Գենդերային բյուջե» նախաձեռնությունը ներկայացվել է Էմակունդե/Բասկիայի Կանանց ինստիտուտի կողմից (Իսպանիայի Բասկիայի նահանգի կառավարություն), որի նպատակն էր արմատավորել գենդերային հեռանկարը որպես գերակա ուղղություն բոլոր մակարդակների հանրային բյուջեներում, ինչպես դա ամրագրված է Բասկիայի կանանց «Գենդերային հեռանկարը պետական քաղաքականությունում» 3-րդ գործողությունների ծրագրի առաջին բաժնում «Բասկիայի քաղաքական հաստատությունների կողմից գենդերային դյուրըմբռնվածությամբ քաղաքականություններ իրականացնելու համար ներմատիվային դաշտի և գիտելիքային հզորությունների կառուցում»: 1999 թ. սկսած Մաունդերը մի շարք ծրագրեր նախաձեռնեց այդ ուղղությամբ.

[22] Բոլոր նյութերը` http://www.emakunde.es

Կարելի է ծանոթանալ «Խելամիտ թվային գրադարանի ստեղծում» նյութին ինտերնետից («Պետական գենդերային բյուջեներ») **(http://www.emakunde.es)**:

Բասկիայի կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի սեմինարը

Էմակունդեի կողմից կազմակերպված սեմինար (դր. Դիան Էլսոն):

2001 թ. որոշվեց անցում կատարել դեպի պրակտիկ ոլորտ և Բասկիայի նահանգային կառավարության կողմից իրականացվեց փորձնական ծրագիր: Էմակունդեի հովանավորությամբ կազմավորվեց աշխատանքային խումբ, որտեղ Ռոնա Ֆիցջերալդի նախաձեռնությամբ ներգրավվեցին մի շարք վարչություններ: Ստեղծվեց նաև տեխնիկական թիմ, որն օժանդակեց ծրագրի իրականացմանը շնորհիվ նրանում ընդգրկված մասնագետների փորձի և գիտելիքների:

2002 թ. Բասկիայի կառավարության 6 վարչությունների մասնակցությամբ իրականացվեց մեկ այլ փորձնական ծրագիր, որի ավարտական փուլում կազմակերպվեց ազգային և միջազգային փորձագետների մասնակցությամբ համաժողով:

***Բասկիայի կառավարության աշխատանքային խումբ***

| ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԸՆՏՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ |
|---|---|
| Կենտրոնական գրասենյակ | Արտակարգ իրավիճակների գծով քաղաքացիական ուսուցում |
| Արդյունաբերություն, առևտուր և զբոսաշրջիկություն | Տեխնոլոգիական կենտրոններ |
| Տրանսպորտ, պետական շինություններ և ենթակառույցներ | Տրանսպորտ |
| Առողջապահության համակարգ | Ֆինանսավորում և ինքնաօժանդակող խմբեր |
| Մշակույթ | Սպորտ |
| Հող և շրջակա միջավայր | Շրջակա միջավայրի հարցերով վերապատրաստում |

**Ոլորտային** հաշվետվություններ: «Գենդերային բյուջե նախաձեռնության»-ը մասնակցող տարբեր դեպարտամենտների կողմից ներկայացված հաշվետվություններ, սեմինար, դեկտեմբեր 2002 թ.:

**Ձեռնարկ.** Գենդերային դյուրըմբռնվածությամբ բյուջետավորում Բասկիայի նահանգի անկախ համայնքում:

### *Շվեդիա*

Շվեդիայում, ինչպես և Նորվեգիայում գոյություն ունի գենդերային ռազմավարության երկար տարիների ավանդույթ: 1994 թ. կառավարությունը, որպես ռազմավարական ուղղություն, որդեգրել է գենդերային քաղաքականությունը բյուջեում արմատավորման ռազմավարությունը, սեռերի իրավահավասարության գծով իր քաղաքական նպատակներին հասնելու համար: Այդ ռազմավարությունը կյանքի կոչելու համար կառավարությունը ձեռնամուխ է եղել մի շարք միջոցառումների իրականացմանը: 2001 թ. կառավարության կողմից ստեղծված աշխատանքային խումբը ներկայացրել է գենդերային իրավահավասարության ռազմավարության հզորացմանը միտված մի շարք առաջարկներ, որոնց իրականացման գծով հիմնական պատասխանատվությունը դրվել է կառավարության տարբեր կառույցների վրա: Այդ առաջարկների հիման վրա 2002 թ. կառավարությունը կազմավորել է բարձրաստիճան պաշտոնյաների կոորդինացիոն հանձնաժողով, որը պետք է ներգրավվեր կառավարության կառույցներում գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման գործընթացում՝ խթանման մեխանիզմների մշակման, վերապատրաստման դասընթացների կազմակերպման, մեթոդաբանության պատրաստման և նախարարություններում կոորդինացիոն աշխատանքների իրականացման միջոցով: Այդ աշխատանքին զուգահեռ, կոորդինացիոն հանձնաժողովի հետ համագործակցելու արդյունքում մշակվել և իրականացվել է «Հավասար չափաբաժին» անվանումը կրող գենդերային բյուջետավորման ծրագիրը, որը մեկնարկ է տվել գենդերային բյուջետավորման աշխատանքների իրականացմանը կառավարության կառույցների ներքո: Ծրագրի ներքո մշակվել է մեթոդաբանություն, ուսումնասիրվել են վերապատրաստման ուղղությունները և տեղեկատվություն է հավաքագրվել գենդերային իրավահավասարության ռազմավարությունը բյուջետային գործընթացում արմատավորելու համար: Ծրագիրն իրականացվել է Ֆինանսների նախարարության Գենդերային հավասարության բաժնի և Բյուջետային վարչության հետ համատեղ: Ծրագրի կարևոր մասն է կազմում փորձնական ենթաբաղադրիչը, որի ներքո մի շարք գործառնական բաժիններ իրականացրել են գենդերային վերլուծություն քաղաքականությունների երեք ոլորտներում (տարածաշրջանային զարգացում, սոցիալական ծառայություններ և տրանսպորտ): Այդ ծրագրի շնորհիվ հիմքեր են ստեղծվել գենդերային բյուջետավորման գործընթացի լայնածավալ իրականացման համար, նպաստելով գենդերային գործոնի տեսանելիության ապահովմանը պետական բյուջեի պատրաստման ողջ գործընթացում:

Ներկայումս գենդերային իրավահավասարության ռազմավարությունը բյուջետային քաղաքականությունում որպես գերակա ուղղություն ամրագրելու առաջադրանքի նախապատրաստական փուլն ավարտված է և այն դարձել է կառավարության կանոնավոր աշխատանքի անբաժանելի մասը, երկու որոշումների շնորհիվ: 2003 թ. հունիսին խորհրդարանին ներկայացրած գենդերային իրավահավասարության գծով աշխատանքային ծրագրում կառավարությունը պարտավորվել է իրականացնել գենդերային իրավահավասարության վերլուծություն քաղաքականությունների բոլոր ոլորտներում, նպատակ հետապնդելով սահմանել գենդերային իրավահավասարության քաղաքականության նպատակները և կատարողական ցուցանիշները, որը կարելի է համարել գենդերային բյուջետավորման գործընթացի առաջին փուլը: Այդ աշխատանքը մեկնարկեց 2004 թ. աշնանը և նրա արդյունքները խորհրդարանին կներկայացվեն 2006 թվականին: Արդյունքում հիմքեր կստեղծվեն կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների տարբեր խմբերի միջև բյուջետային քաղաքականության տարբեր ոլորտներում հատկացվող միջոցների բաշխման չափի և սկզբունքների տեսանելիության ապահովման համար: Այդ ամենը թույլ կտա գնահատել արդյունքները միջոցների վերաբաշխման և սեռերի իրավահավասարության ապահովման տեսանկյունից: Միևնույն ժամանակ կոորդինացիոն հանձնաժողովի աշխատանքի և «Հավասար փայաբաժին» ծրագրի իրականացման արդյունքում կառավարությունը 2004 թ. ապրիլին հաստատեց 2004-2009 թթ. կառավարության կառույցներում գենդերային իրավահավասարության ռազմավարության իրականացման ծրագիրը, հատուկ ուշադրություն դարձնելով բյուջետային գործընթացին: Կառավարությունը ծրագրի ընթացքին կանդրադառնա տարեկան կտրվածքով, իսկ յուրաքանչյուր երկու տարին մեկ կիրականացնի ծրագրի համապարփակ վերլուծություն:

Գենդերային իրավահավասարության ծրագրով կառավարության կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու, ինչպես նաև գենդերային վերլուծության և գենդերային իրավահավասարության նպատակները սահմանելու նպատակով ռազմա-

վարական օղակներում նշանակվեցին գենդերային իրավահավասարության հարցերով կոորդինատորներ և բոլոր նախարարություններում ստեղծվեցին գենդերային իրավահավասարության հարցերով կոորդինացիոն խմբեր: 2004-2005 թթ. ընթացքում նրանց հիմնական առաջադրանքն էր գենդերային վերլուծության գործընթացի կոորդինացումը և գենդերային հավասարության նպատակների սահմանումը իրենց նախարարությունների կողմից իրականացվող քաղաքականությունների ոլորտներում: Աշխատանքներին օժանդակելու համար գենդերային իրավահավասարության կոորդինատորները և Գենդերային իրավահավասարության վարչության անձնակազմը մասնակցում են պրոֆեսիոնալ զարգացման 12 ամիս տևողությամբ ծրագրում, որի նպատակն է զարգացնել մասնակիցների խորհրդատվական դերն այդ գործընթացում: Նախարարություններում վերլուծական աշխատանք իրականացնող աշխատակիցների համար նաև կազմակերպվում են հատուկ վերապատրաստական ծրագրեր և փորձագետների կողմից տրամադրվում է շարունակական օժանդակություն: Վերապատրաստումը հիմնականում անց է կացվում «GERAC Base» անվանումը կրող վերլուծական մեթոդի գծով, որը հատուկ մշակվել է այդ գործընթացի համար:

Վերջին տարիներին կառավարությունը նաև ավելի է ընդարձակել կանանց և տղամարդկանց միջև տնտեսական միջոցների բաշխման գծով պետական բյուջեի հավելվածը, որն առաջին անգամ ներկայացվել էր դեռևս 1988 թ., որպես պետական բյուջեի գենդերային հավասարության մասի հավելված: Սակայն մինչ 2003 թ., երբ և ենթարկվեց հետագա ընդլայնմանը, տնտեսական իրավիճակը վերլուծելու ու տղամարդկանց և կանանց տարբեր խմբերի վրա սոցիալական ապահովության համակարգի ազդեցության արդյունքները վերլուծելու նպատակով այն 2004 թ. պետական բյուջեի ֆինանսական գնահատականի տեսք ստացավ, այդ հավելվածը զգալի ուշադրության չեր արժանանում:

Ազգային մակարդակով իրականացվող ծրագրերից զատ գոյություն ունեն շրջանային և տեղական մակարդակով, օրինակ՝ Ստոկհոլմի շրջանային խորհրդի կամ Գուտենբերգ քաղաքի քաղաքապետարանի կողմից իրականացվող ծրագրեր:

### *Շվեյցարիա*

*Գենդերային բյուջեի ծրագիրը Բազել քաղաքում*[23]

1990 թթ. տեղի ունեցած ճգնաժամի ընթացքում Շվեյցարիայի գենդերային հավասարության պատվիրակների համաժողովը և Շվեյցարիայի պետական ծառայողների միությունը պատվիրեցին մի մասնավոր ընկերությանը մշակել հնարավորինս պարզ մեխանիզմ, որը թույլ կտա դիտարկել պետական ծախսերի կրճատման բացասաբար անդրադարձը սեռերի միջև հավասարության վրա:

Այդ վերլուծական գործիքի հիմնական տարրերն էին. երկարաժամկետ հատվածում փոփոխությունների ուսումնասիրությունը, աճի և տնտեսման շրջանների միջև համեմատությունը, կանանց և տղամարդկանց համար առանձնահատուկ կարևոր հարցերում միջին ծախսերի փոփոխության հետևանքով առաջացող տարբերությունները: Այդ մեթոդի մեկ այլ առանձնահատկություն կայանում էր նրանում, որ համեմատությունները կատարվում էին ոչ թե դրամական արտահայտությամբ, այլ միջին աճից շեղումների տեսքով:

Այս գործիքի օգնությամբ դիտարկվում են ազդեցությունները պետական հատվածում զբաղվածության, պետական ծախսերից շահառուների, հատկապես կանանց կողմից կատարվող չվարձատրվող աշխատանքի նկատմամբ:

Ուսումնասիրությունների արդյունքները ներառված են 1996 թ. հրապարակված աշխատանքում „An den Frauen sparen?“ (Խնայել կանանց հաշվին): Հասարակության կապերի զարգացման գծով Կանանց խորհրդի և մի շարք քաղաքական գործիչների կողմից տարված աշխատանքի շնորհիվ Բազել քաղաքի խորհրդարանը հանձնարարեց Բազել քաղաքի համար տարբեր վիճակագրական նյութերի մշակումը: Այդ հանձնարարականով նախատեսվեց խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավել Հավասար իրավունքների պետական գրասենյակը և Վիճակագրության գրասենյակը: Համատեղ աշխատանքի շնորհիվ լույս տեսավ չափազանց մանրակրկիտ վերլուծական հաշվետվություն: Վերլուծության արդյունքների շնորհիվ ծախսերի 90 տոկոսից ավելին կարելի էր հարաբերել սեռերից որևէ մեկին: Ուսումնասիրությունը հրապարակվեց “Der kleine Unterschied in den Staatsfinanzen” անվանման տակ (Փոքր տարբերություն պետական ֆինանսներում):

2005 թ. հուլիսին կառավարությունը որոշում կայացրեց տարեկան կտրվածքով իրականացնել պետական բյուջեի ծախսերի գենդերային բաշխվածության վերլուծություն: Համաձայն այդ որոշման վիճակագրական տվյալները պետք է նույնպես թարմացվեն չորս տարին մեկ: Այդ ժամանակահատվածում արձանագրված արդյունքները և փոփոխությունները պետք է պարբերաբար հրապարակվեն բյուջեին կից: Դրանից բացի հատուկ ցուցանիշների և ելակետային տվյալների հիման վրա անկախ մասնագետների կողմից իրականացվելու է կրթության ոլորտում կողմնակալության դրսևորումների մանրամասն վերլուծություն:

[23] Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ www.frauenrat-bs.ch/gender-budget/

### *Թուրքիա*

*Գենդերային բուջետավորման փորձը Թուրքիայում*

Գենդերային բյուջետավորումը Թուրքիայի համար նորույթ է և այն ունի չափազանց սահմանափակ կիրառում: Երկրի պետական հաստատությունները և հասարակական կազմակերպությունները այնքան էլ լավատեղյակ չեն այդ գաղափարի և մոտեցման մասին և մինչ վերջերս գոյություն ունեցող օբյեկտիվ պայմանները չէին նպաստում դրա իրականացմանը: Գենդերային իրավահավասարության հարցերով ազգային կառույցների հիմնադրման և բյուջետային գործընթացի վերակառուցման հարցերում հնարավորությունների հզորացման ուղղությամբ արձանագրված որոշ դրական միտումների շնորհիվ ներկայումս լավ հնարավորություն է առաջացել գենդերային բյուջետավորման գործընթացի իրականացման համար:

Թուրքիայում գենդերային բյուջետավորման գծով միակ հայտնի օրինակը դա դպրոցներում երեխաների ընդգրկվածության բարձրացման նպատակով իրականացվող նպատակային դրամական փոխանցումներն են: Քանի որ տարրական և միջնակարգ կրթական հաստատություններում աղջիկների ընդգրկվածության մակարդակն ավելի ցածր է քան տղաների, աղջիկները չեն կարող նույն չափով օգտվել Կրթության նախարրության կողմից մատուցվող ծառայություններից և կատարվող ծախսերից: Գենդերային բյուջետավորման ծրագրով նախատեսվում է սեռերի իրավահավասարությանը միտված եկամուտների և ծախսերի վերակառուցում և այդ նպատակին հասնելու համար համաշխարհային բանկի կողմից Կրթության նախարարության հետ միասին մշակվել է հատուկ ծրագիր: Համերաշխության և սոցիալական օժանդակության գլխավոր տնօրինության կողմից 2002-2006 թթ. ազգային մակարդակով իրականացված 500 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ ռազմավարական ծրագրի նպատակն էր նվազեցնել սոցիալական ռիսկերը: Այդ ծրագրի բաղադրիչներից մեկը երեխաներին տարրական և միջնակարգ դպրոցներ ուղարկելու նպատակով կարիքավոր ընտանիքներին տրամադրվող նպատակային դրամական նպաստի տրամադրումն էր: Ծրագիրը կազմելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ֆինանսական դժվարությունների առջև կանգնող ընտանիքների առաջին քայլը դա երեխաներին դպրոցից հանելն է ու աշխատանքի ուղարկելը: Նման ընտանիքներին Կրթության նախարարությունը հատկացնում է որոշակի գումար, այն պայմանով, որ նրանք երեխաներին դպրոց ուղարկեն: Մինչդեռ այդ գումարի չափը համեմատաբար փոքր է, աղջիկների համար այն ավելի մեծ է քան տղաների` 22.2%-ով տարրական և 39.2%-ով միջնակարգ դպրոց ուղարկելու դեպքում: Ծրագրի սկզբից մինչև 2005 թ. աղջիկների շրջանում շահառուների թիվը կազմեց 535.917, իսկ տղաների 632.863 մարդ: Թեպետ շահառու աղջիկների քանակն ավելի ցածր էր քան տղաների, նրանց գծով մինչ այժմ վճարված գումարը գերազանցում է տղաների համար վճարվածը: Այդ համակարգի ներքո վճարումը կատարվում է երեխաների մայրերին, որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական բանկային հաշիվ և անձամբ է ստանում գումարը: Վճարման նման համակարգը չափազանց կարևոր է ընտանիքներում կանանց դերը բարձրացնելու համար:

Ծրագրի դրական արդյունքներն ակնհայտորեն դրսևորվել են դպրոցներում երեխաների, հատկապես աղջիկների ընդգրկվածության բարձրացման և նրանց ուսման ցուցանիշների բարելավման առումով«: Ծրագրի իրականացման շնորհիվ 2003-2004 թթ. 8-րդ դասարանն ավարտելուց հետո միջնակարգ դպրոց են հաճախում նպաստ ստացող ընտանիքներից աղջիկների 75.4%-ը, մինչեռ ամբողջ Թուրքիայի ընտանիքներում այդ թիվը միջինում կազմում է 38.7%: Նույն ցուցանիշները տղաների դեպքում համապատասխանաբար կազմում են 74% և 47 %: Այդ վիճակագրական տվյալներն ապացուցում են գենդերային բյուջետավորման ծրագրի դրական արդյունքի մասին:

### *Մեծ Բրիտանիայի Միավորյալ Թագավորություն*

*Գենդերային ազդեցության վերլուծությունը և Շոտլանդիայի բյուջեն*

Շոտլանդիայի գործադիր մարմինը մշակել է գենդերային ռազմավարությունը բյուջետային գերակա ուղղություն դարձնելու միջոցով իրավահավասարության հասնելուն ուղղված իր ծրագիրը: 2004 թ. նոյեմբերին հրապարակված «Իրավահավասարության ռազմավարություն»-ը սահմանում է այդ քաղաքականության հիմքը կազմող մի շարք միջոցառումներ, այդ թվում` սեռերի իրավահավասարության վրա բյուջեների և ծախսային ծրագրերի ազդեցության գնահատման համար մեխանիզմների մշակումը:

Բյուջեի գենդերային վերլուծության համար գործիքների մշակման աշխատանքում առաջընթաց է արձանագրվում շնորհիվ Առողջապահության դեպարտամենտի և Մշակույթի, զբոսաշրջիկության և սպորտի նախարարության Սպորտի բաժնի հետ համատեղ իրականացվող փորձնական ծրագրի: Ելնելով Շոտլանդիայի առողջապահության ոլորտում իրավական անավասարության բնույթից և պետական քաղաքականության ներքո առողջապահության դերի կարևորությունից, այս աշխատանքը հնարավորություն է ընձեռում պայքարն անհավասարության դեմ սկսել որևէ մի ` տվյալ դեպքում առողջապաության ոլորտից և դրա հիման վրա իրականացնել քաղաքականության և միջոցների

հատկացման վրա գենդերային ազդեցության վերլուծությունը:

Փորձնական ծրագիրը մեկնարկեց 2005 թ. հունվար ամսին, ուշադրությունը կենտրոնացնելով սպորտի և առողջապահության ոլորտներում իրականացվող բյուջետային ծրագրերում գենդերային անհամաչափությունների հայտնաբերմանը և դրանց միջև գոյություն ունեցող զուգորդման միտումների տրամաբանության վերլուծությանը: Դիտարկվեցին ծխելու դեմ պայքարի և դպրոցներում ֆիզկուլտուրայի դասավանդման ծրագրերը: Նպատակն էր հետապնդվում փորձնական ծրագրի արդյունքներն առավել արդյունավետ օգտագործելու համար այն ուղղորդել երիտասարդների առողջապահության ոլորտում առկա գենդերային անհամաչափությունների հայտնաբերմանը:

Աշխատանքն այնպես էր կազմակերպված, որ հնարավոր լիներ քաղաքականության և միջոցների հատկացման գործընթացների միջև առկա փոխադարձ կապերից քաղել համապատասխան դասեր և դրանց հիման վրա տրամադրել պրակտիկ առաջարկ թե կիրառվելիք մոտեցումների վերաբերյալ: Շոտլանդիայի գործադիր իշխանությունների կողմից գենդերային բյուջետավորման վերլուծությունն անցկացնելիս նախատեսվում էր.

- Գրականության ուսումնասիրություն՝ տարբեր քաղաքականությունների ոլորտներում գենդերային տարբերությունների փաստերն ի հայտ բերելու նպատակով:
- Նշված երկու ուղղությունների քաղաքականությունների սահմանման և միջոցների հատկացման գործընթացների քարտեզագրում, կառավարության և ծրագրերի իրականացման համար պատասխանատու մարմիններում այդ հարցերով զբաղվող պաշտոնյաների հետ հանդիպումների արդյունքում:
- Փորձնական ծրագրի և միջազգային փորձի հիման վրա պաշտոնական օգտագործման ուղեցույցերի կազմում:
- Փորձնական ծրագրերի ընթացքի մասին հաշվետվությունների կազմում, որոնցում կներկայացվեն ուսումնասիրված գրականությունը, արդյունքների վերլուծությունը և գենդերային վերլուծության գծով հետագա աշխատանքների վերաբերյալ առաջարկները:
- 2005 թ. բյուջեի նախագծում փորձնական ծրագրի գծով ներկայացվելիք տվյալների ամփոփագիր:
- Ծրագրի հաջորդ փուլում Շոտլանդիայի գործադիր մարմնի կողմից իրականացվող աշխատանքային ծրագիր:

Այդ նախաձեռնության իրականացման համար պատասխանատու են Իրավահավասարության խումբը և Շոտլանդիայի կառավարության Ֆինանսների դեպարտամենտը: Իրավահավասարության խմբի կողմից ծրագրում վեց ամիս ժամկետով ներգրավվեց քաղաքականության և միջոցների տրամադրման քարտեզագրումն իրականացնող և առողջապահության ոլորտի զարգացումները դիտարկող մի փորձագետ: Սպորտային գրականության ուսումնասիրությունը և դպրոցներում ֆիզկուլտուրայի դասավանդման հետ կապված խնդիրների դիտարկումը կատարվեց Գլազգոյի Կալեդոնյան համալսարանի մասնագիտական խմբի կողմից: Բացի այդ ծրագրում ներգրավվել էին գենդերային բյուջեի վերլուծության ոլորտում մեծ փորձ ունեցող երկու խորհրդատուներ: Փորձնական ծրագիրը նպատակ էր հետապնդում ի հայտ բերել 2000 թ. Իրավահավասարության ռազմավարության ներքո ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հիմնական մեխանիզմները և տեղեկացնել Շոտլանդիայի բյուջեում գենդերային վերլուծության և իրավահավասարության ապահովման գծով հետագա աշխատանքների մասին: Ուստի գլխավոր նպատակը կայանում էր քաղաքական նպատակների, միջամտություն պահանջող առաջնահերթ ոլորտների և միջոցների միջև փոխադարձ կապերի հաստատման մեջ:

Իրավահավասարության հարցերում բյուջեի և նրա ծախսային մասի ազդեցության գնահատումն անցկացնելիս կառավարությունը նախնական փուլում որոշեց ուշադրությունը սևեռել գենդերային գործոնի վրա, հաշվի առնելով այդ հարցի շուրջ շատ երկրներում կուտակված զգալի փորձը, որը կարելի էր արդյունավետ յուրացնել: Բացի այդ գենդերային իրավահավասարության վերաբերյալ տվյալները շատ ավելի հասանելի էին, քան անհավասարությունների դրսևորման որևէ այլ գծով: Գենդերային վերլուծությունը կարող է նաև կիրառվել, որպես ավելի լայն հավասարությունների շրջանակում տարբեր խմբերի նկատմամբ խտրականությունների դրսևորման դեպքերի հայտնաբերման խոշորացույց:

Հյուսիսային երկրների նախարարների խորհուրդ:

Հյուսիսային երկրների նախարարների խորհուրդը 2004-2006 թթ. ընթացքում իրականացնում է Հյուսիսային երկրների համագործակցության ծրագիրը, որը միտված է այդ երկրների կողմից իրականացվող ֆինանսական քաղաքականությունում գենդերային իրավահասավասարության խնդրի հետագա արմատավորմանը: Հյուսիսային երկրներում իրականացվում են մի շարք ուսումնասիրություններ, որտեղ գենդերային իրավահավասարության հիմնախնդիրը դիտարկվում է տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունների տեսանկյունից.

- Բյուջետային հատկացում- ներ. տնտեսական միջոցնե- րի բաշխումը կանանց և տղամարդկանց միջև
- Հյուսիսային եղջերաբանու- թյան արդյունաբերությու- նում միջոցների բաշխման ուսումնասիրություն
- Առողջապահության ոլոր- տում գենդերային հեռանկա- րի ուսումնասիրություն
- Գյուղատնտեսության ոլոր- տում միջոցների բաշխման գծով ուսումնասիրություն
- Քաղաքային բյուջեների ու- սումնասիրություն
- Մշակույթի և երիտասարդու- թյան ժամանցի կազմա- կերպման ոլորտներում հատ- կացվող ֆինանսավորման ուսումնասիրություն
- Աղջիկների և տղաների հա- վասար հնարավորություն- ների ծրագրի ուսումնասի- րություն
- Աշխատանքային առողջա- պահության և աշխատան- քային անվտանգության մա- սին օրենքների գենդերային վերլուծություն:

Ծրագրի և հետազոտություն- ների վերաբերյալ լրացուցիչ տե- ղեկատվություն կարելի է ստա- նալ հետևյալ էլեկտրոնային կայ- քում. www.norden.org/gender

# ՀԱՎԵԼՎԱԾ I

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ (EG-S-GB)

***ԱԼԲԱՆԻԱ***

- *Տիկին Լավդի ՌՈՒՉԻ*
  Գլխավոր քարտուղար
  Մշակույթի, երիտասարդու-թյան հարցերի և սպորտի նախարարություն

***ԱՎՍՏՐԻԱ***

- *Տիկին Գաբրիելե ՄԻԽԱԼԻՉ*
  EG-S-GB Խմբի նախագահ
  Պրոֆեսոր
  Էկոնոմիկայի դեպարտա-մենտ III
  Էկոնոմիկայի և առևտրա-արդյունաբերական գործու-նեության կառավարման Վիեննայի համասլարան

***ԲԵԼԳԻԱ***

- *Տիկին Նափալի ՀՅՈԼՎԵՏ*
  Վերլուծաբան
  Զարգացման քաղաքակա-նության և կառավարման ինստիտուտ (IDPM)
  Անտվերպենի համալսա-րան

***ՖՐԱՆՍԻԱ***

- *Պարոն Հավիեր ՖՐՈՄԱՆ*
  Ծառայության ղեկավարի օգնական
  Կանանց իրավունքների և իրավահավասարության ծառայություն
  Իրավահավասարության և պրոֆեսիոնալ հավասարու-թյան նախարարություն

***ՆՈՐՎԵԳԻԱ***

- ***Տիկին Աննե ՀԱՎՆՈՐ***
  EG-S-GB Խմբի փոխնա-խագահ
  Խորհրդատու
  Երեխաների և ընտանեկան հարցերի նախարարություն

***ՇՎԵԴԻԱ***

- *Տիկին Աննա-Մարիա ՍԱՆԿՎԻՍՏ*
  Գենդերային բյուջեի հար-ցերով փորձագետ
  Արդյունաբերության, զբաղ-վածության և կապի նախա-րարություն
  Գենդերային իրավահավա-սարության բաժին

# ՀԱՎԵԼՎԱԾ II

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (EG-S-GB)

**1. Հանձնաժողովի անվանումը**

Գենդերային բյուջետավորման հարցերով մասնագետների խումբ (EG-S-GB)

**2. Հանձնաժողովի տեսակը**

Փորձագետների հանձնաժողով

**3. Տեխնիկական առաջադրանքի աղբյուրը**

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEG)

**4. Տեխնիկական առաջադրանքը**

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEG) կողմից մասնագիտական խմբին հրահանգ է տրվել մշակելու ուղեցույցեր անդամ երկրների համար գենդերային բյուջետավորման իրականացման կամ պլանավորման համար:

Ուղեցույցերը մշակելիս խումբը պետք է հաշվի առնի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեի, Եվրամիության, Հյուսիսային երկրների նախարարների խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից այդ ոլորտում արդեն իսկ իրականացրած աշխատանքը:

**5. Կազմը**

ա. Խմբում ընդգրկված են հետևյալ անդամ երկիրները ներկայացնող 6 մասնագետներ. Ալբանիա, Ավստրիա, Բելգիա, Ֆրանսիա, Նորվեգիա, Շվեդիա:

բ. Եվրոպայի խորհուրդը փոխհատուցում է նշված երկրների մեկական ներկայացուցչի ճանապարհորդային և կենսապահովման ծախսերը: Մյուս անդամ երկրները կարող են իրենց հաշվին ներկայացուցիչներ պատվիրակել այդ խմբի հանդիպումներին մասնակցելու համար:

գ. Մասնագիտական խմբի մասնակիցների ցանկալի որակավորումը. գենդերային իրավահավասարության ռազմավարության, ընդ որում նախընտրելի է գենդերային բյուջետավորման գծով փորձագետներ և վերլուծաբաններ:

դ. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը և Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների գագաթաժողովը կարող են պատվիրակել մեկական ներկայացուցիչ խմբի հանդիպումներին մասնակցելու համար, առանց քվեարկելու իրավունքի, սակայն ծախսերի փոխհատուցմամբ Կանոնադրական բյուջեում իրենց համապատասխան ձայների հաշվին:

ե. Եվրոպական հանձնաժողովի Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների հարցերով խորհրդատվական հանձնաժողովը և Եվրախորհրդարանի Կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների հանձնաժողովը կարող են ներկայացուցիչներ պատվիրակել խմբի հանդիպումներին մասնակցելու համար, առանց քվեարկելու կամ ծախսերի փոխհատուցման իրավունքի:

**6. Աշխատանքային մեթոդներ**

Տեխնիկական առաջադրանքի շրջանակներում խումբը հնարավորություն ունի կապեր հաստատել կամ խորհրդատվություններ անցկացնել ցանկացած շահագրգիռ մասնագետների և այլ անձանց հետ, որոնք անհրաժեշտ է համարում տեխնիկական առաջադրանքը կատարելու համար, մասնավորապես լսումների կամ գրավոր խորհրդատվությունների տեսքով:

**7. Տեխնիկական առաջադրանքի տևողությունը**

Տեխնիկական առաջադրանքն ավարտվում է 2004 թ. դեկտեմբերի 31-ին:

# ՀԱՎԵԼՎԱԾ III

## CDEG-Ի ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻՆ ՀՂՎԱԾ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԸ

1. Ինչ՞ քայլեր են իրականացվել Ձեր երկրում գենդերային բյուջետավորման ռազմավարությունը բյուջետային գործընթացում արմատավորելու ուղղությամբ (տեղական, տարածքային և/կամ ազգային մակարդակով):

2. Որո՞նք են գենդերային բյուջեի գործընթացի լծակները:

3. Քաղաքականության ո՞ր ոլորտներն են ներառված:

| | |
|---|---|
| | Կրթություն |
| | Աշխատուժի շուկա |
| | Տարածքային զարգացում |
| | Տրանսպորտ |
| | Առողջապահություն |
| | Այլ… (խնդրում ենք նշել) |

4. Ովքե՞ր են գործընթացի մասնակիցները և ո՞րն է նրանց դերը:

| | Դերը | Նախաձեռնություն | Հաստատում | Քարոզչութ. լոբբինգ | Իրականացում | Կոորդինացում | Գնահատում | Տեխնիկ. օժանդակում, ուսուցում | Ֆինանսակ. օժանդակում | Այլ (նշել) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մասնակիցներ | | | | | | | | | | |
| Միջազգային կազմակերպություն | | | | | | | | | | |
| Ֆինանսների նախարարություն և բյուջեի գծով պատասխանատու այլ նախարարություն (նշել) | | | | | | | | | | |
| Խորհրդարան | | | | | | | | | | |
| Հավասարության հարցերով զբաղող պետական մարմիններ | | | | | | | | | | |
| Հանրություն (հասարակական կազմակերպություններ, արհմիություններ, ընկերակցություններ և այլն) | | | | | | | | | | |
| Անկախ փորձագետներ | | | | | | | | | | |
| Տեղական/տարածքային իշխանություններ | | | | | | | | | | |
| Այլ… (նշել) | | | | | | | | | | |

5.Ինչպե՞ս է կազմակերպված մարդկային և ֆինանսական միջոցների հատկացումը:

6. Որքանո՞վ են հասանելի գենդերային բյուջեի ծրագրին վերաբերող ապախոշորացված վիճակագրական տվյալները: Ո՞վ է դրանք տրամադրում:

| | |
|---|---|
| | Կենտրոնական վիճակագրական ծառայությունը |
| | Տեղական մարմինները |
| | Մասնավոր հաստատությունները. |
| | Հետազոտական ինստիտուտները |
| | Այլ… (նշել) |

7. Արդյո՞ք անց է կացվել գենդերային բյուջետավորման գծով գործնական կիրառության որևէ ուսումնասիրություն: Եթե այո, խնդրում ենք տրամադրել համապատասխան տեղեկատվությունը:

8. Արդյո՞ք գենդերային բյուջետավորումը որպես բյուջետային գործընթացի առաջնահերթ ուղղություն իրականացնելիս հանդիպել եք որևէ արգելքների:

9. Որո՞նք են տեղական/տարածքային/ազգային մակարդակով իրականացվող գենդերային բյուջետավորման ծրագրերի կոնկրետ օրինակները: Օրինկաները ներկայացնելիս խնդրում ենք լրացնել կից ներկայացվող ձևը:

# ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

| |
|---|
| Բյուջետային գործընթացի հակիրճ նկարագրություն: |
| |
| Գենդերային բյուջետավորման գործընթացի հակիրճ նկարագրություն: |
| |
| Ո՞վ է նախաձեռնել ծրագրի իրականացումը: |
| |
| Ո՞վ է պատասխանատու ծրագրի իրականացման համար: |
| |
| Ե՞րբ է մեկնարկել ծրագիրը: Ո՞րն է ծրագրի մոտավոր տևողությունը: |
| |
| Ո՞րն է ծրագրի նպատակը (հակիրճ նկարագրել ծրագրի բովանդակությունը):<br>Որո՞նք են ծրագրից բխող արդյունքները: |
| |
| Քաղաքականության ո՞ր ոլորտներն են ներառված<br>(աշխատուժի շուկա, կրթություն, առողջապահություն, տրանսպորտային քաղաքականություն և այլն): |
| |
| Ի՞նչ մակարդակով է իրականացվում ծրագիրը<br>(ազգային, տարածքային, տեղական): |
| |
| Ի՞նչ մեթոդներ և գործիքներ են կիրառվում ծրագիրը կյանքի կոչելու համար:<br>Արդյո՞ք կարիք կա մշակելու նոր գործիքներ: |
| |
| Ովքե՞ր են ներգրավված ծրագրի իրականացման գործընթացում<br>(նախարարություն, խորհրդարան, հասարակական կազմակերպություններ, այլ): |
| |
| Արդյո՞ք նրանք մասնակցել են հատուկ վերապատրաստման դասընթացների:<br>Ինչպիսի՞ լրացուցիչ ուսուցման կարիք կա: |
| |
| Որո՞նք են ծրագրի իրականացման գծով մինչ այժմ արձանագրված արդյունքները: |
| |

| |
|---|
| Ինչպիսի՞ խնդիրներ են առաջացել ծրագրի իրականացման ընթացքում: Ինչպե՞ս են դրանք հաղթահարվել: |
| |
| Ովքե՞ր են պատասխանատու ծրագրի մոնիտորինգի համար: Ի՞նչ մեթոդներ են կիրառվում մոնիտորինգի համար: |
| |
| Խնդրում ենք տեղեկացնել ծրագրի վերաբերյալ առկա այլ նյութերի մասին (հոդվածներ, հաշվետվություններ, այլ (եթե հնարավոր է անգլերենով կամ ֆրանսերենով): |
| |
| Ու՞մ կարելի է դիմել ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: |
| |

# ՀԱՎԵԼՎԱԾ IV

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

**BAKKER, Isabella** (1994, ed.): The Strategic Silence. Gender and Economic Policy. London.

**BAKKER, Isabella, ELSON, Diane** (1998): Towards Engendering Budgets. In: Canadian Centre for Policy Alternatives 1998, p. 297-324.

**BAKKER, Isabella, ELSON, Diane** (1998): FՖr ein Budget, das mit Frauen rechnet. AnsՊtze zu einer makroՓkonomischen Analyse von Staatsbudgets aus Frauensicht. In: Olympe. Feministische Arbeitshefte zur Politik 9, p. 50-61.

**BEIGEWUM** (Beirat fՖr gesellschafts-, wirtschafts- und umweltpolitische Alternativen) (2002): Frauen macht Budgets. Staatsfinanzen aus Geschlechterperspektive. Wien.

**BELLAMY, Kate** (2002): Gender Budgeting. A Background Paper for the Council of Europe's Informal Group of Experts on Gender Budgeting. CDEG-GB (2002) 4.

**BMF** (Bundesministerium fՖr Finanzen) (2002): Is the Austrian tax system really "գender-neutral"? Results of a wage- and income-tax comparison between men and women. Wien. (http://www.bmf.gv.at).

**BUDLENDER, Debbie, ELSON, Diane, HEWITT, Guy, MUKHOPADHYAY, Tanni** (2002): Gender Budgets Make Cents. Understanding Gender Responsive Budgets, Commonwealth Secretariat/London.

**BUDLENDER, Debbie, HEWITT, Guy** (2002): Gender Budgets Make More Cents. Country Studies and Good Practice, Commonwealth Secretariat/London.

**BUDLENDER, Debbie, SHARP, Rhonda, ALLEN, Kerri** (1998): How to do a Gender-sensitive budget analysis: contemporary research and practice. Canberra/London.

**ÇAGLAR, Gülay** (2002): Engendering der Makroökonomie: Chancen und Grenzen feministischer AnsՊtze. In: femina politica, 1/2002, p. 48-57.

**CECCHINI, Isabel, CORNET, Annie et HOLVOET, Nathalie** (2003): Projet 'գենդերային budgeting' (dans le cadre du projet global 'gender mainstreaming'. Rapport de synthՌse/ Gender gevoelig budgetteren. Syntheserapport van het project 'gender budgeting' in het kader van het globaal project 'gender mainstreaming' opgericht door het federale beleidsniveau. Brussel, Institut pour l'ռgalitռ des femmes et des hommes/Instituut voor de Gelijkheid van Mannen en Vrouwen..

**CECCHINI, Isabel CORNET, Annie A et HOLVOET, Nathalie** (2003): Analyse budgռtaire en terme de genre et d'ռgalitռ hommes/femmes: rռduire les inռgalitռs et amռliorer ses performances: un dռfi pour les services publics/ Gendergevoelig budgetteren: Ongelijkheid verminderen en efficiuntie verhogen: een uitdaging voor openbare instellingen. Brussel, Institut pour l'ռgalitռ des femmes et des hommes.

**ELSON, Diane** (1997): TOS for Gender Intռgration insu Macroռconomique Policy. In: Link in to Gender and Development 2/Summer 1997, p. 13.

**ELSON, Diane** (1999): Commonwealth Gender Responsive Budget Initiative: Background Papers. London/Commonwealth Secretariat.

**European Parliament** (2003) public hearing on "Gender budgeting – the gender perspective in the public budgets". Report on "Gender budgeting – building public budgets from a gender perspective" by Ms Fiorella GHILARDOTTI, member of the Committee on Women's Rights and Equal Opportunities. 2002/2198 (INI).

**GUBITZER, Luise, TRUKESCHITZ, Birgit** (eds.2004): Frauen und Budgets, Frankfurt/Berlin/Bern.

**HIMMELWEIT, Susan** (2002): Making visible the hidden economy: the case for gender impact analysis of economic policy. In: Feminist Economics, Vol. 1/8, p. 49-70.

**HIMMELWEIT, Susan** (2001): Tools for Budget Impact Analysis: Taxes and Benefits, UNIFEM-OECD-Nordic Council Conference on Gender Responsive Budgeting, Brussels, October 2001.

**HOFBAUER BALMORI, Helena** (2003): Gender and Budgets. Overview Report, Brighton (http://www.ids.ac.uk/bridge/).

**HUNT, Karen, BUDLENDER, Debbie** (1998, eds.): Money matters – Women and the Government Budget. Capetown.

**MANSKE, Alexandra, YOUNG, Brigitte** (2002): Engendering der MakroՓkonomie: Eine Einleitung, „What is Feminist Economics all about?“. In: femina politica, 1/2002, p. 9-12.

**MICHALITSCH, Gabriele** (2001): BudgetՊre Imperative patriarchaler Restrukturierung. Նber geschlechter-politische Defizite. In: WIWIPOL (ed.): Wirtschafts- und sozialpolitische Alternativen zum Regierungsprogramm. Wien, p. 47-62.

**MICHALITSCH, Gabriele** (2003): Wer, wie viel, fՖr was? Gender Budgeting und Փffentliche Finanzen. In: DACKWEILER, Regina Maria/HORNUNG, Ursula (eds.): Frauen-Macht-Geld. MՖnster, p. 228-244.

**MICHALITSCH, Gabriele** (2005): L'ռtat c'est lui. Budget-EntwՖrfe feministischer Theorie. In: GUB-ITZER, Luise/TRUKESCHITZ, Birgit (eds.): Frauen und Budgets. Frankfurt/Berlin/Bern.

**RAKE, Katherine** (2002): Gender Budgets. The Experience of the UK's Women's Budget Group. In: Frauen-rat Basel-Stadt/GleichstellungsbՖro Basel-Stadt (ed.): Gender Balance – Equal Finance. Basel, p. 14-20.

**REEVES, Hazel, SEVER, Charlie** (2003): Gender and Budgets. Supporting Resources Collection, Brighton Brighton (http://www.ids.ac.uk/bridge/).

**SARRAF, Feridoun** (2003): Gender -Responsive Government Budgeting. IMF Working Paper.

**SEN, Gita** (2000): Gender Mainstreaming in Finance Ministries. In: World Development 28/7.

**SEN, Gita** (2002): Engendering von Finanzministerien. In: femina politica 1/2002, p. 58-70.

**SHARP, Rhonda** (2003): Budgeting for equity. Gender budget initiatives within a framework of performance oriented budgeting. UNIFEM/New York.

**SHARP, Rhonda, BROOMHILL, Ray** (2002): Budgeting for Equality: The Australian Experience. In: Feminist Economics Vol. 1/8, p. 25-4.?

**UNIFEM** (2002): Gender Budget Initiatives: Strategies, Concepts and Experiences. UNIFEM/New York.

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

| | |
|---|---|
| ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ | www.unifem.org/www/genderbudgets/work/html |
| ՄԱԿ-ի զարգացման ծրագիր | www.undp.org/gender |
| Համաշխարհային բանկ | www.worldbank.org/wbi/publicfinance/gender/htm |
| Արժույթի միջազգային հիմնադրամ | www.imf.org |
| ՏՀԶԿ | www.olis.oecd.org/olis/2002doc.nsf |
| Համագործակցության երկրների քարտուղարություն | www.thecommonwealth.org/ gender |
| Ասիական զարգացման բանկ | www.unisa.edu.au/pacificproject/ |
| Կանադայի Միջազգային զարգացման գծով հետազոտությունների կենտրոն | www.idrc.ca/gender |
| Գենդերային հարցերին անդրադարձող բյուջետային ծրագրեր | www. gender-budgets.org |
| Հյուսիսային երկրների նախարարների խորհուրդ | www.norden.org/gender |

# ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

| | |
|---|---|
| **Ավստրիա** | http://www.bmf.gv.at |
| **Գերմանիա** | http://www.gender-budgets.de |
| **Լեհաստան** | http://www.neww.org |
| **Իսպանիա** | http://www.emakunde.es |
| **Շվեյցարիա** | http://www.frauenrat-bs.ch/ gender-budget/ |